



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

**ՀԱՅ-ՎՐԱՅ ԳՐԱԿԱՆ,  
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՅԵՐԸ  
ՎՐԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ (1988-1990)**

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Պրակ առաջին

*Կազմեց, առաջաբանը գրեց  
և վրացերենից թարգմանեց  
Հրաչյա ԲԱՅՐԱՄՅԱՆԸ*



ԵՐԵՎԱՆ 2001

**Գիրքը հրատարակվում է  
Սովորաբար Մկրտչյանի հովանավորությամբ**

ՀՏԴ 941(479.25)+941(479.22)  
ԳՄԴ 63.3(27)+63.3(24)  
Հ 240

Հրատարակության է ներկայացրել  
Երևանի պետական համալսարանի հայագիտական կենտրոնը

Խմբագիր՝ Բանաս. գիտ. դոկտոր,  
պրոֆ. Արշակ Գ. Մադոյան

Հ 240 ՀԱՅ-ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ ՎՐԱՑ ՄԱՍՈՒՆՈՒՄ  
(1988–1990): Նյութերի ժողովածու: Պրակ առաջին: Կազմեց, առաջաբանը  
գրեց և վրացերենից թարգմանեց Հրայր Բայրամյանը/— Եր.:  
«Ձանգակ-97» հրատ., 2001.— 160 էջ:

Այս ռեֆերատիվ թողարկումը հնարավորություն կընձեռնի վրաց լեզուն չիմացող մեր  
գիտնականներին և համապատասխան բնագավառների մասնագետներին՝ ծանոթա-  
նալու հոդվածների բովանդակությանը և իրենց խոսքն ասելու դրանց մասին, բանգի  
շոշափվում են ո՛չ միայն հայ ժողովրդի պատմության, գրականության և արվեստի խն-  
դիրները:

Ժողովածուն կազմել, թարգմանել և հրատարակության է պատրաստել ԵՊՀ հայա-  
գիտական կենտրոնի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների  
բեկնածու, դոց. Հրայր Բայրամյանը:

Հ 05030200000 2001 թ.  
0003(01)–2001

ISBN 99930–2–221–7

ԳՄԴ 63.3(27)+63.3(24)

© Բայրամյան Հ., 2001  
© «Ձանգակ-97», 2001

**Հրայր ԲԱՅՐԱՄՅԱՆ**

**ԵՐԲ ԱՆՏԵՍՎՈՒՄ Է ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Կան թույլտվություններ կյանքում,  
երբ կարելի է հաշտվել ամեն բանի հետ,  
բայց ոչ լռության:  
Քրիստափոր ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Մերօրյա վրաց մամուլն ընթերցելիս այն տպավորությունն ես  
ստանում, ասես հայ ժողովուրդը դարեր շարունակ զբաղված է եղել  
Վրաստանը նվաճելու, վրացիներին իրենց բնօրրանից վտարելու կամ  
իր մեջ ծուլելու, նրանց մշակույթը ավերելու կամ սեփականելու, այդ  
երկրի պատմությունը զեղծելու, այնտեղ ծնելիության ընթացքը կանգ-  
նեցնելու և հար ու նման գործերով<sup>1</sup>:

Անտեսելով գիտականությունն ու էթիկայի տարրական պահանջնե-  
րը, կեղծն ու ցանկալին ներկայացնելով իբրև ճշմարտություն՝ վրացի  
գրագետները Հայաստանի՝ Վրաստանի հետ հարաբերություններում լու-  
սավոր մի կետ, դրական որևէ իրադարձություն, ուսանելի նույնիսկ եզա-  
կի փաստ չեն ուզում գտնել: Ավելին՝ ավագ թե կրտսեր, մեկը մյուսին  
լրացնելով, մեկը մյուսին առաջ մղելով, զարմանալի եռանդ են ցուցաբե-  
րում նաև արժեզրկելու, ժխտելու, անգամ նսեմացնելու վրաստանաբ-  
նակ հարյուրավոր հայրողիների՝ այդ աշխարհի շենացմանը մատուցած

1 Ժողովածուն կազմել և առաջաբանը գրել ենք 1990 թ.: Առաջաբանը՝ իբրև վրաց ընթա-  
ցիկ մամուլի տեսություն, տպագրվել է «Անդրադարձ» (հունիս–հուլիս, 1990), «Ձայն օ-  
րինաց» (հոկտեմբեր–նոյեմբեր, 1990) շաբաթաթերթերում և «Երևանի համալսարան»  
հանդեսում (թիվ 2, 1992): Ներկա տարբերակը տպագրվում է զգալի կրճատումներով,  
թեև բովանդակությամբ գրեթե չի տարբերվում նախկինից: Նյութերը, չնչին բացառու-  
թյամբ, ներկայացրել ենք ժամանակագրական կարգով, իսկ թարգմանած շուրջ հիսուն  
հոդվածից ընտրել ենք ընդամենը տասնչորսը:

ծառայությունները: Անտեսում են այն իրողությունը, որ ճակատագրի բերումով Վրաստանում հանգրվանած հայերը ոչ միայն զբաղվել են երկրագործությամբ, արդյունաբերությամբ, առևտրով ու արհեստներով, ոչ միայն ներգրավվել են հասարակական-քաղաքական կյանքի մեջ, այլև ուսումնասիրել են այդ ժողովրդի մշակույթը, պատմությունը, գրականությունը և մեծապես նպաստել նրա տնտեսության, գիտության, արվեստի, գրականության, առհասարակ, ամբողջ մշակույթի զարգացմանը<sup>2</sup>:

Վրաց մտավորականներից ոմանք ծագում են իրենց ժողովրդին, հատկապես երիտասարդ սերնդին համոզել, թե իբր հայ գիտնականները շարունակում են կանխակալ հետազոտությունները վրացագիտության և հայ-վրաց կապերի ոլորտներում, թե Հայաստանում ոչնչացվել են վրացական հուշարձանները, թե նրանք – սի վերջավորությամբ վրաց աշխարհագրական անունները հայտարարել են հայկական, վրաց ճարտարապետության բազում կոթողներ վերագրել են հայկականին, «Շուշանիկի վկայաբանությունը» յուրացրել են, Վրաստանի պատմական տարածքի զգալի մասը տեղադրել են Հայաստանի պատմական քարտեզներում, Ջավախքը հայտարարել են հայկական շրջան, Աբխազիայում վրացիների ցեղասպանություն են կազմակերպել և այլն, և այլն...

Ճշմարտությունն այն է, սակայն, որ կատարվել և կատարվում է հակառակը. հայ գիտնականը ընդարձակածավալ գիրք հրատարակեց Հայաստանում եղած վրացական հուշարձանների մասին, վրաց լեզվաբանները Գորիս, Բջնի, Անի տեղանուններին հավելում են –ի, –սի, արհեստականորեն դարձնում Գորիսի, Բջնիսի, Անիսի<sup>3</sup>, նմանեցնում վրացահունչ Բոլնիսի, Դմանիսի, Թբիլիսի, Մանգլիսի ձևերին և հայտարարում, թե դրանք վրացական տեղանուններ են: Վրացիներն են գրում, թե վաղմիջնադարյան հայկական ճարտարապետությունը վրացականի պատճենն է, իսկ վերանորոգումների ժամանակ փոփոխություններ են կատարում Վրաստանի հայկական վանքերում ու եկեղեցիներում և հայտարարում վրացական<sup>4</sup>: Վրաց գրականագետները, «Շուշանիկի վկայաբանությունը» համարելով «Ազգային գեղարվեստական արձակի

2 Տե՛ս, օրինակ. С. С. Мамулов, Армяне в Грузии, "Крон-Пресс", Уфулқа, 1995:

3 Այս և մի շարք այլ հրապարակումների մասին տես՝ «Գրական թերթ», 28 օգոստոսի, 1988 (Պ. Մուրադյան, Պատմական միտումնավոր հայացք):

4 Տես՝ Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1998:

գլուխգործոց», 1978 թ. համաշխարհային մասշտաբով նշեցին երկի գրության 1500–ամյակը: Վրաստանի պատմական քարտեզներում մինչև Սևանա (հաճախ՝ Վանա) լճի հյուսիսային ափերը ներկայացվում են իբրև Վրաստանի տարածքներ...

Չբավարարվելով նման սուտուպատիր հայտարարություններով՝ նրանք թե՛ հայ ժողովրդի և թե՛ նրա պատմավոր գործիչների վրա բարդում են այնպիսի մեղադրանքներ, որ մնում են ափիբերան, կարկամած և, ինչպես ասում են՝ գրիչդ կանգ է առնում...

Այսպես՝ բանական որևէ արարածի մտքով կանցնի<sup>5</sup>, թե Սերգեյ Փարաջանովը, «Դաստիարակվելով ոչ վրացական հողի վրա՝ «Լեզենդ Սուրանի բերդի մասին» ֆիլմը նկարահանել է, որպեսզի այլանդակի և ստորացնի վրաց իրականությունը» («Լիտերատուրուլի Սաքարթվելո», այսուհետ՝ ԼՍ, 16 սեպտեմբերի, 1988): Թե Հայաստանի պատմաբանները, «Հին հայկական լեզենդները ներկայացնելով իբրև ճշմարտություն, հենվելով դրանց վրա, նշանակալից հրատարակություններում ստորացնում են հարևան երկրի՝ Վրաստանի անցյալը» («Մնաթրի», թիվ 9, 1988): Թե Լեոյի (Առաքել Բաբախանյան) «Վշխատություններում անարգված են Վրաստանն ու վրաց ժողովուրդը» («Մնաթրի», թիվ 9–10, 1991):

Վրաց մամուլի համաձայն՝ կասկածելի վարքուբարքի տեր են կուսակցական, ազգային, արվեստի և գրականության հայ պատմավոր գործիչները. նրանցից է դժգոհում ոմն Մ. Մախսուրաձե և սուզ ու շիվան անում, թե Ախալցխայի «Փողոցները կրում են կասկածելի կենսագրություն ունեցող անծանց անուններ»: Նրա թվարկած երկու ռուսի, երեք վրացու և ինը հայի անունների շարքում (հիմնականում՝ հեղափոխականներ) կարդում ենք նաև մեր ազգային հայնճարների՝ Խաչատուր Աբովյանի և Հովհաննես Թումանյանի անունները («Ծիթելի դրոշա», 3 հունիսի, 1989): Ակամա մտաբերում ես Ամենայն Հայոց բանաստեղծի «Անգիտակից թշնամիներ» հողվածը (1913)՝ ի պաշտպանություն Սայաթ–Նովայի և դարձյալ Խաչատուր Աբովյանի սուրբ հիշատակի: Ի՞նչ իմանար մե՞ծն Թումանյանը, որ մի քանի տասնամյակ անց ինքն է «Վրացիներից ոմանց մաղձն ու զայրույթը շարժելու՝ իր հիշատակով» և իր անունով կոչված փողոցի պատճառով:

Պետական բարձրաստիճան մի պաշտոնյա, ճիշտ է, բացահայտ չի գրում Մխիթար Գոչի՝ կասկածելի կենսագրություն ունենալու մասին, բայց նրա ուսումնասիրությանը ծանոթանալուց հետո ընթերցողն ինքնըստինքյան եզրակացնում է, որ հայ օրենսգետի իրավագիտական իմա-

ցությունը կասկածի տեղիք է տալիս, որովհետև «Վրացերեն գրել-կարդալ իմանալով՝ վերցրել է վրաց աշխարհիկ օրենսգիրքը և ... նրա հիման վրա կազմել իր Դատաստանագիրքը» («Մնաթրփ», թիվ 2, 1989):

Բայց եթե օրենսգետ Գոշը, երևի թե գիտակցելով իր արարքի պատժելիության հնարավորությունը XX դարի վերջում վրաց պետական այրերի կողմից, այնուամենայնիվ բավարարվել է վրացական օրենսգրքի թարգմանությամբ և տեղայնացումով, ապա մեր գրերի ստեղծողը, մեր դպրոցի ու դպրության հիմնադիրը, մշակութային գործիչն ու մեծ լուսավորիչը, ուսուցչապետն ու եկեղեցու սրբերից ամենասուրբը՝ «իբրև քրիստոնեության քարոզիչ, նպատակ է ունեցել ոչնչացնել իրենից ավելի քան 700 տարի առաջ ստեղծված վրաց հեթանոսական գիրքը»<sup>6</sup> («Մնաթրփ», թիվ 6, 1989):

Վրաց ժողովրդի դեմ «ոտնծգություններ» են կատարել նաև առանձին խավեր, դասեր ու կուսակցություններ: Օրինակ՝ «Ներքին Քարթլիի էթնոսը պատմական տեսանկյունից» գրվածքում շողարծակում են այսպիսի «մարգարիտներ»․ իբրև թե «Հայ հոգևորականները, քաջալերված թուրքերի ու պարսիկների աջակցությունից և դաշնակից ունենալով հավատարիմ ռուսներին, Շենդյան տոների նախօրեին խուրջիմներով խոզի միս են բաժանել գյուղաբնակ ու քաղաքաբնակ աղքատ վրացիներին և ծխամախաններում փոխելով նրանց անուն-ազգանունները՝ դարձրել են հայ»<sup>7</sup> («Մնաթրփ», թիվ 10, 1989):

Մեկ այլ հետազոտող «պարզել» է, որ գավթիչները ոչ միայն քաջալերել են հայերին, այլև, ավերելով Վրաստանի հարավային գավառները, վտարելով վրացիներին, նրանց շեներում վերաբնակեցրել են ղզլբաշների, թուրքերի և ... հայերի, որպեսզի «Սրանք դառնան տերուտնօրենը անտեր մնացած վրացիների, նրանց բերդամրոցների և վանքերի ու եկեղեցիների»:

Դրանից հետո հայերը օձել են վրացական վանքերն ու եկեղեցիները (նույնիսկ Բոլնիսի սինոդը), փոխել են վրացական գյուղերի անունները, վերանվանել այն գյուղերի անուններով, որտեղից տեղափոխվել են իրենք, մարդահամար անցկացնելիս վրացի բնիկներին գրանցել են հայկական ազգանուններով ու անուններով, իսկ ուլքեր հայերեն չեն իմացել, նրանց կնքել են «վրացախոս հայեր»<sup>8</sup> («Մնաթրփ», թիվ 10, 1990):

Ահա թե ում հաշվին են հայերը բազմացել Վրաստանում, ինչպես են հայացրել ու իրենց դավանանքը «պարտադրել» խեղճ ու կրակ վրացիներին:

Բայց համաձայն վրաց որոշ գիտաշխատողների երևակայության՝ հայերի հնարամտությունները այդ կարգի գործողություններով չեն սպառվել․ նրանք կողոպուտով ու ձեռք բերածով չեն գոհացել և դիմել են նաև այսպիսի միջոցների․ «20–30–ական թվականներին գոյություն ունեցած խոզերի ֆերմաների ավերակները, որոնք գրեթե 40 տարի է՝ չկան, քարտեզից քարտեզ են անցկացնում, որ հետագայում ներկայացնեն իբրև XII դարի հուշարձան»<sup>9</sup> («Ախալգազրդա կոնունիստի», 15 հոկտեմբերի, 1988):

Բնորոշ մի գիծ ևս․ զարմանալի հետևողականությամբ նրանք, իրենց հուզող հարցերին անդրադառնալիս, անպայման քար են նետում հայոց՝ համապատասխան բնագավառի անդաստանը։ Այսպես՝ քննության առնելով «История Древнего мира» եռահատոր և «Источниковедение истории Древнего Востока» աշխատությունները՝ գրախոսը պարզապես լուտանք է թափում հեղինակների վրա, ինչ է թե նրանք չեն ժխտում Մեսրոպ Մաշտոցի և վրացի Ջաղայի համագործակցությունը, ավելին՝ համարձակվում են փաստել, որ վրացական գիրն ստեղծվել է մ.թ. V դարում և ոչ թե մ.թ. IV դարում, ինչպես իրենք են պնդում առանց որևէ հիմքի։ Նա ընդվզում է նաև այն իրողության դեմ, թե 481–483 թթ. «Հայաստանում ծավալված հակապարսկական ապստամբության ղեկավարը ոչ թե Վահան Մամիկոնյանն է եղել, այլ Վախթանգ Գորգասալը, որովհետև նա արքա էր և Վրաստանում էլ նման շարժում կար»<sup>10</sup> (LU, 6 մայիսի, 1988):

Մեկ այլ առիթով ոմն Մամեդովայի<sup>5</sup> ինչ-որ աշխատության մասին իրենց առարկությունները չավարտած՝ իսկույն թիրախ են դարձնում

5 Վրացի ընկերները գայրանում են, երբ հայ պատմաբանները երբեմն-երբեմն համարձակվում են արծազանքել իրենց անհիմն մեղադրանքներին, ափերից ելնում են, երբ Հայաստանից Ջավախքի հանդեպ փոքր-ինչ բարոյացական և ուշադիր լինելու հորդոր են լսում, բայց, ա՛յ, լռելյայն են ընդունում Ադրբեջանի պահանջը՝ Ներքին Քարթլիում ազերիների համար ստեղծել ինքնավար մարզ՝ Ռուսթավի կենտրոնով։ Ընդ որում՝ նույն այդ ազերիների հետ հարաբերություններում անհրաժեշտ են համարում խոսել «Սոսկ այն մասին, ինչը միացնում է Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին, որոնք պատմականորեն կապված են իրար հետ ավելի քան երկու հազարամյակ» («Ջարյա Վոստոկա», 3 հուլիսի, 1990։ Ընդգծ. — Գ. Բ.): Սա, ինչպես տեսնում ենք, վրաց «ամաչառ» ու «անկանխակալ» պատմագիտական մտքի նախադեպը չունեցող «ճառագուններից» է անշուշտ։

1979 թ. երևանում տպագրված ուսումնական քարտեզները և անաչառություն պահանջող հեղինակները գրում են, թե Գուգարքը, Ջավախքը (նաև Արտահանը, Կղարջքը, Տայքը և այլ գավառներ) Վրաստանի պատմական հողերն են, թե այդ մարզերի նախկին և ներկա բնակիչները վրացական ցեղեր են, թե հայկական տեղանուններն ու ջրանունները չպետք է արտացոլվեն այդ քարտեզներում (LU, 13 մայիսի, 1988): Իսկ բանաստեղծ Ռոման Միմինոշվիլին, հալած յուրի տեղ ընդունելով այս ամենը, իրավական դաշտ է փնտրում, որպեսզի պատասխանատվության ենթարկել տա հայ և այլազգի (հատկապես ռուս) պատմաբաններին, խմբագիրներին ու խմբագրություններին՝ «Վրաց ազգին վիրավորելու և նրան կողոպտելու համար» (LU, 24 հունիսի, 1988):

«Խորհրդային Վրաստան» թերթին տված հարցազրույցում Միմինոշվիլին, խոսելով իր մի պոեմի մասին, ասում է, թե ինչպես սիրտն ափի մեջ այդ երկուն արտացոլված են իր խոհերը հայ ժողովրդի, նրա ոգեղեն ուժի, արարման անշիջանելի կամքի, նրա հերոսական անցյալի և հարուստ դպրության մասին: Թե ինքը բազմիցս եղել է Հայաստանում և ամեն այցելությունից հետո ավելի ու ավելի է հարստացրել Հայաստանի պատմության, նրա ժողովրդի մեծ մշակույթի մասին իր գիտելիքները, և որ իրենք պարտավոր են պահել-պահպանել նախնիների սուրբ ավանդույթները: Եվ, ի հաստատումն իր խոսքերի անկեղծության, անթաքույց հպարտությամբ խոստովանում է, թե իր կինը մինչև հիմա էլ կրում է Վեհափառ Վազգեն Առաքինի նվիրած ժամացույցը («Խորհրդային Վրաստան», 20 հոկտեմբերի, 1988):

Նախնիների սրբասուրբ ավանդույթները պահել-պահպանել քարոզող, ամեն այցելությունից հետո Հայաստանի պատմության ու մշակույթի մասին իր գիտելիքները հարստացնող, հայ ժողովրդի հանդեպ ակնածանք տաժող բանաստեղծը արցախյան շարժումը համարում է տարածքի պահանջ, իր խոսքով՝ տերիտորիայի պրետենզիա (իհարկե, ոչ այդ հարցազրույցում):

«Լիտերատուրուլի Սաքարթվելո» թերթի մեկ այլ համարում գետեղված են Սահմանադրության այն ենթակետերի քննարկման արդյունքները, որոնք վերաբերում են հանրապետություններում «Ազատ տեղաշարժի իրավունքին»: Նյութի հեղինակները՝ երեք պատկառելի գործիչներ, ամենայն լրջությամբ գրում են, թե «Դա (հանրապետության բնակիչների ազատ տեղաշարժը.— Գ. Բ.) հանրապետության տարած-

քում մի բնակավայրից մյուսը հյուսիս գնալ չի նշանակում, այլ այն, ինչը պլանաչափորեն կատարեցին հայերը, որոնք նախ՝ զբաղեցրին Հայաստանին սահմանակից մեր (իմա՝ վրաց) հողերը, ապա՝ անցան Սև ծովի ափերի ինտենսիվ գաղութացմանը» (18 նոյեմբերի, 1988):

Հայերի կողմից այդ երկրամասը «գաղութացվելու» և արցախյան շարժման մասին շատ-շատերն են խոսում, բայց ուզում ենք վկայել մեզանում բարեկամի համբավ վայելող մտավորականներից մեկին՝ բանաստեղծ Ջանուղ Չարկվիանուն, որը «արցունքով ու ճշմարտությամբ գրված» սովորածավալ հողվածում մեր սուրբ շարժման մասին արտահայտում է այսպիսի միտք. «Որ ստի ոտքերը կարճ են, շատ անգամ է հաստատվել, բայց Դարաբաղի անոթալի օրերը գազաթնակետին են հասել» (LU, 25 նոյեմբերի, 1988):

Դժգոհելով աշխարհի հեղինակավոր հանրագիտարաններում ու գիտական ժողովածուներում Վրաստանն իբրև թե ոչ պատշաճ ներկայացնելու դեմ՝ վրացի վիճակագիրները իրենց երկրին վերաբերող բառահողվածների ու նյութերի ծավալները համեմատում են հատկապես Հայաստանն արտացոլող բառահողվածների ու նյութերի հետ և զարմանում ու զայրանում, թե ինչու պետք է Հայաստանին հատկացվի ասենք՝ 80 տող, իսկ Վրաստանին՝ 50 կամ 60 («Ցիսկարի», թիվ 12, 1988):

«Советский энциклопедический словарь»-ում գետեղված Բագրատունիներ և Բագրատիոններ բառահողվածներում նշված է, որ վրացի Բագրատիոնները հայ Բագրատունիների ծյուղն են: Այս բառարանի լույսընծայումից ութ տարի անց՝ վրաց բանաստեղծներից մեկը աղմուկ-աղաղակ է բարձրացնում, թե դա «Պատմական շմեցուցիչ խեղա-

6 Այսուհանդերձ՝ ուզում ես հավատալ, որ նա անկեղծ է Սպիտակի երկրաշարժի կապակցությամբ գրված իր «Դուրով» ոտանավորում («Литературная Грузия», թիվ 1, 1989), բարեկամության մասին ծավալուն հարցազրույցում («Խորհրդային Հայաստան», 14 մայիսի 1989), հայ ֆուտբոլիստների թմբիկի դինամոյականների հանդեպ ցուցաբերած աննախադեպ բարյացակամությունն ու ասպետականությունը զնահատելիս, Վրաստանի հայկ. մշակութային բարեգործական ընկերության հիմնադրման առթիվ արտասանած խոսքում («Խորհրդային Վրաստան», 1 օգոստոսի, 1989), Վրաստանի մայրաքաղաքում ապրիլի 9-ի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշարձանի բացման առթիվ և երկրաշարժի տարեկիցի օրը ունեցած ելույթներում («Խորհրդային Վրաստան», 25 մայիսի, 1989: Նույնը՝ 12 դեկտեմբերի, 1989):

7 Բառահողվածը, որտեղ վկայված է հայ Բագրատունիների դինաստիայից վրաց Բագրատիոն արքաների սերելու մասին, տպագրվել է դեռևս 1963 թ.: Տես՝ «Энциклопедический словарь» (երկու հատորով), հ. 1, Մոսկվա, 1963, էջ 86: . .

թյուրում է, ամեն ինչի ոչնչացում, ամեն ինչի կորուստ... Ի՞նչ է մնում մեզ. ամենամեծ Վրաստանը մեզ նվիրել են Աշոտ Մեծը, Բագրատ երրորդը, Դավիթ Շինարարը և Թամար թագուհին, մինչդեռ պարզվում է, որ նրանք հայ Բագրատիդների (հեղինակի լեզուն չի զորում Բագրատունի ասել.— Յ. Բ.) ճյուղն են եղել: Եվ սա մենք հանդուրժում ենք,— բացականչում է հեղինակը,— հանդուրժում ենք տարիներ շարունակ: Աղմուկ չենք բարձրացնում, որպեսզի աշխարհին իմաց տանք, թե ինչպես են թալանում մեր անցյալը»<sup>79</sup>:

Այսպես՝ հարցերը գիտականորեն քննարկելու, վերլուծելու, հիմնավորելու փոխարեն աշխարհով մեկ պետք է աղմուկ—աղաղակ հանել և դրացի երկրին ու նրա ժողովրդին ամբաստանել «պատմությունը թալանելու մեջ»<sup>80</sup>:

Ի դեպ՝ այդչափ բանիմաց, ուշիմ, «անցյալի կողոպուտները» հետ բերել ցանկացող «հայրենասերը» չգիտե՞ր, որ եթե տվյալ բառարանի առաջին (1980), երկրորդ (1982 և երրորդ (1984) հրատարակություններում նշված է Բագրատիդների՝ Բագրատունիների ճյուղ լինելը, ապա չորրորդ (1986) և հերթական բոլոր հրատարակություններից հանված է վրացու ազգային արժանապատվությունը «վիրավորող» «ветвь Багратидов» արտահայտությունը: Գիտեր, անշուշտ, բայց հայրենասեր ներկայանալու մոլուցքը այնքան բուռն է և անսանձելի, որ զլացել է գոնե իմիջիայլոց ակնարկելու «թալանը»<sup>81</sup> վերադարձնելու մասին:

Վրաց գիտական շրջանակներում բազում ու բազմապիսի դրսևորումներ ունեն գիտական բարքերին անհարիր երևույթները: Ահա դրանից ևս մեկը. Վրաստանի՝ Թուրքիայի, Գերմանիայի, Անգլիայի, Ռուսաստանի և այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունները լուսաբանելիս վրացի պատմաբանները և քաղաքագետները առանց

8 Ի գիտություն վրաց բանաստեղծի ասենք, որ վաղուց անտի մենք՝ հայերս, ոչ միայն հանրագիտական բառարաններում, ոչ միայն գիտական աշխատություններում ու մենագրություններում, այլև դպրոցական ու բուհական դասագրքերում նշում ենք Արշակունի արքաների պարթևական ծագումը, բայց ոչ հայրենասեր հայն է հիվանդագին ընդունում, ոչ էլ հայրենամոլն է աշխարհով մեկ աղմուկ հանելու կոչ անում:

9 Միայն այդ «թալանն» ամբողջությամբ. **Багратиды (Багратуни)**, древняя арм. аристократич. фамилия. Царская династия (в 886—1045). Наиб. известны: Ашот I, Смбаг I, Ашот II Железный, Ашот III Милостивый, Гагик I. Մոսկվա, 1980, էջ 99: **Багратионы**, царская династия Грузии в 9—19 вв. **ветвь Багратидов** (ընդգծ. — Յ. Բ.). Наиболее известны: Ашот, Давид III, Давид Строитель, Георгий III, Тамара, Георгий V, Ираклий II. Մոսկվա, 1980, էջ 100:

բացառության խոսում են «Դաշնակցական զորքերի՝ Վրաստան ներխուժելու և Լոռին գրավելու» վերաբերյալ:

Բայց նախ ծանոթանանք Լոռին Վրաստանին «պատկանելու» նրանց փաստարկներին: Բերում ենք բառացի, «Հայտնի է, որ դեռևս Քրիստոսի ծննդից առաջ՝ II դարում, Հայաստանի թագավորը Քարթլիի (Իվերիայի) թագավորից զավթել է Գոգարենն (իմա՝ Գուգարք.— Յ. Բ.) երկիրը: Դրանից հետո Գոգարեննի համար պայքարը երկար է շարունակվել: Այն Ձեռքից ձեռք է անցել: Հայաստանի և Վրաստանի քրիստոնեացման ժամանակ IV դարի կեսին, Ներքին Քարթլիի բղեշխությունը՝ նույն այդ Գոգարենն, Հայաստանի տարածքում է եղել, թեև շատ շուտով այդ երկիրը երկար ժամանակ վերստին Վրաստանին է պատկանել» («Մնաթրփ», թիվ 9, 1988):

Լոռին Վրաստանի պատմական տարածք լինելու և այդ երկրին պատկանելու «հիմքը» գցված է. այժմ այն ամսին, թե մենք՝ հայերս, ինչպես ենք տեղ դարձել «վրաստանապատկան» երկրամասին: «Երևանի կառավարությունը հավաքում է իր զորքը և առանց պատերազմ հայտարարելու անցնում Վրաստանի սահմաններն ու կոտորում այնտեղ գտնվող վրացական ջոկատները»<sup>82</sup>: ...Վրաստանի դեմ Հայաստանը պատերազմն սկսեց Լոռու գավառի համար և յուրացրեց ոչ միայն հարավային մասը՝ Սանահինով և Հաղպատով, այլև հյուսիսային մասը՝ Ախթալայով և Ալավերդու պղնձահանքերով» («Մնաթրփ», թիվ 1, 1989):

Մեկ ուրիշը վրաց պետականության վերականգնմանը նվիրված հետազոտության մեջ, անդրադառնալով Լոռու խնդրին, բառացիորեն կրկնում է վերոբերյալ տողերը և շարունակում. «Վրաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո ամբողջ Լոռին հանձնվեց Հայաստանին»: Ընդ որում՝ հեղինակը վկայում է, որ կովկասյան բյուրոյի հայ անդամները քվեարկությանը չեն մասնակցել» («Մնաթրփ», թիվ 7, 1989):

Այս հրապարակումների օրգանական շարունակությունը և խտացված արտահայտությունը «Վրաստանի լինել—չլինելը» շարադրանքի՝ հայերին վերաբերող հատվածն է՝ ասեկոսներին, բամբասանքների ու զրպարտությունների մի ավզյան ախոռ, որ վրաց հանրությանն է ներ-

10 Մինչդեռ հայտնի է, որ, օգտվելով հայ ժողովրդի ծանրագույն կացությունից, վրացական զորքերը ներխուժում են Լոռի և վայրագություններ անում: Այդ են վկայում նաև Գրիգոր Թումանյանի նամակից քաղված հետևյալ տողերը. «Լոռեցիները, վրացի զորքերի լրբությունից կատաղած, հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու... Ջբաղված ենք էդ կռիվը վերջացնելու գործով» («Գրական թերթ», 24 փետրվարի, 1989 թ.):

կայացվել որպես հրապարակախոսություն (իբրև թե արժարժվում է վրաց ժողովրդի ծնելիության պրոբլեմը):

Առարկելով մի շարք գրողների, որոնք ազգի բազմամալուն խանգարող հանգամանքներ են համարում քաղքենիությունը, շվայտությունը, ընչաքաղցությունը, սոցիալական անբավարար պայմանները, հողվածի հեղինակը գրում է, թե, ըստ իր դիտարկումների, այդ գրողները «Միտումնավոր անտեսում են պրոբլեմի հիմնական պատճառները և առաջին պլան են մղում երկրորդական պատճառները»: Ահա թե ինչու ինքը վճռել է նրանց և ընթերցող հասարակությանը հուշել «որոշ ճշմարտություններ» և վեր հանել հանրապետությունում ժողովրդագրական պատկերը փոփոխության ենթարկելու առավել «զայրացուցիչ պատճառները»: Եվ թվարկում է պատճառներից մի քանիսը: Դրանք են. դեռևս Պասկևիչի ժամանակներից սկիզբ առած և այժմ էլ շարունակվող Մեսխեթ-Ջավախքը վրաց ազգաբնակչությունից դատարկելու, երկրամասը քայլ առ քայլ Հայաստանին հանձնելու, այդ նույն երկրամաս Հայաստանից առանց անցաթղթի գնալու, իսկ վրացիների էլունուտն արգելելու, հայերին Մեսխեթ-Ջավախքը յուրացնելու արտոնություն տալու, ոչ վրացի ազգաբնակչության շովինիստորեն տրամադրված մասի կողմից վրացիներին բնօրրանից ստիպողաբար հեռացնելու, վրացական դպրոցները փակելու, վրացաբնակ գյուղերի համար նախատեսված փոխադրամիջոցները ոչ վրացաբնակ գյուղերին հատկացնելու, Ախալքալաքի անասնաբուժական ինստիտուտում վրացական բաժին չլինելու, հայ մշակույթի գործիչների կողմից Ախալքալաքի և Ջավախքի հայերի մեջ զավթողամուլական զգացումներ ներարկելու, վրացիներին հալածելու, վրաց մշակույթի հուշարձաններն ավերելու և այլևայլ վայրագություններ կատարելու քաղաքականությունն ու գործունեությունը...

Շարունակենք հետևել հեղինակի մտքի «թռիչքներին»: Հայերը «փաստորեն նվաճել են մեր (այսինքն՝ վրաց.— Գ. Բ.) Սև ծովի ափերը, հատկապես Աբխազիան և Աջարիան, որովհետև նրանց ոչ ոք ոչ միայն չի խանգարում, այլև Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունը խրախուսում է գաղութակալական այդ գործում»:

Քանի որ հայերը խրախուսվում են այլոց կողմից, կարողացել են Աբխազիան ու Աջարիան գրավել, բնականաբար, նրանք՝ «Այդ հայ շովինիստները, այսօր ամբողջ Վրաստանին են աչք դրել»:

Բայց անհեթեթությունների շարանն այսքանով չի վերջանում: Իրեն հայ ժողովրդի բարեկամ հորջորջողը նաև գրում է, թե, իբր, Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Վազգեն Առաջինը, քարոզներից մեկը վերջացրել է «Հայեր, նվաճե՛ք Սև ծովի ափերը» կոչով: Ընդ որում՝ Հայոց Հայրապետը «Ոչ միայն լռուցվածքով է սատարում իր հայրենակիցների բազմամալուն, այլև այդ նպատակով ֆինանսավորում է Վրաստանում տնավորվող հայ գաղութաբնակներին», և, ո՛վ հրաշք, «Նրան այդ գործում օգնում են հայոց կառավարող շրջանները» (LU, 8 հունիսի, 1990):

Ակներև է, որ մեր ժողովրդին և մեր հոգևոր առաջնորդին վարկաբեկող այս չարամիտ ակնարկը ծնունդ է առել զհավիղականության հայատյաց հնոցում: Հայության դեմ նետված այս արտառոց անհեթեթությունների, տիղմ ու ցեխի նպատակն էլ պարզ է՝ շիկացնել առանց այդ էլ շիկացած մթնոլորտը: Այդուհանդերձ ուզում ես հարցնել եթե ոչ այս բանդագուշանքի հեղինակին, եթե ոչ թերթի գլխավոր խմբագրին, ապա զո՞նե խմբագրակազմի որևէ անդամի. մի՞թե ձեզ հայտնի չէր, որ Ջավախք ոչ միայն հայը, Հայաստանից հավքն էլ չէր կարող թռչել-անցնել առանց անցաթղթի, քանզի անցաթղթի ստուգման կետը հենց Վրաստանի սահմանագլխին էր: Ե՞րբ, որտե՞ղ կամ ո՞ր հայն է որևէ վրացու հալածել այն աստիճան, որ նա հեռանար իր ծննդավայրից, չէ՞ որ փաստերը հակառակն են ասում: Հիշե՞՛նք Ախալցխայի քաղաքային իշխանությունների տնարդի վերաբերմունքը տեղի հայերի հանդեպ:

Զգիտե՛ի՛ն, որ Ախալքալաքում անասնաբուժական ինստիտուտ երբեք չի եղել, որ եղել է աղքատիկ մի տեխնիկում, այն էլ վաղուց փակվել է վրաց «հոգատար» այրերի բարի ցանկությամբ: Ախալքալաքի բնակչության ընդամենը չորս տոկոս կազմող վրացիների համար չեղած ինստիտուտում վրացական բաժին պահանջող գործիչը ինչո՞վ է բացատրում, որ Թբիլիսիի պետական համալսարանի Ախալցխայի մասնաճյուղում անտեսված են այդ շրջանի բնակչության հիսուն տոկոսը կազմող հայերի շահերը:

Ի՞նչ մշտական հյուրերի, ի՞նչ զավթողամուլական զգացումներ ներարկելու մասին է խոսքը, երբ տասնամյակներ շարունակ արդարացի տրտունջ ու դժգոհություն ենք լսում, որ գրականության, արվեստի ու գիտության հայաստանյան ներկայացուցիչները մոռացել են Ջավախքի իրենց հայրենակիցներին: Գուցե թե չեն մոռացել, բայց սահմանային գոտի մուտք գործելու անցաթղթային տաժանքը նրանց հետ է պահել

23. նախնուց զման ցոցե՝ սոցե՝ (հոնալոմե՛ն ճոռնոցե՛ն)



հյուր գնալու մտքից: Իսկ եթե հեղինակը նկատի ունի տերյանական պոեզիային և Ջիվանուն նվիրված ամենամյա հանդիսությունները, որոնց մասնակցում են նաև վրացի բանաստեղծներ, թարգմանիչներ, հասարակայնության ներկայացուցիչներ, երաժշտական կոլեկտիվներ ու պաշտոնատար անձինք, ապա զավեշտական չե՞ն հնչում այն խոսքերը, թե վրացի գործիչները «Չնարավոր է՝ վախից, Ախալքալաք չեն այցելում»: Իսկ Ախալքալաք ինչո՞ւ չեն այցելում, չե՞ որ այդ քաղաքի վրաց քաղաքակիրթ ազգաբնակչությունը մեծաքանակ է և գերազանցում է «այլևայլ վայրագություններ անող» հայերին:

Եվ, վերջապես, իրեն մտավորական համարող անձնավորությունը ինչչա՞փ պետք է կորցնի պատվի ու պատասխանատվության զգացումը, որ հարևան ու հավատակից ժողովրդի կրոնական սրբությանը՝ ծերունագարդ կաթողիկոսին, վերագրի անլուր մի կեղծիք, հիմք ունենալով իր հաճկատարներից իբրև թե լսած «ասում են» —ը: Ի դեպ՝ 70-ական թվականների սկզբին ևս նման ստահող, վարկաբեկող նամակներ են տարածվել վրաց ժողովրդի մեջ և այնքան թունոտ, որ ոմանք առաջ են քաշել ֆիզիկական դատաստան տեսնելու գաղափար: Բարեբախտաբար, ժամանակին Վեհափառին տեղյակ են պահել այդ մասին: Նման ցասում է բռնկվել նաև այժմ: Եվ չնայած դրան՝ հայկական հուշարձանների եղեռնը կանխելու նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոսը երեք նամակ է հղել համայն Վրաստանի պատրիարք—կաթողիկոսին՝ հայ և վրաց հեղինակավոր մասնագետների հանձնախումբ ստեղծելու հորդորով, որը պետք է քննարկեր Վրաստանի տարածքում հայկական պատմամշակութային հուշարձանների և վիճահարույց վանքերի ու եկեղեցիների՝ վրացականացումից առաջ պատկանելության հարցը: Իլիա Երկրորդը, սակայն, չի արձագանքել, չի արձագանքել նաև 29 հունիսի 1990 թ. նամակին (ընդ որում՝ բաց նամակին), ուստի այդ նամակը ևս զետեղում ենք այս ժողովածուում՝ հատուկ հավելվածով:

Հիշյալ բանդագուշանքը «Լիտերատուրուլի Սաքարթվելո» շաբաթաթերթի ամենամաքարո հրապարակումներից էր, ուստի Վեհափառի հետ խորհրդակցելուց և նրա համաձայնությունն ստանալուց հետո հողվածի՝ հայ իրականությանն առնչվող հատվածը թարգմանաբար և հակիրճ առաջաբանով տպագրեցինք «Անդրադարձ» շաբաթաթերթում («Ո՞րն է դիրքորոշումը», 21 հունիսի, 1990): Առաջաբանում գրել էինք, որ հայ մտավորականները չեն զլանա և գայրույթի իրենց խոսքը կասեն

այդ անլուր զրպարտության և սադրանքների առթիվ: Եվ, իսկապես, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի նամակից բացի (տպագրվեց Երևանում լույս տեսնող պաշտոնական թերթերում, 10 հուլիսի, 1990) հրապարակվեցին նաև բազմաթիվ հողվածներ, նամակներ, հարցազրույցներ, ռեպլիկներ, մասնավորապես՝ Վ. Վ. Ղազարյան, Բաց նամակ... («Արմավիր», 3 հուլիսի, 1990), Վահագն Դավթյան, Բաց նամակ... («Գրական թերթ», 6 հուլիսի, 1990), Գայանե Դալլաքյան, Հանդիպում Չվիադ Գամսախուրդիայի հետ («Անդրադարձ», 9 օգոստոսի, 1990), Մարտին Քարամյան, Մի քանի թույտ Չվիադ Գամսախուրդիայի հետ («Գրական թերթ», 10 օգոստոսի, 1990), Չվիադ Գամսախուրդիա, Եղբորդ ամեն ինչ ասա երեսին... («Գրական թերթ», 17 օգոստոսի, 1990), Դավիթ Հովհաննես, «Գրական թերթի» խմբագրությանը («Գրական թերթ», 24 օգոստոսի, 1990), ճակատագրեր, նոմենկլատուրային հայրեր և որդիներ («Հայք», 24 օգոստոսի, 1990):

\* \* \*

Տարօրինակ և ցավալի է, որ լույս են տեսնում նաև հայ ժողովրդի արժանապատվությունը ոտնահարող և նրա հանդեպ կույր առելություն սերմանող հրապարակախոսական և գեղարվեստական երկեր: Դրանցից մեկը՝ «Այնտեղ՝ հեռավոր մոլորակի վրա... կամ 13 նետումներ Արտեմ Գասպարովի կյանքից», տպագրվել է 1986 թ. «Литературная Грызня» ամսագրում (թիվ 1, 2): Մեկ ուրիշ բախտախնդիր հրատարակել է «Սև գիրքը» (1990), ընդ որում՝ 120 հազ. տպաքանակով, այսինքն՝ այդ մաղձը վրաց ընթերցողին է հրամցվել իբրև ազգափրկիչ ծրագի՞ր: (Հայ ընթերցողի նյարդերը խնայելու նպատակով այդ գրքից մեջբերում չենք կատարում):

«Սև գիրքը» գրախանութ չհասած՝ նրա մտագար հեղինակը ԼՍ-ի երկու համարում հանդես է գալիս իրեն «հեղեղած» նամակների տեսությամբ, որոնք նշում են, թե դա պետք է դառնա յուրաքանչյուր վրաց ընտանիքի սեղանի գիրքը՝ իբրև... Ավետարան: Մուլեռանդ ընթերցողներից երկարաշունչ մեջբերումներ կատարելով՝ հեղինակն իր «աշխատանքը» համեմատում է Աստվածաշնչի հետ, քանզի սև շուկայում երկուսն էլ գրեթե նույն գնով են վաճառվում: Հատկանշական է, որ ութ դար վրաց ժողովրդի սեղանի գիրք—Ավետարանը եղել է հանճարեղ Շոթայի «Ընծե-

նավորը», իսկ ահա XX դարի վերջին առաջարկվում է այն փոխարինել տրամագծորեն հակառակ «գաղափարներ» ու «իդեալներ» բովանդակող տխրահռչակ մի թխվածքով: Ավելին՝ նման «հաջողություններից» գլխապտույտի մեջ ընկած հեղինակը «ի լուր բարեկամների ու չարակամների» տարփողում է, թե քսան տարի իր հովանավորին է սպասում «Սև գրքի» երկրորդ մասը՝ «Սևից սև գիրքը» (ԼՍ, 27 հոկտեմբերի, 1990, նույնը՝ 3 նոյեմբերի, 1990): Դժվար չէ պատկերացնել, թե ինչ է ներկայացնում հերթական հատորը:

\* \* \*

Տխուր, շատ տխուր խորհրդածությունների տեղիք են տալիս այդ հրապարակումները: Վրաց մամուլն ակնհայտորեն կրկնում և շարունակում է Վելիչկոյի և Թոփչիբաշևի «գործունեությունը», բանասրկու և բուլվարային սկանդալիստներ (Գեորգի Թունանովի գնահատականն է), որոնց հաջողվեց վարկաբեկել հայ ժողովրդին և թունավորել հայերի ու վրացիների, հայերի ու կովկասյան թաթարների հարաբերությունները: Ցավոք, այդ թույնով են վարակված որոշ վրացի ուռա-հայրենասերներ, խմբագիրներ, գիտաշխատողներ, գրողներ, բանաստեղծներ, հրապարակախոսներ, քաղաքագետներ: Չափազանցություն չի լինի ասել, որ հակահայ նյութերի տպագրությունը վրաց մտավորականության զգալի մասի համար դարձել է կեցության կերպ: Բայցևայնպես ուզում ես հավատալ, որ և՛ նրանք, և՛ վրաց մամուլը, դառն դաս առնելով վրաց-օսեթական, վրաց-աջարական և վրաց-աբխազական հակամարտություններից, կիրաժարվեն թշնամանք սերմանող գործելակերպից, վերջ կտան առճակատում հրահրող հրապարակումներին, քանզի արդեն իսկ վտանգվում է սրբագործված մի բարեկամություն ևս...

## ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԴԱՍԱՐ

Հարյուրամյակից ավելի է՝ Սայաթ-Նովայի կենսագրությունն ու պոեզիան ուսումնասիրության առարկա է, բայց առ այսօր գուսանի նույնիսկ ծննդյան և մահվան տարեթվերը չեն ճշտվել: Այս անգամ մենք չենք անդրադառնում բոլոր այն հարցերին, որոնք կուտակվել են Սայաթ-Նովայի շուրջ, բայց աչքաթող անել դրանցից մի քանիսը, անկարելի է, քանզի խոսքը վերաբերում է վրաց գրականության պատմության մեջ Սայաթ-Նովայի պոեզիայի դերի ու նշանակության ուռճացմանը: Նման տեսակետ է հայտնել հայ նշանավոր բանաստեղծ և գրականագետ Պարույր Սևակը, որը տարիներ առաջ հայերեն հրատարակած հատուկ մենագրության մեջ փորձ է անում «հիմնավորել» վերոհիշյալ դրույթը: Պատմական և գրականագիտական ընդարձակածավալ էքսկուրսից հետո Պ. Սևակը կատեգորիկ կերպով եզրակացնում է. «Վրաց պատմական աղբյուրների միահամուռ վկայությամբ՝ Սայաթ-Նովան միաժամանակ առաջինն էր, որ սկսեց երգել ու նվագել արդեն վրացերեն ու հայերեն՝ դրանով իսկ հայ ու վրաց աշուղական բանարվեստը ազատագրելով արաբա-պարսկական գերությունից, առաջացնելով մի նոր հոսանք, որ զնալով պիտի ահագնամար ինչպես վրաց. այնպես էլ հայ բանարվեստի ու գրականության մեջ:

Այսպիսով՝ Սայաթ-Նովան հայ ու վրաց պոեզիայի մեջ ոչ միայն գագաթ է, այլև սկիզբն է մի լեռնապարի, որին հետևեցին նորանոր կատարումներ»: Հատուկ պետք է նշենք, որ աշուղական պոեզիան վրաց դասական գրականության զարգացման հիմնական առանցքից դուրս է դրված, թեև ոչ էլ Սայաթ-Նովայի պատմական դերի թերագնահատումը կլինի արդարացի: Այս պրոբլեմին, ցավոք, վրաց գրականագիտու-

թյունն այսօր քիչ ուշադրություն է դարձրել, և, ինչպես տեսնում ենք, հետևանքն էլ չի ուշացել: Պ. Սևակը Սայաթ-Նովային համարում է վրաց քնարերգության զարգացման «լեռնապար» և «կատար»:

Եիշտ է՝ Սայաթ-Նովան վրաց և հայոց լեզուներով ստեղծել է աշուղական ոտանավորներ և նույն լեզվով երգել պարսկա-թուրքա-ադրբեջանական մեղեդիներ, բայց այս ամենը բոլորովին չի նշանակում աշուղական պոեզիայի «ազգայնացում»: Աշուղական պոեզիան իր էությանը, ներքին բնույթով, ձևով, բառապաշարով, գեղարվեստական միջոցներով, արտաքին թե ներքին հատկություններով արևելյան երևույթ է: Սայաթ-Նովայի հայերեն և վրացերեն բանաստեղծությունները նույնպես արևելայնության խոր դրոշմն են կրում: Ուրեմն՝ Սայաթ-Նովան ոչ թե «ազգայնացրել» է աշուղական պոեզիան և այն ազատել արաբա-պարսկական ազդեցությունից, այլ, ընդհակառակը, իր ոտանավորներով ու մեղեդիներով հայ և վրաց իրականության մեջ մի տեսակ մեծացրել է արաբա-պարսկական քնարերգության հոսքի տեսակարար կշիռը: Սայաթ-Նովան շարունակեց աշուղական պոեզիայի արևելյան ավանդույթները: Սա փաստ է, և սրա մեղմացումը կամ շրջանցումը չի կարող փառքի դափնի բերել վրաց գրականությանը և, կարծում ենք, ոչ էլ հայ գրականությանը:

Պետք է նշենք, որ վրաց և հայ գրականության մասին Սևակը դատողություններ է անում ընդհանուր հիմունքներով, մեկ հարթության վրա է դնում և մեկ չափանիշով չափում նրանց՝ առանց հաշվի առնելու այս երկու բազմադարյա գրականությունների պատմական զարգացման ինքնատիպությունը, քանահիում է նրանց ազգային առանձնահատկությունները: Եթե Սայաթ-Նովան նախաձեռնող գազաթն է հայ գրականության, որը, մեր կարծիքով, վիճահարույց է, ապա, ամեն դեպքում վրաց գրականության մեջ նա նման դեր չի կատարել: Վրաստանում Սայաթ-Նովայի ուղին շարունակողները ոչ միայն նորանոր կատարներ չգրավեցին, այլ մինչև իսկ իրենց ուսուցչի պոեզիայի բարձունքին չկարողացան մոտենալ (Շամշի Մելքո, Ստեփան Փերշանգիշվիլի, Գեորգի Սկանդարնովա, Հագիր, Դավիթ Գիվիշվիլի և ուրիշներ):

Ինչ խոսք, մենք բոլորովին չենք նսեմացնում աշուղական պոեզիայի պարագլխի՝ նշանավոր աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի նշանակությունը և նրա տեղը վրաց գրականության մեջ: Սայաթ-Նովան որոշակի նորություն է բերել մեր գրականություն, նպաստել է նրա դե-

մոկրատացման տեղեկեցի ուժեղացմանը: Սայաթ-Նովան վրաց քնարերգություն բերեց քաղաքային ներքնախավի, առավելապես արիեստավորական միջավայրի տրամադրությունների մոտիվները, յուրօրինակ լեզվական ու երաժշտական տարերք: Սայաթ-Նովայի պոեզիան գեղեցիկ է, պարզ, լեզուն՝ պատկերավոր: Աշուղ բանաստեղծին բնորոշ է սրտառուչ և կատարյալ սոցիալական մտածողությունը: Արդեն իսկ թեյմուրազ Բատոնիշվիլին ասում էր Սայաթ-Նովայի բանաստեղծությունների մասին. «Խոհուն և համաչափ է, թեև սին ստիխներ են ցածր խավի մասին»:

Պ. Սևակը վրաց աղբյուրներում ջանադրաբար կենսագրական նյութեր է փնտրում Սայաթ-Նովայի մասին: Մասնավորապես՝ նրան հետաքրքրում է, թե ով է եղել սիրային բանաստեղծությունների անմիջական ոգեշնչող կինը: Սևակը համառորեն կրկնում է հայ հետազոտողների շրջանում արմատացած այն կարծիքը, համաձայն որի՝ իբր թե այդ կինը վրաց արքայական տան անդամ Աննա Բատոնիշվիլին է, թեև պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը իր ժամանակին այդ տեսակետը համարել է ֆանտաստիկ և սենսացիոն «տեսություն» (տեսություն բառը Լ. Մելիքսեթ-Բեկը առել է չակերտների մեջ):

Մենք ճշգրտորեն չգիտենք Սայաթ-Նովայի ծննդյան տարեթիվը (1722 թվականը կասկածելի ենթադրություն է), իսկ Կ. Կեկելիձեն ապացուցել է, որ Աննա Բատոնիշվիլին՝ Չերակլ Երկրորդի քույրը, ծնվել է 1716-ից ոչ շուտ (վրաց գրականության պատմություն, հ. 2, 1924, էջ 476, վրաց.): Ըստ Պ. Սևակի՝ Սայաթ-Նովան և նրա սիրուհին ծնվել են միևնույն թվականին: Պ. Սևակը գրում է. «Սայաթ-Նովան հայերեն մի խաղում ասում է. «Ինձ ու իմ սիրական յարին մե տարի բերած գիտեմաք»: Այս տողն ունի ինքնակենսագրական արժեք և հավասարազոր է ծածկագրության»:

Ինչպես տեսնում ենք, Պ. Սևակը այս տողը դիտում է իբրև Սայաթ-Նովայի ինքնակենսագրական արժեք, իսկ ծածկագրությունն էլ հետևյալ կերպ է մեկնաբանում, իբր Սայաթ-Նովայի ծննդյան տարեթիվը (1722) համընկնում է Աննա Բատոնիշվիլու ծննդյան տարեթվին, այսինքն՝ հիշյալ տողը իրական փաստ համարելով՝ նա վճռված է համարում նաև Սայաթ-Նովայի սիրուհու ով լինելը:

Արդեն ասվել է, որ Սայաթ-Նովայի ծննդյան թիվը (1722) հավաստի չէ, իսկ ինչ վերաբերում է հիշյալ տողի սևակյան ինտերպրետացիային,

այն սխալ է և կեղծ: Արևելյան պոեզիայում, մասնավորապես՝ աշուղականում, գեղարվեստական նման խոսքերը սովորական են, և նրանցում որևէ ինքնակենսագրական տեղեկություն ոչ ոք չի փնտրում, քանզի դրանք աշուղական պոեզիայի տրաֆարետի հիման վրա են կառուցված, որով անհնար է պարզել ոչ միայն հասցեատիրոջ անձը, այլ նույնիսկ սեռը: Մինչդեռ Սայաթ-Նովայի բանաստեղծության հիշյալ տողի բուն իմաստը հետևյալն է. աշուղը պետք է ասի, որ իր լույս աշխարհ գալու հետ միասին ծնվել է նաև սիրածի հանդեպ տածած սերը, այսինքն՝ նրանք միասին են ծնվել, քանզի լույս աշխարհ գալու օրվանից նա սիրել է իր յարին: Գեղարվեստական նման խոսքի այսօրինակ ըմբռնումը սովորական բան է, բայց Պ. Սևակը սա զանց է առնում և, հավատարմորեն հետևելով նախօրոք սերտած մտքին, արհեստական կերպով փորձում է Աննա Բատոնիշվիլու անունը կարդալ Սայաթ-Նովայի քմահաճ ոտանավորում: Բերում ենք մի քանի նմուշ. Սայաթ-Նովայի վրացերեն մի խաղում՝ «Էսօր յիս էնդուր խոսեցի», իբրև թե մի քանի անգամ ծածկագրաբար հիշատակում է Աննա անունը. «Մի բան անտարակույս է այս վիճակում էլ. «անի»-ն այստեղ, որ կրկնվում է 6 անգամ (տանի, ակվանի, ուբանի, բրճվվինվանի, սուսանի, անի), նույն «անի»-ն է, որ 28 անգամ կրկնվում է հայերեն 11-րդ խաղում, և իր սիրածի անունն է անպայման»:

Նման «գիտական մեթոդով» է Պ. Սևակը Աննա Բատոնիշվիլու անունը փնտրում Սայաթ-Նովայի հայերեն, վրացերեն, թուրքերեն խաղերում: Մինչդեռ այս «մեթոդի» էությունն այն է, որ, ինչ զնով էլ լինի, Սայաթ-Նովայի բանաստեղծություններում պետք է գտնել այնպիսի բառեր, որոնք վերջանան –անի–ով:

Նման բառեր գտնելուն պես Պ. Սևակը, ի լուր ընթերցողի, տարփողում է, թե այս ու այս բանաստեղծության մեջ այսքան անգամ ծածկագրաբար կրկնվում է Սայաթ-Նովայի սիրուհու անունը:

Հետազոտական նման արդյունքի մասին այլևս չենք ուզում շարունակել մեր խոսքը, բայց մի բան պետք է ասենք. Պ. Սևակի՝ իբր թե ծածկագրեր պարզելու հետագա փնտրտուքը ճիշտ և ճիշտ այսպես է ընթանում, որը ակադեմիական լուրջ հետազոտության հետ ընդհանուր ոչինչ չունի:

Վերջերս Երևանում ռուսաց լեզվով մասսայական ընթերցողի համար լույս տեսավ Վ. Նալբանդյանի, Վ. Ներսիսյանի, Հ. Բախչինյանի «Հայ միջնադարյան գրականություն» գիրքը:

Ցավոք, նրանում էլ հանդիպում են սխալներ: Ընթերցողի ուշադրությունը հրավիրում ենք դրանցից երկուսի վրա: «Հայ միջնադարյան գրականության» 126-րդ էջում հեղինակները Սայաթ-Նովայի կյանքի մի ժամանակաշրջանի մասին այսպիսի միտք են արտահայտում. «Սայաթ-Նովան իր ստեղծագործական կյանքի լավագույն շրջանը (1742–1759) անցկացրել է Հերակլ 2-րդի արքունիքում...»:

Հետաքրքիր է՝ 1742–1759 թթ. հեղինակները ինչո՞ւ են համարում երգչի ստեղծագործական կյանքի ամենաբեղմնավոր շրջանը:

Հերակլը Կախեթի արքա էր 1744-ից: Այդ շրջանում Սայաթ-Նովան թագավորի պալատում չի եղել: Հերակլը նրան հրավիրել է Թիֆլիսի արքունիք 1762 թ., երբ նա զբաղեցրեց Քարթլ-Կախեթի միացյալ թագավորության գահը: Ահա այս շրջանից կարող էր Սայաթ-Նովան ասել. «Վրաց թագավորի սագանդարն իմ յիս»: Երկրորդ խաղում Սայաթ-Նովան այսպես է դիմում Հերակլին. «Ողջ Վրաստանի սիրտն իս դուն»: «Վրաստան» բառն այն ժամանակ նեղ իմաստով նշանակում էր Քարթլի, լայն իմաստով՝ վրացիների միացյալ երկիր: Քաղաքական այս տերմինը Սայաթ-Նովան կարող էր գործածել ինչպես նեղ, այնպես էլ լայն իմաստով: Բայց երկու դեպքում էլ գործ ունենք այն երկրի հետ, որի մայրաքաղաքը Թիֆլիսն էր: Այսպիսով՝ կրկնում ենք. Հերակլը Սայաթ-Նովային արքունիք է հրավիրել Թիֆլիսում, ոչ վաղ 1762-ից: Այս ամենից հետո անհասկանալի է մնում վերոբերյալ հայտարարությունը. իբրև թե Սայաթ-Նովայի ստեղծագործական կյանքի ամենաբեղմնավոր շրջանը եղել է Հերակլ արքայի պալատում՝ 1742–1759 թթ.: Մեր հայ գործընկերները, լեզենդներն ու ասքերը հիմք ընդունելով, անձնուրաց կերպով ջանում են ապացուցել, թե իբր Սայաթ-Նովան սպանվել է 1795 թ. Աղա Մահմադ խանի կողմից Թիֆլիսը ավերելու ժամանակ: Նոր աշխատության հեղինակները ևս (էջ 126) հաշվի չեն առնում վրաց պատմական աղբյուրները, համաձայն որոնց՝ Սայաթ-Նովան բնական մահով վախճանվել է 1801 թ. Հաղպատի վանքում: Այս միտքը հաստատվել է ոչ մեկ գիտնականի կողմից:

Օգտվելով առիթից՝ անդրադառնում ենք հիշյալ գրքի ևս մեկ փաստի, որի կողքից անցնելը կլիներ պարզապես անթույլատրելի, թեև սա Սայաթ-Նովայի խնդրին չի վերաբերում:

Իսկոբ Խուցեսու «Շուշանիկի տառապանքի» մասին սևով սպիտակի վրա գրված է. «Վաղ շրջանի մեր գեղեցիկ գրականության հրա-

չալի նմուշներից է հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Շուշանիկ Վարդենիի կյանքի ու նահատակության պատմությանը նվիրված «Շուշանիկի վկայաբանությունը» (V դ., կա նաև այդ երկի վրացական խմբագրությունը, էջ 17):

Վրաց և ոչ միայն վրաց գիտական գրականության մեջ անառարկելիորեն ընդունված է, որ Իսկոբ Խուցեսու «Շուշանիկի տառապանքը» վրաց ինքնուրույն գրականության սքանչելի երկ է: Գոյություն ունի նաև նրա թարգմանության հայերեն խմբագրությունը: Մինչդեռ հիշյալ գրքի հեղինակները ձեռքի մի շարժումով հակառակն են հայտարարում. «...Կա նաև այդ երկի վրացական խմբագրությունը», որը զուրկ է գիտական որևէ հիմնավորումից և կեղծ տեղեկություն է հաղորդում ռուսալեզու ընթերցող հասարակայնությանը:

Կարծում ենք, որ մեր հողվածում արժարժված հարցերի շուրջ կարծիքների տարբերությունը բուրրովին չի խանգարի շարունակել հայ-վրացական գրական բարեկանության հաստատված ավանդույթը: Ակադեմիական բարեկիրթ բանավեճը միշտ եղել և մնում է ճշմարտությունը վերականգնելու արժանահավատ միջոցը:

*Ալեքսանդր ԲԱՐԱՍԻՉԵ, Բոնոն ԱՐՎԵԼԱՉԵ  
«Լիտերատուրուլի Սաքարթվելո»  
25 սեպտեմբերի, 1987 թ.*

**ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԱՅԱԹ-ՆՈՎԱՆ,  
ՈՐ ՉՈՐՎԵԼ Է 1795 թ.,  
ԲՆԱԿԱՆ ՄԱՅՈՎ ՄԱՅԱՑԵԼ Է 1801 թվին**

Մտրով և հորով հայ Սայաթ-Նովան ծնվել է Թիֆլիսում և այստեղ էլ սկսել է զբաղվել առևտրով ու արհեստով, բայց, ինչպես բնորոշ էր այն ժամանակվա առևտրական արհեստավորներին, ազատ ժամանակ նա նույնպես սազ է նվագել և երգեր հորինել: Ավելի ուշ սազը դարձրել է իր հիմնական արհեստը և հայտնվել արքունի երաժիշտների մեջ: Պալատում երաժիշտներ ունենալն արևելյան սովորույթ էր և, ինչպես երևում է, Չերակլի արքունիքում ևս հիմնականում պարսկական հանգի երգող երաժիշտներ են պահել: Սայաթ-Նովան ի հայտ է բերել նորարարություն. նա պարսկական եղանակներին հարմարեցրել է վրացերեն քառեր: Այդ նորությունն արժանացել է Չերակլի հավանությանը, և խելացի մարդկանց գնահատող թագավորը զուսամին, որ իմպրովիզատոր հարվածող երգիչ է նշանակում, նույնիմյ խալաթ է պարգևել, միայն թե հետագայում ավելորդ համարձակության համար նրան հեռացրել են պալատական երաժշտախմբից: Դրանից հետո Սայաթ-Նովային մենք տեսնում ենք Չաղպատի վանքում, որտեղ նա ձեռնադրվել է քահանա և որտեղ էլ վախճանվել է 1801 թ.:

Թիֆլիսի այն ժամանակվա երաժիշտների մման Սայաթ-Նովան էլ հիմնականում ադրբեջաներեն է երգել (պահպանվել են նրա ադրբեջաներեն երգերի 115 տեքստեր), երգել է նաև հայերեն (հայտնի է 60 երգի տեքստ) և վրացերեն (37 երգ):

Քանի որ աշուղներն իրենց երգերի տեքստերը չէին գրառում, Սայաթ-Նովայի խաղերի ինքնագրերը նույնպես հայտնի չեն: Նրա

խաղերը գրի է առել ոմն Պանտելանց Իոաննե՝ բնականին ինքնատիպ հնարքով՝ հայերեն տեքստերը վրացերեն տառերով, աղբյուրներենը՝ հայերեն:

Հերակլի և Գեորգի 12-րդի ժամանակներում Սայաթ-Նովայի երգերն այնքան մոդայիկ են եղել, որ նրանց մասին տեղեկություններ են հաղորդել արքայազներ Իոաննե և Թեյմուրազ Բագրատիոնիները: Վերջինիս արխիվում պահպանվել է Սայաթ-Նովայի վրացերեն խաղերի գերակշիռ մասը, որ գրառել է երգչի պետերբուրգաբնակ որդին՝ Գեորգի Սեիդովը:

Չնայած իբրև թե նման համբավին՝ XIX դարի վրացի գործիչները Սայաթ-Նովային չեն ճանաչել: Ինչ վերաբերում է Հայաստանում բնակվող հայ ժողովրդին, ապա Սայաթ-Նովայի մասին նա էլ ոչինչ չի իմացել, մինչև որ թիֆլիսցի (ավելի ճիշտ՝ թելեթցի) Յուրի (Գեորգի) Ախվերդովը (մասնագիտությամբ՝ բժիշկ) 1852 թ. հրատարակել է նրա վրացատառ հայերեն խաղերը: Հենց այդ Ախվերդովն էլ հորինել է (գուցե ինչ-որ տեղ լսած) այն լեգենդը, ըստ որի՝ Սայաթ-Նովան իբր թե գոհվել է 1795 թ. Աղա-Մահմադ խանի զորքերի՝ Թիֆլիս ներխուժելու ժամանակ:

Քանի որ վրաց հասարակայնությունը պատմաբան Պլատոն Իոսելիանու հաղորդումից գիտեր, որ նման ոչինչ տեղի չի ունեցել, որ Աղա-Մահմադ խանը Թիֆլիս մտնելու ժամանակ Սայաթ-Նովան առհասարակ քաղաքում չի եղել, իսկ կյանքն էլ ավարտել է վեց տարի անց, Հաղպատի վանքում (այս տեղեկությունը հաստատվում է նաև Իոաննե Բագրատիոնու (Բատոնիշվիլի) «Կալմասոբայում» առկա էպիգրոֆով), ապա Ախվերդովի հեքիաթներին ուշադրության չեն արժանացրել նաև գիտական շրջանակներում այնքան ժամանակ, մինչև որ կոմունիստ գաղափարախոսները կեղծիքի ու աչքակապության վրա հիմնված «Ժողովուրդների բարեկամության» գաղափարը բարձրացրին քաղաքականության մակարդակի և պեղեցին Ախվերդովի լեգենդը:

Ինչպես բնութագրական է կոմունիստ գաղափարախոսներին, բազմաթիվ այլ լեգենդների հետ միասին «սոցիալական անարդարության դեմ մարտնչող» (տե՛ս իմ գիրքը՝ «Սայաթ-Նովա. լեգենդներ և իրականություն», Թբ., 1990 թ.) Սայաթ-Նովային «ժողովուրդների բարեկամության» դրոշակակրի տիտղոս էլ պարզենցին, բայց, ի հեճուկս իրենց մեծ ցանկության, չկարողացան հասնել նպատակներին: Այս կար-

ճոտն սուտն իբրև ճշմարտություն ներկայացնելու փորձի դեմ ընդվզեցին ակադեմիկոսներ Կ. Կեկելիձեն, Ալ. Բարամիձեն, Հայաստանի ակադեմիայի թղթակից անդամ Լ. Մելիքսեթ-Բեկը և ուրիշներ, թեև իրենց տիրապետության վերջին տարիներին (հիմա դժվար է ասել՝ հայերի՞, թե՞ վրացիների նախածեռնությամբ) Թիֆլիսում վերստին «ժողովուրդների բարեկամության» լոգունգի տակ սկսեցին անցկացնել «Աղա-Մահմադ խանի զորքերի դեմ մարտնչելիս ընկած Սայաթ-Նովայի հիշատակի օրերի» տոնակատարությունը:

Ես, իհարկե, ոչինչ դեմ չունեմ, որ որևէ կլոր տարեթվի առիթով կրկին նշենք Սայաթ-Նովայի հիշատակի օրերը, ինչպես որ նշել ենք առայսօր: Բայց չեն հասկանում, թե մինչև երբ պիտի գնանք կոմունիստ գաղափարախոսների կողմից «նետված» կարծուտ կեղծիքի վրա հիմնված ավանդույթի իներցիայով, մինչև երբ կարելի է ժողովրդին, որ հրաշալի գիտե պատմական ճշմարտությունը, ապացուցենք, որ բնական մահով 1801 թ. մեռած ծերունի Սայաթ-Նովան դրանից հինգ տարի առաջ՝ 1795 թվականին, «հերոսաբար գոհվել է»՝ Վրաստանի մայրաքաղաք ներխուժած թշնամու դեմ պայքարում:

Կասկած չկա, որ Սայաթ-Նովայի «հերոսության» մասին լեգենդը հորինեցին այն բանից հետո, երբ հայտնի դարձան այն երկու դարաբաղդի հայերը, ովքեր ուղեկցել էին Թիֆլիս ներխուժած Աղա-Մահմադ խանի զորքերին: Ամիրաժեշտ էր նրանց այդ քստմնելի գործողությանը հակակշռել նույն ժողովրդի մեկ այլ զավակի «հերոսությամբ»: Ուստի և, ո՞վ գիտի, ժամանակի ընթացքում թերևս ծնվի նաև Բաղրամյանականների գազանության մի թաքնված հերոս, և «գիժ վրացուաներիս» նրա արձանի շուրջը միտինգներ անել տան:

Մենք ամեն ինչ պիտի անենք, որպեսզի երկու հարևան ժողովուրդների հարաբերությունները դնենք ճշմարտության և փոխադարձ վստահության խաղաղ հիմքերի վրա, վիճահարույց և առարկելի հարցերը վճռենք ոչ թե կոծկելով ու արգելելով, այլ առողջ քննարկումներով և ճշմարտությունը հարգելու սկզբունքով:

Կարծում եմ՝ անհրաժեշտ է, որ վերջ տանք կեղծ և մտացածին ավանդույթին՝ Սայաթ-Նովայի՝ այսպես կոչված գերեզմանի շուրջը անցկացվող հավաք միտինգներին:

Փոխարենը վերականգնենք անդրկովկասյան ժողովուրդների երաժշտական փառատունը, անցկացնենք միացյալ սիմպոզիում սեմի-

նարներ, մարզական մրցույթ օլիմպիադաներ և ցրենք այն ամպերը, որ վերջին ժամանակներս Վրաստանի քաղաքացի արխազարնակ հայ ազգության պատկանող մի խմբի գործողությունների հետևանքով կուտակվեցին մեր ժողովուրդների փոխհարաբերությունների երկնակամարում:

Ամեն տեսակ բարեկամության ամենաառաջին պայմանը ճշմարտությունն է և անկեղծությունը. կեղծիքի վրա շինված բարեկամությունը ի սկզբանե կործանման է դատապարտված: Ջի ասում է մեծ Շոթան. «Անպտուղ է գործը տզեղ. նրա ուղին կարծ է ու սին»:

*Պրոֆեսոր Ալեքսանդր ՓՈՑԽԻՇՎԻԼԻ  
«Սաքարթվելո»  
17-20 մարտի, 1997 թ.*

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԱԶԱՌՈՒԹՅՈՒՆ Ե ՊԱՅԱՆՁՈՒՄ

Ազգային պետական տարածքը քմահաճ, այսպես ասած, աստծո կողմից շնորհված բարիք չէ: Ազգային պետական տարածքի կազմավորումը արդյունք է բացառիկ բարդ և չափազանց երկարատև գործընթացի, որին մասնակցում են բազմաթիվ տարբեր ազգակից կամ ոչ ազգակից ցեղեր և ժողովուրդներ. արդյունք է այս վերջինների բազմակողմանի (քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային) փոխգործողությունների, որն արտահայտվում է նրանց փոխմիաձուլմամբ և ձուլումով կամ էլ՝ փոխսահմանազատմամբ և փոխհեռացմամբ: Ամբողջ այս էթնոգենետիկական պրոցեսն ընթանում է որոշակի բնական-էկոլոգիական միջավայրում: Վերջինս նշանակալից կերպով պայմանավորում է նույն պրոցեսը, որի որոշակի փուլից լավագույն բնական-էկոլոգիական միջավայրում գտնվող և այդ միջավայրին լավ ընտելացած ցեղը կամ ժողովուրդը առավելություն է վերցնում: Վերոհիշյալ պրոցեսը հետագայում այս ցեղի կամ ժողովրդի քաղաքական և մշակութային գերիշխանության նշանաբանով է ընթանում: Հանրագումարում՝ կազմավորվում է ամբողջական մշակույթի տեր հասարակություն՝ բնակեցված ամբողջական տարածքում, որը ժառանգում է ցեղի կամ ժողովրդի հեգեմոնի անուն և որը, ինչպես մշակութային-քաղաքականորեն և՛ հանրագումարում՝ էթնիկորեն, նմանապես սոցիալ-տնտեսապես, նաև ֆիզիկաաշխարհագրականորեն կազմավորված տարածքային միավոր է ներկայացնում: Աստիճանաբար այսպես են կազմավորվում ազգային պետությունները միասնական տարածքներով, որոնք զարմանալի կալուցություն են դրսևորում դարերի ընթացքում:

Վերոշարադրյալից պետք է պարզ լինի, որ ազգային տարածքը, փաստորեն, մի ժողովրդի ստեղծագործություն է և այդ իսկ պատճառով նույնքան անձեռնմխելի է և սրբասուրբ, որքան ազգային լեզուն և ազգային մշակույթի յուրաքանչյուր դրսևորում:

Էթնոգենետիկական նման պրոցես մեզանում էլ է ընթացել: Արևելյան Վրաստանի տարածքում իբրև առաջընթացիկ ուժ են դրսևորվում քարթվելական ցեղերը, մասնավորապես՝ քարթի ցեղը: Վերջինիս բնակության տարածքը, որն ընդգրկում է Կուր գետի միջին գոտու ավազանը, «Քարթլի» էր կոչվում: Նման «Քարթլի» արդեն պետք է գոյություն ունենար ուշ բրոնզե դարի (մ.թ.ա. II հազարամյակի 2-րդ կես) որոշակի փուլում: Սա ազգագրական Քարթլին էր, որը բաժանվում էր երկու մասի՝ «Վերին աշխարհ» (ուշ շրջանի «Միջին Քարթլի») և «Ներքին աշխարհ» (ուշ շրջանի «Ներքին Քարթլի»), միննույն ժամանակ, «Քարթլին» քարթի ցեղերի կայուն համադաշնակցություն էր, որի հզորությունը պայմանավորում էին հողագործությունն ու քոչվորական լեռնային արտավայրերը, անասնաբուծությունն ու բարձր զարգացած երկաթի մետալուրգիան: Բնական է՝ եթե հզոր տնտեսական բազիս ունեցող հասարակությունը համապատասխան սոցիալ-քաղաքական կազմակերպություն ուներ՝ ինքնին հասկանալի է դարձնում Քարթլիի հզոր ազդեցության տարածումը հարևան մարզերի վրա: Այս պրոցեսի դրսևորումն էր, մասնավորապես, Կուրի վերին հոսանքի ավազանում և ճորոխի կիրճում հնագույն ժամանակներից ի վեր իրար կողք կողքի տեղաբնիկ արևելյան և արևմտյան վրացի (զանական) ցեղերի քաղաքական և մշակութային-էթնիկական միաձուլումը քարթլի ցեղերի հետ, որի պատճառով որոշակի ժամանակից հետո ամբողջ այս տարածքը նույնպես Քարթլի («Վերին Քարթլի») կոչվեց:

Այս երկարատև էթնոգենետիկական պրոցեսում մեծագույն նշանակություն ուներ Վրաստանի տարածքի գեոմորֆոլոգիական առանձնահատկությունը, մասնավորապես այն, որ նա բաժանվում է լեռնային և դաշտային գոտիների...

Այսպիսով՝ մ.թ.ա. IV-III դարերի սահմանագծում Քարթլիի (Իվերիայի) թագավորության (ինչպես և XI դարի սկզբում միասնական Վրաստանի ֆեոդալական պետության) ստեղծումը, որն իր մեջ ներառում է Կուրի վերին և միջին հոսանքների ավազանն ամբողջությամբ և, նմանապես, ճորոխ գետի ամբողջ կիրճը՝ մակերեսային հանկարծական

փոփոխությունների դրսևորում չէր, այլ երկարատև ու բարդագույն սոցիալ-տնտեսական և էթնիկական-մշակութային փոխհարաբերությունների օրինաչափ արդյունք: Ճիշտ է՝ վրաց ժողովրդի պատմական զարգացման պրոցեսը, ինչպես հայտնի է, սրանով չի վերջացել: Քարթլիի (Իվերիայի) թագավորության քաղաքական էվոլյուցիան հետագայում, դարերի ընթացքում, սերտորեն է կապված եղել Եգրիսի (Կուխիդայի) արևմտյան-վրացական թագավորությանը, ինչպես նաև Հայաստանի և Աղվանքի (Կովկասյան Ալբանիայի) թագավորությունների քաղաքական զարգացմանը, որի հետևանքով էլ նրա քաղաքական սահմանները դարերի ընթացքում, բնական է, հաճախ փոխվում էին: Բայց այս անգամ ուզում ենք ընդգծել այն, որ վերոհիշյալ բազմակողմանի էվոլյուցիոն պրոցեսի հետևանքով Քարթլիի (Իվերիայի) թագավորությունը ամուր էթնո-սոցիալական և մշակութային միասնություն էր ներկայացնում: Հին վրացական պատմական աղբյուրի լեզվով որ ասենք, դա տարածք է «խունանից մինչև ծովը Սպերի»:

Կրկնում ենք, որ պատմական աշխարհագրության տեսակետից դա արդյունք է չափազանց երկարատև էթնոգենետիկական պրոցեսի, որ զարգանում էր միանգամայն որոշակի տեմպերով: Վերջինս պայմանավորված էր Արևելյան Վրաստանի ֆիզիկական և տնտեսական աշխարհագրության յուրահատկությամբ, որն իր հերթին որոշում էր սոցիալական և քաղաքական էվոլյուցիայի գլխավոր ուղղությունը:

Պատմական գիտության նպատակն է բացատրել ոչ միայն այս պրոցեսի մեխանիկան, այլև, որ այն ներկայացնի հնարավորին չափ անաչառ՝ համապատասխան պատմական քարտեզների միջոցով:

Վերջին ժամանակներում այս տեսակետից յուրահատուկ կացություն է ի հայտ գալիս:

1986 թ. Ադրբ. ԽՍՀ «Էլմ» գիտական հրատարակչությունը ռուսերեն լույս է ընծայել Ֆարիդե Մամեդովայի «Կովկասյան Ալբանիայի քաղաքական պատմություն և պատմական աշխարհագրություն» մենագրությունը՝ վեց սխեմատիկ քարտեզով, որոնցում պատկերված է Աղվանք պետության քաղաքական-աշխարհագրական կացությունը մ.թ.ա. III դարից մինչև մ.թ. VII դարը ներառյալ, այսինքն՝ մի ամբողջ հարամյակ տևողությամբ:

Ապշեցուցիչ է, որ այդ քարտեզներում հեղինակը ոչ միայն ամբողջովին անտեսել է պատմական ազբյուրներում (այդ թվում՝ թե՛ հին վրա-



ցական, որոնց, հեղինակն ընդհանրապես ուշադրության արժանի չի համարել, թե՛ հին հայկական, լատինա-հունական և արաբական) եղած փաստերը, այլև մի շարք դեպքերում, բավական յուրահատուկ մեկնության հիմունքներով Աղվանքի թագավորության սահմաններ է մտցրել Քարթլիի (Իվերիայի) պետական տարածքի արևելյան հատվածը: Սահմանային գիծն անց է կացրել հյուսիսից՝ Ալազանիի և Իորիի ամենավերին հոսանքներից մինչև այն կետը, որտեղ Թիֆլիսն է (Թիֆլիսը չի նշված նույնիսկ V-VII դարերի քարտեզներում), իսկ հարավից՝ Ալզեթի, Քցիի (հրամի) և Դեբեդի ներքին գոտին: Այսպիսով՝ ամբողջ Գարեմ, Միջին Կախեթը, Քիզիլդիով հանդերձ, այժմյան Գարդաբանիի շրջանը և Մառնեուլիի շրջանի մի մասը մտցված է Աղվանքի թագավորության սահմանների մեջ: Բայց առավել զարմանալիս այն է, որ, ըստ հեղինակի, ամբողջ հազարամյակի ընթացքում նրա գծած Աղվանքի հսկայական տարածքը փաստորեն անփոփոխ է մնացել, եթե հաշվի չառնենք այն աննշան փոփոխությունները, որ Քարթլիի (Իվերիայի) թագավորությունը մ.թ.ա. II դարից իր տարածքն ընդարձակել է մոտավորապես մինչև այժմյան Ռուսթավի քաղաքը, իսկ մ.թ. V դարից իրեն է միացրել նաև Իոն-Ալազանիի միջագետքի միջին գոտին:

Բացի այն, որ տարբեր բնույթի պատմական ստույգ աղբյուրները բոլորովին իրարամերժ ցուցումներ են տալիս, ընդհանրապես, հին և միջնադարյան պատմաբանի համար, եթե նա գիտական կատեգորիաներով է մտածում, բոլորովին անընդունելի է վերոհիշյալ դարաշրջանների համար պետությունների քաղաքական սահմանները հազարամյակների ընթացքում այսպես անփոփոխ ներկայացնելը: Այն անընդունելի է նաև փաստացիությամբ, հենց թեկուզ մի պարզ պատճառով, այն, որ այս տեսակետը ընդունելու դեպքում պետք է ընդունենք նաև, որ Քարթլիի (Իվերիայի) թագավորության մայրաքաղաքները, նախ՝ Մցխեթը, և ապա՝ Թիֆլիսը, եթե նույնիսկ Աղվանքի տարածքում չեն, ապա հենց նրա քաղաքական սահմանների վրա են գտնվում: Այս թյուրիմացության մասին, համանման դեպքի կապակցությամբ, դեռևս Ս. Ջանաչիան է մատնանշել:

Վրաց խորհրդային պատմագրության մեջ այս պրոբլեմը՝ Իվերիա-Աղվանքի քաղաքական սահմանների կացությունը դարերի ընթացքում, հնարավորին չափ ուսումնասիրված է. հետազոտված է սոցիալ-տնտեսական և էթնիկական-մշակութային այն հիմունքը, որ պայ-

մանավորել է այս քաղաքական սահմանների էվոլյուցիան: Ահա թե ինչու այս մասին այլևս չենք շարունակի խոսել: Նշենք միայն, որ աղբյուրաբանի պատմաբանի վերոհիշյալ տեսակետը՝ «ամրակայված» նրա մեծագրության մեջ՝ բավականին մակերեսային հուզական ելևէջներով... վկայում է լուկ նրա գիտական տեսակետի թուլությունը: Սա, իր հերթին, արդյունք է այն բանի, որ պատմական աշխարհագրությունը, ինչպես պատմական գիտություն, Աղբյուրաբանի պատմագրության մեջ ոչ մի ավանդույթ չունի: Ֆ. Մամեդովայի մեծագրությունը, փաստորեն առաջին և, ցավոք, անհաջող փորձն է այս առումով:

Բայց եթե աղբյուրաբանական պատմագրության տեսակետը կարելի է բացատրել վերոհիշյալ «օբյեկտիվ» պատճառներով, ապա նույնը չի կարելի ասել հայ պատմագրության մասին, որ պատմաաշխարհագրական ուսումնասիրության հարուստ ավանդույթ ունի: Եվ չնայած դրան, այստեղ էլ գործ ունենք համանման երևույթի հետ: Եթե մի կողմ դնենք համեմատաբար հին հրատարակությունները, ապա նույնիսկ վերջին տարիների հայկական պատմական քարտեզագրության նմուշներն էլ այս առումով անմախանձելի պատկեր են ներկայացնում:

Այսպես՝ օրինակ՝ 1979 թ. Երևանի համալսարանի հրատարակչությունում լույս տեսավ բավականին մեծածավալ (115x83 սմ<sup>2</sup>) ուսումնական քարտեզ՝ «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում (298-385 թթ.)»: Այս քարտեզում, որի հեղինակը հայտնի գիտնական և Կովկասի հին պատմության վերաբերյալ գոյություն ունեցող աղբյուրների քաջագիտակ ակադ. Ս. Երեմյանն է, արդեն ամբողջ հարավային Վրաստանը մտցված է Հայաստանի տարածքի մեջ, որն ինքնին վիթխարի տարածություն է զբաղեցնում՝ սկսած Կասպից ծովի ափերից, Ուրմիայի և Վանա լճերի շրջակա տարածություններից Տիգրիսի ակունքներով մինչև Եփրատ գետը ու դեռ ավելի խոր՝ դեպի արևմուտք: Հյուսիսային սահմանը դեմ է տրված ընդհուպ Թիֆլիսին և ոչ միայն Ներքին Քարթլին, այլ նաև Ջավախքը, Արտահանը, Շավշեթ-Կղարջը, Տայք-Սպերն էլ Հայաստանին է վերագրված:

Իսկապես, միակ աղբյուրը այս դարաշրջանի համար, որի հավաստիությունը այլ համապատասխան նյութերի չգոյության պատճառով անհնար է ճշտել, և որը հիմք է տալիս նման քաղաքական դրություն պատկերացնել Քարթլիի (Իվերիայի) և Հայաստանի թագավորության հարակից տարածությունների վերաբերյալ, դա այսպես կոչված «Աշ-

խարհացոյց» է՝ կազմված VII դարի առաջին կեսին: Այն էլ ճիշտ է, որ այս աղբյուրից համապատասխան տվյալներ վերցնելը՝ IV դարի կացութիւնը վերականգնելու համար, միանգամայն թույլատրելի է, բայց IV դարի առաջին և ոչ թե երկրորդ կեսի համար, ինչպես կտեսնենք ստորև, դա էլ ոչ ամբողջովին այնպէս, ինչպես ներկայացնում է հեղինակը: Մասնավորապես՝ անհասկանալի է, թե նա ինչու է Հայաստանի թագավորության սահմանների մեջ առել Թիֆլիսից հարավ ընկած տարածքը, այսպես կոչված «Պարուարը» կամ ճորոխի Շավշուրի կիրճում գտնվող Շավշեթին, որոնք, նույն այդ աղբյուրների համաձայն, Քարթլիի թագավորությանը պատկանող տարածքներ են: Բայց կարևորն այն է, որ երիտասարդության համար նախատեսված ուսումնական այդ քարտեզի վրա ոչ մի տեղ որևէ պայմանական նշանով հիշատակված չէ, որ վերոհիշյալ տարածությունները՝ Ներքին Քարթլին և ճորոխի ավազանը, վրացական հողեր են, որոնք մինչև IV դարը Հայաստանի թագավորությունն արդեն նվաճել էր: Բանից անտեղյակ մարդն այնպիսի տպավորություն կարող է ստանալ, թե, իբր, այդ տարածությունները էն գլխից ի վեր Հայաստանին են պատկանել: Ավելին՝ ոչ միայն Հայաստանի թագավորությանն են պատկանել, այլև, իբրև հայկական տարածություններ են եղել: Այլ կերպ դժվար է բացատրություն գտնել այնպիսի փաստերի համար, երբ Ներքին կամ Վերին Քարթլիի որոշ հիմնավորապես վրացական պատմական տեղա- կամ ջրանուններ քարտեզներում հայկականացված են, մի քանիսն էլ համեմատաբար ուշ շրջանի աղբյուրներում են վկայակոչված միայն: Հայկական տեղանունությունը կիրառվում է IV դարի կացությունն արտացոլելու համար, մինչդեռ հնագույն վրացական տեղանուններն առհասարակ տեղ չեն գտել քարտեզում: Բերենք միայն մեկ օրինակ. Ալգեթի գետը քարտեզում հիշատակված է իբրև «Ալ-գետ», և քանի որ հայերեն «գետը» գետ էլ նշանակում է, ուստի այն ընկալվում է իբրև հայերեն ջրանուն՝ Ալ գետ: Իրականում նման փոփոխությունն անթույլատրելի է, ինչպես հայերեն-վրացերեն հնչյունական համապատասխանության հիման վրա, այնպես էլ հին հայերենի բառակազմական կանոնների համաձայն (քանի որ նման կոմպոզիտ՝ Ալ գետ, անհարիր է հայոց լեզվին, ուստի պետք է լինի կամ Ալագետ, կամ էլ՝ Ալոգետ, հմմտ. հյ. Չորագետ-Չորոգետ ևլն): ճորոխի կիրճում անց է կացված «Տայոց քար» տեղանունը, որ վրացերեն նշանակում է «տայքցիների ամրոց» (քար բառը հայերեն փոխաբերական իմաստով նաև

ամրոց, բերդ է նշանակում): Իրականում նման տեղանուն պատմական և ոչ մի աղբյուրում չեն հանդիպի, ուստի դա Թամար թագուհու պատմիչի երկում հիշատակված վրացական «Տաոսկարիի» հայկականացման հետևանք է: Ներքին Քարթլիի տարածքում հիշատակված տեղանունները՝ Վարազբար և Կաքավաքար, որոնք նույնպես բերդամրոցներ են նշանակում, միայն «Մատիանե Քարթլիսայիս» տեքստն է պահել մեզ համար՝ կապված XI դարի իրադարձությունների հետ, և դրանք տեղափոխել IV դար՝ բոլորովին հիմնազուրկ է: Ի վերջո, ինչ ասել կուզի, ոչ մի մեկնաբանման կարիք չի զգում այն փաստը, որ քարտեզի վրա հիշատակված չէ Ներքին Քարթլիի հնագույն կենտրոններից մեկը՝ Սամշվիլ-դե բերդաքաղաքը, որը, իմիջիայլոց, հենց այդ նույն հայկական «Աշխարհացոյցում» հիշատակված է իբրև «Վրացիների քաղաք»՝ Շամշուլ-դե-Շամշուլդե ձևով: Օրինակներ շատ կարելի է բերել:

Տպավորությունն այն բանի, որ Քարթլիի (Իվերիայի) թագավորության մեզ համար հետաքրքրություն ներկայացնող տարածությունը հայկական է եղել, բանից անտեղյակ մարդու համար կարող է ավելի ուժեղանալ նրանով, որ ճիշտ նույն քարտեզը, միայն թե անսագրի չափսին համապատասխան փոքրացված և սխեմային տեսքով տպագրված է «Սովետական Հայաստան» անսագրում (N1, 1988): Այդ հանդեսում է տպագրված նաև Ռ. Իշխանյանի հոդվածը՝ «Արա Առաջին արքա հայոց»: Թվում է, թե այս հոդվածը քարտեզի հետ կապ չունի, բայց իրականում դա հին, նախաքրիստոնեական շրջանում «Մեծ Հայքի» հիմքերի ու սահմանների պրպտում-փնտրտուքի և հաստատման փորձ է:

Քարտեզին կցված է համառոտ գրություն, որտեղ նշված է. «Հայոց տոմարի անունները ծագում են պատմական Հայաստանի լեռների, գետերի ու մեր հեթանոսական դիցարանի աստվածների անուններից (Արամազդ, Անահիտ, Վահագն և այլն):

Չեզ ներկայացվող ակադ. Սուրեն Երեմյանի կազմած սույն քարտեզի վրա, ըստ հերթական համարների, նշված են մեր տոմարի օրանուններ դարձած պատմական Հայաստանի տեղանունները, լեռնանունները, գետերը և մեծիանները՝ Արամ, Աստղիկ, Պարխար, Անահիտ և այլն»: Դրանցից ոմանք մտցված են Հարավային Վրաստանի տարածություն, որ բոլորովին անհասկանալի է...

Քարտեզում «Մեծ Հայքի թագավորությունը» ճիշտ նույն ծավալի է: Տարբերությունն այն է լուկ, որ եթե 1979 թ. Հայկական թագավորությունն

այս սահմաններում ենթադրվում է 298–385 թթ. միջև ընկած ժամանակահատվածով, ապա 1988 թ. ամսագրում նման դրույթունը թվագրված է մ.թ.ա. 190–ից մինչև մ.թ. 385–ը: Արդեն այս փաստը ինքնին կասկած է հարուցում, որ Հայկական թագավորության քաղաքական այս սահմանները կամայականորեն են գծված: Այսպիսով՝ այստեղ էլ, ադրբեջանական պատմագրության վերոհիշյալ տեսակետի համաբանությամբ երկրի քաղաքական պատկերը 600 տարվա ընթացքում անփոփոխ է թողնված: Դրա հետ միասին, քանի որ, ինչպես վերը համոզվեցինք, քարտեզում անցկացված ջրա– և տեղանունների մեկնաբանության ժամանակ, այս տարածություններն ընկալված են իբրև հայ ազգաբնակչությանը պատկանող. բանից անտեղյակ մարդու մեջ վերստին կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե Ներքին և Վերին Քարթլին Հայոց աշխարհի անբաժանելի մասն են կազմել: Նման տեսակետի ռեալ արժեքի մասին վերն արդեն խոսել ենք: Իսկ այժմ մի պարագայի վրա ենք հրավիրում ձեր ուշադրությունը:

Եթե մենք միմյանց համադրենք հայկական և ադրբեջանական քարտեզները, չափազանց հետաքրքիր պատկեր կհառնի մեր աչքերի առջև. արևելքից Աղվանքի թագավորության, իսկ հարավից Հայկական թագավորության քաղաքական սահմանները հասնում են ընդհուպ մինչև Թիֆլիս: Նման կացություն է եղել 600 կամ 1000 տարվա ընթացքում: Քարթլի (Իվերիայի) թագավորությունն այս հազարամյակի ընթացքում միայն Միջին Քարթլին, Սամցխեն և Աջարիան է ներառել իր մեջ և նրա բնակչությունն էլ այսպիսի կապանքների մեջ է եղել շրջափակված: Բնականաբար հարց է ծագում՝ ի՞նչ պոտենցիալի տեր պետք է լիներ այս մի բուռ ժողովուրդը, որ դարերի ընթացքում կարողանար պաշտպանվել նման հզոր հարևաններից, իսկ հետագայում ոչ միայն նախկին Աղվանքի տարածքը և նախկին Հայոց թագավորության տարածքի մեծ մասը, այլ նաև, փաստորեն, իր տիրապետության տակ գտնվող ամբողջ Կովկասը միավորեր: Ադրբեջանական կամ հայկական քաղաքական–աշխարհագրական տեսակետին համամիտ լինելու դեպքում սրան պատասխանելու հարցում անչափ շատ կոժժվարանանք:

Իսկ ինչպիսի՞ն է եղել կացությունն իրականում:

Հին վրացական ավանդույթի համաձայն մ.թ.ա. IV–III դդ. Քարթլի (Իվերիայի) հարավային սահմանն անցնում էր Կուր գետի և Արաքսի ջրբաժան լեռնաշղթայով՝ սկսած Բուրդուզ գետի ակունքներից (այժմյան

Չեգաչայը, Ադրբ. ԽՍՀ) մինչև Տայքի գավառը: Որ իրոք այսպես է եղել, վկայում է Ստրաբոնը (մ.թ.ա. I դարի վերջ — մ.թ. I դարի սկիզբ): Վերջինս պատմում է, որ մ.թ.ա. 190 թ. Հայաստանը, որ մինչ այդ փոքրիկ երկիր էր, ընդարձակեցին Անտիոքոսի հզոր զորավարները՝ Արտաքսը և Ջարիադը, որոնք հարևան ժողովուրդներից կտրեցին նրանց տարածքների մի մասը, հատկապես՝ «իվերներից Պարխարի փեշերը, Խորգենը և Գոգարենը, որը Կուրի մյուս կողմն է»: Ստրաբոնյան «Գոգարենն», որը նրա պարզորոշ մատնանշումով, իվերցիներին պատկանող կամ վրացական երկիր է եղել, նույն այդ հին հայկական աղբյուրների «Գուգարքն» է: Այս Գուգարքի տարածքը ճշգրտում է հայոց պատմիչ Մովսես Խորենացին (V դ.), ըստ նրա՝ դա ճիշտ և ճիշտ Ներքին Քարթլին է, Ջավախքից մինչև Խունան, իսկ հարավից՝ մինչև Կուր–Արաքսի ջրբաժան լեռնաշղթան: Այս երկրի բնիկ բնակչությանը՝ գուգարներին, որոնց այս հայ պատմիչը բնութագրում է իբրև «մեծ և հզոր ցեղ», նրա իսկ ցուցումով վրացիներ են համարում նաև ուրիշ հայ պատմիչներ:

Ինչպես երևում է գուգարները կամ գոգարները Քարթլիի ցեղերից են եղել և ապրել են անմիջականորեն հայերի հարևանությամբ: Սույնը հաստատող փաստը Բամբակի լեռնաշղթայում, Դեբեդի ակունքներում (Կիրովականի շրջան, Հայկ. ԽՍՀ) Կուր–Արաքսի ավազանների ջրաբաժան լեռնաշղթայի ստորոտում մինչև վերջին ժամանակներս գոյություն ունեցող Գոգարան գյուղն է՝ անխաբ վկան հին Հայկական թագավորության սահմանին կից գուգար–գուգարցիների վրացական ցեղի անմիջական հարևանի: Այսօր այդ գյուղը Գուգարք է կոչվում:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ոչ միայն վրացական պատմական աղբյուրը, այլև հունական ու հայկական աղբյուրները միաձայն հավաստում են, որ մ.թ.ա. III դարում Քարթլի և Հայաստանի սահմանն անցնում էր Կուր–Արաքսի ջրաբաժան լեռնաշղթայով և, որ այդ լեռնաշղթայից հյուսիս վրաց ազգաբնակչություն էր ապրում:

Քարթլի (Իվերիայի) թագավորության կազմավորման ժամանակ ճորովա գետի ամբողջ ավազանն էլ նրա կազմի մեջ էր մտնում: Սա նախ և առաջ վկայում է հույն պատմիչի՝ Մեգասթենեսի (մ.թ.ա. III դարի սկիզբ) տեղեկությունն այն մասին, որ նրա ժամանակ իվերցիները ապրում էին Սև ծովի հարավարևելյան կողմում: Այս ցուցումից կարելի է եզրակացնել, որ Քարթլի (Իվերիայի) թագավորությունը մ.թ.ա. III դարի սկզբում անցնում էր Սև ծովով և, այնուամենայնիվ, ճորովա լեռնաշղ-

թան ենթադրվում էր նրա սահմաններում: Որ դա այդպես է եղել, հավաստում է նույն այդ ստորաբոնի վերոբերյալ ցուցումը, որ մինչև մ.թ.ա. II դարը իվերցիներին են պատկանել ոչ միայն Գոգարենը, այլ նաև «Պարխարի լեռնափեշերն ու հորզենը»: Պարխարյան լեռնաշղթան նույն այժմյան Պոնտոսի լեռնաշղթան է, որը Լազիստանը բաժանում է ճորոխի կիրճից: Դեռևս հայ պատմաբան Ն. Աղոնցը նշում էր, որ այդ տեղեկությամբ նկատի են առնվում միջին դարերի Տայքի և Սպերի երկրները, որոնք ճորոխի ավազանի վերին (հարավային) մասն էին կազմում:

Յետևաբար՝ մ.թ.ա. 190 թ. հայերը վերոհիշյալ այս երկրները, ինչպես Գոգարենը (Ներքին Քարթլին), Քարթլիի (Իվերիայի) թագավորությունից են սեփականել: Բայց սա, ինչ ասել կուզի, բոլորովին չի նշանակում, որ այնուհետ, վեց հարյուրամյակի ընթացքում, նրանք Չայկական թագավորության անբաժանելի մասն են կազմել: Ապոլոդորեսի (մ.թ.ա. 140) ցուցումով Իվերիայի և Չայաստանի միջև եղած սահմանն անցնում է Արաքս գետով, որ բացահայտ վկայությունն է այն բանի, որ մ.թ.ա. II դարի կեսերին Քարթլիի (Իվերիայի) թագավորությունը ոչ միայն իրեն է վերադարձրել հայերի կողմից գրավված իր հիմնական գավառները, այլև իր սահմաններն ավելի է ընդարձակել դեպի հարավ՝ մինչև Արաքս գետը (հավանաբար նկատի է առնվում նրա վերին հոսանքը):

Ստրաբոնի ժամանակների համար էլ նորից մ.թ.ա. II դարի սկզբի դրությունն է, բայց շատ շուտով իրավիճակը կրկին փոխվում է:

Մեր թվարկության I-II դարերը Քարթլիի (Իվերիայի) թագավորության հզորացման շարժանն է: Հռոմեացի պատմիչների՝ Դիոն Կասիուսի և Տակիտուսի ցուցումներով՝ սկսած մ.թ.ա. 35 թվականից մինչև 50-ական թվականները Չայկական թագավորությունը Իվերիայի թագաժառանգներն էին կառավարում: Տակիտուսն ուղղակի նշում է, որ հռոմեացիների օժանդակությամբ Իվերիայի արքա Փարսմանը Չայաստանից «պարթևներին վտարելուց հետո ինքը տվեց այն (Չայաստանը) Միհրդատին»՝ իր հարազատ եղբորը:

Մ.թ. 60 թ. հռոմեացիները Չայաստանում վերականգնեցին թագավորությունը և գահ բարձրացրին հայ թագաժառանգ Տիգրանին: Ինչպես պատմում է նույն Տակիտուսը, «որպեսզի Տիգրանի համար հեշտ լիներ գահը պահպանել, Չայաստանի որոշ կողմերին, անկախ այն բանից՝ ում հողերին էին հարևան դրանք, հրամայեցին հնազանդվել Փարսմանին» և Չայաստանին հարևան ուրիշ հարստություններին:

Բոլոր վերոասացյալները կասկած չեն թողնում, որ այդ ժամանակ, այսինքն՝ մեր թվարկության I դարի 30-60-ական թվականներին Քարթլիի (Իվերիայի) թագավորությունը, եթե ոչ ավելին, ապա գոնե իր նախնական (մ.թ.ա. IV-III դդ.) սահմաններում պետք է ենթադրենք:

Պլինիոսի (I դ. 70-ական թթ.) տեղեկությունների համաձայն՝ Իվերիան, որի մեջ մտնում էր Տրիարի-Թրիալեթի և Տասի-Տաշիրի կամ նույն Ներքին Քարթլիի գավառը մեզ արդեն քաջահայտ սահմաններում, տարածությամբ ընդարձակվում է մինչև Պարիսկեդրի կամ նույն ստրաբոնյան Պարխարյան լեռնաշղթան: Սա վկայում է, որ ճորոխի ամբողջ ավազանը վերստին Քարթլիի (Իվերիայի) թագավորության սահմաններում է: Պլինիոսն ավելի է ճշգրտում իր ցուցումները, երբ այդ տարածքը «մեսիսերի հողեր» է անվանում:

II դարի առաջին կեսին Իվերիայի քաղաքական աշխարհագրությունը, փաստորեն, մնում է անփոփոխ: Ըստ Պլուտարքոսի (120 թ.) Կուրի վերին հոսանքը գտնվում է Իվերիայում, ուստի պետք է ենթադրել, որ Չայաստանի հետ պետական սահմանն անցնում էր Կուրի և Արաքսի ավազանների ջրաբաժանով: Նույն պատմիչի տեղեկությամբ՝ «Իվերների երկիրը տարածվում է մինչև Մոսխինյան լեռները և Ելքսինյան Պոնտոս»: Այսպիսով՝ պարզ է, որ Պլուտարքոսի ժամանակ Քարթլիի (Իվերիայի) թագավորությունը հասնում էր մինչև Սև ծով, որը հաստատում է նաև Արիանոսը (131 թ.): Դա սահմանային գոտին է, որն ընդգրկում է Աջարիան և նրան հարող թուրքական Լազիստանի մի մասը: Իսկ Մոսխինյան լեռները՝ ճորոխի և Կուրի ջրաբաժան լեռնաշղթաների համակարգը վերին հոսանքներում՝ մի կողմից, Եփրատը և Արաքսը՝ մյուս կողմից, Մեսիսեթը, այսինքն՝ Քարթլիի (Իվերիայի) թագավորության հարավը, բաժանում էին Չայաստանը:

Այսպիսով՝ Պլուտարքոսի վերոհիշյալ տվյալները կասկած չեն թողնում, որ II դարի առաջին կեսին Քարթլիի (Իվերիայի) թագավորությունը մնում էր տարածությամբ պատմականորեն ձևավորված սահմաններում:

Նույնն է մատնանշում նաև Դիոն Կասիոսը, որ 141-144 թթ., «երբ Փարսման Իվերցին կնոջ հետ միասին Հռոմ եկավ, իմպերատորը ընդարձակեց նրա տիրույթները»: Եթե հաշվի առնենք այն, որ Փարսման 2-րդի օրոք Քարթլիի (Իվերիայի) թագավորությունը այնքան հզոր պետություն էր, որ նույնիսկ Հռոմին չէր ենթարկվում, ապա կարելի է պնդել,

որ Քարթլիի (Իվերիայի) արքան այդ ժամանակ էլ ոչ միայն իր հիմնական վրացական հողերին էր տիրում, այլև իշխանությունը տարածում էր նաև ավելի ընդարձակ տարածությունների վրա:

Եթե ենթադրենք, որ Կլավդիոս Պտղոմեոսի բոլոր տեղեկություններն իր ժամանակի են (որը կասկածելի է), ուրեմն՝ պետք է հավատանք, որ II դարի վերջին երրորդում Քարթլիի (Իվերիայի) թագավորությունն իր նշանակալից մասը նորից կորցրել է. մասնավորապես՝ Տայքը և Սպերը կրկին պատկանել են Չայաստանին, բայց Կղարջը մնացել է Իվերիայի սահմաններում, քանզի հույն աշխարհագետը «Արտանոխսա քաղաքը» կամ Արտանուջը՝ Կղարջի կենտրոնը, Քարթլիի (Իվերիայի) թագավորության քաղաքների շարքում է անվանում: Չայաստանին պատկանել է Ներքին Քարթլին (Գոգարենը):

III դարի համար մենք համարյա ոչ մի տեղեկություն չունենք, եթե չհաշվենք Ասինիոս Կվադրատի ցուցմունքը, որը բացահայտորեն կրկնում է Պտղոմեոսի համապատասխան տեղեկությունն այն մասին, որ Գոգարենը (Ներքին Քարթլին) Չայաստանի մասն է և, նմանապես, Սուլիցի մատնանշումը, որ «Կուր գետը Արմենիայի և Իբերիայի սահմանն է կազմում»: Եթե այս տեղեկությունն ստույգ է (որը ինչպես կարծում են կասկածելի է), այստեղ, ինչ ասել կուզի, Կուրի ինչ-որ մի փոքրիկ մասը պետք է ենթադրվի, մասնավորապես՝ Ռուսթավի-Ղարայի դաշտի ներքև, քանի որ Դիոն Կասիոսի (III դարի առաջին երրորդ) ցուցումով նրա ժամանակ «իբերները բնակվում էին Կիրոսի (այսինքն՝ Կուրի) երկու ափերին էլ»:

IV դարի առաջին կեսին, հայկական «Աշխարհացոյցի» համաձայն, ինչպես արդեն գիտենք, ամբողջ հարավային Վրաստանը (գավառները՝ Սպերը, Տայքը, Կղարջը, Արտահանը, Ջավախքը, Ներքին Քարթլին) հայկական թագավորության սահմաններում է, բայց նույն այդ դարի կեսերին վերոհիշյալ բոլոր մարզերը, Սպերից ու Տայքից բացի, վերստին միացան Քարթլիի թագավորությանը և Չայաստանի հետ պետական սահմանը, «Քարթլիս ցխովրեբայի» համաձայն, կրկին անցնում է Կուր-Արաքսի ջրաբաժան լեռնաշղթայով: Հին վրացական աղբյուրի այս տեղեկությունը հաստատում են V դարի հայ պատմիչներ Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին:

Փավստոս Բուզանդը պատմում է, որ IV դարի կեսերին Գուգարքի բղեշխը (Ներքին Քարթլիի կառավարիչը) ապստամբեց Չայոց ար-

քայի դեմ և, ինչպես ասում է՝ միացավ Քարթլիի (Իվերիայի) թագավորությանը: Իսկապես՝ Մովսես Խորենացին Վրաց առաջին քրիստոնյա թագավորին՝ Միրիանին, որը թագավորել է IV դարի 30-60-ական թվականներին, «իվերցիների առաջնորդ և գուգարցիների բղեշխ» է կոչում. սա մատնանշում է, որ Ներքին Քարթլին այն ժամանակ իվերայի մասն է եղել:

Փավստոս Բուզանդի երկրորդ տեղեկությամբ՝ IV դարի 70-ական թվականներին Չայոց զորավար «Մուշեղը հարձակվում է իվերցիների թագավորի վրա... պարտության է մատնում նրան, հնազանդեցնում Իվերիայի ամբողջ երկիրը... Գուգարքի բղեշխին, որը առաջ Չայոց արքային էր ենթարկվում, գերում է և գլխատում... Գրավում է Չայաստանի և Քարթլիի միջև ընկած տարածքը մինչև հին սահմանը կամ մինչև Կուր մեծ գետը»: Եթե ակնհայտորեն չափազանցված այս տեղեկությունն ինչ-որ չափով համապատասխանում է իրականությանը, ուրեմն՝ Գուգարքի կամ Ներքին Քարթլիի գրավումը հայերի կողմից ժամանակավոր է եղել և 387 թ., ինչպես հայտնի է, այս գավառը վերստին և վերջնականապես միանում է Քարթլիի (Իվերիայի) թագավորությանը:

Հատկանշական է և այն, որ հիմնվելով Ագաթանգեղոսի վրա, որը IV դարի առաջին կեսի իրադարձություններն և հաղորդում, Մովսես Խորենացին պատմում է, որ Քարթլիի լուսավորիչ Նինոն քրիստոնյա է դարձրել Իվերիայի մարզերը՝ «սկսած Կղարջից» մինչև Կովկասյան լեռնաշղթան...

Այսպիսով՝ արդեն IV դարում Կղարջը կրկին Քարթլիի (Իվերիայի) թագավորության սահմաններում է, որը հաստատում է նաև «Քարթլիս ցխովրեբան», երբ հաղորդում է, որ Միհրդատ թագավորը Կղարջում՝ Թուխարիսի բերդամրոցում, եկեղեցի է կառուցում, նշանակում քահանաներ և Կղարջի ազգբնակչությունը իբրև համայնք նվիրում է նրանց:

Այսպիսով՝ գոյություն ունեցող աղբյուրների հիման վրա մենք համառոտակի քննարկեցինք պատմական Վրաստանի հարավային գավառների (Ներքին Քարթլիից մինչև Շորոխի կիրճը) քաղաքական բախտ-ճակատագիրը յոթ հարյուրամյակի տևողությամբ: Կարծում ենք՝ պետք է համոզված լինենք, որ այս տարածքը, որ Ստրաբոնի վկայությամբ հենց են գլխից վրացիներին (իվերցիներին) է պատկանել, ինչպես քաղաքականորեն, այնպես էլ թքնիկորեն, ժամանակի այդ երկարատև հատվածում մի անգամ չէ, որ դարձել է հարևան Չայաստանի թագավո-

րության էքսպանսիայի օբյեկտը, որ միանգամայն բնական է այն ժամանակվա քաղաքական հարաբերությունների համար: Բայց նույն այդ աղբյուրները հիմք չեն տալիս՝ գործն այնպես ներկայացնելու, ասես ամբողջ վեց դարի ընթացքում վրացական այս տարածքները Հայաստանի անբաժանելի մասն են եղել: Այսքանով էլ անթույլատրելի է նման քարտեզի հրատարակումը, որին ծանոթանալու դեպքում գործին անտեղյակ մարդն անպայման այսպիսի տպավորություն կարող է ստանալ. գիտական առումով նպատակահարմար չէ: Նման քարտեզները ճիշտ պատկերացում չեն տալիս պատմական, քաղաքական թե էթնիկական-մշակութային երևույթների զարգացման դինամիկ պրոցեսների մասին, այսինքն՝ դրանք հակապատմական են:

Առավել ցավալի է, որ այս քարտեզները երիտասարդության համար իբրև դասագիրք են նախատեսված, քանի որ դրանք միայն սխալ տեղեկություններ կարող են մատակարարել սեփական ժողովրդի պատմության զարգացման մասին:

Հատկանշական է, որ նման տեղեկացման միայն վերոքննյալ քարտեզներում չի նկատվում: 1986 թ. «Խորհրդային գրող» հրատարակչությունը լույս ընծայեց X դարի հայ պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունը, որին կցված է պատմական երեք քարտեզ: Քարտեզում արտացոլված է «Հայաստանը և հարակից երկրները» 591–653, 701–862 և 862–953 թվականներին: Այստեղ մենք այլևս մանրամասն չենք անդրադառնում այդ քարտեզների քննությանը, բայց նշում ենք որոշ անճշտություններ: Այսպես օրինակ՝ առաջին քարտեզում Տաշիրը կրկին Հայաստանում է, թեև համապատասխան հիմք գոյություն չունի: Եթե ուրիշ ոչինչ չլինի էլ, իսկական «Աշխարհացոյցը», որ ճիշտ VII դարի առաջին կեսի հուշարձան է, Տաշիրը Իվերիայի գավառ է համարում: Առավել հետաքրքիրն այն է, որ ճանեթը (այժմյան Լազիստանը) Հայաստանի սահմաններ է մտցված, ինչը կատարյալ թյուրիմացություն է:

Երկրորդ քարտեզում, արդեն ամբողջ Անդրկովկասը, Արևմտյան Վրաստանից բացի, ներառված է Հայաստանի մեջ: Ճիշտ է, այստեղ արաբների կողմից Անդրկովկասը գրավելու հետևանքով ստեղծված արաբական պրովինցիան «Արմինիայի» սահմաններ են ներկայացված, որի մեջ, արաբների խալիֆայության վարչական բաժանման համաձայն, իբրև միմյանցից անկախ միավոր մտնում էին Արևելյան

Վրաստանը, Աղվանքը և հատկապես Հայաստանը, բայց այս քարտեզին նայողը անպայման այնպիսի տպավորություն կստանա, ասես Արևելյան Վրաստանը և Աղվանքը այդ ժամանակ Հայաստանի սահմանների մեջ էին մտնում:

Երրորդ քարտեզում «Վրացի Բագրատիոնների» թագավորությունն այնպես է բաժանված «Տայքի Բագրատիոնների» թագավորությունից, ասես դրանք տարբեր հարստությունների ներկայացուցիչներ են և այլն, և այլն:

Չենք կարծում, թե այսպիսի ճշմարտությունները կնպաստեն երկրի պատմության անաչառ իմացությանը:

Պատմական-քաղաքական աշխարհագրությունը պատմագիտության ամենադեղինկատ բնագավառներից է, որը, ճիշտ է, կարող է հարյուրավոր և հազարավոր տարիների վաղեմության քաղաքական կացություն արտացոլել, բայց չնայած դրան, յուրաքանչյուր համապատասխան փաստ գետեղելու և քարտեզում ֆիքսելու ճամանակ շատ զգույշ վերաբերմունք է հնարավորին չափ ճշգրիտ փաստարկ է պահանջում: Այս կամ այն երկրի որևէ կոնկրետ ժամանակի քաղաքական կացության քարտեզում պատկերելու ժամանակ սկզբնաղբյուրների անբավարարության պատճառով, հաճախ պրոբլեմի այս կամ այն կողմը հնարավոր է վիճելի լինի, բայց նման դեպքում պետք է նկատի առնվի հարցի ամբողջ նախորդ և հաջորդ պատմությունը: Մի խոսքով՝ պատմական-քաղաքական աշխարհագրությունը շատ բարդ գիտություն է՝ հիմնված կոմպլեքս փաստարկների վրա: Նրա ճանաչողական արժեքը, ըստ էության, անցնում է գիտության սահմաններից, քանի որ նա, հասկանալի պատճառներով, ունի հասարակական պարտավորություն, ուստի, այդքանով, այդ փաստարկումը պետք է լինի ոչ միայն գերազանցապես անաչառ, այլ նաև՝ հատկապես՝ մաքուր մշակված:

Ահա թե ինչու պարզ է, որ հատուկ փաստարկումից դուրս վերոհիշյալ և նման քարտեզների տպագրությունը չի կարող արդարացված լինել:

Վրաց պատմագրությունը, սկսած Իվ. Ջավախիշվիլուց, ունի լավ ավանդույթ, որը հիմնվում է այն տեսակետի վրա, որ պատմական քարտեզներում հնարավորին չափ նույնական պետք է արտացոլվի քաղաքական երևույթների դինամիկ պրոցեսը: Ճիշտ այս տեսակետով է ստեղծված պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտու-

տի աշխարհագրության բաժնուն Վրաստանի պատմական ատլասի մակետը, որը ներառում է վաթսունից ավելի քարտեզներ: Չնայած որոշ բյուրոկրատական ընդդիմությունների՝ հույս պետք է ունենանք, որ նրա սպագրությունը շուտով կհաջողվի:

Այս հոդվածը կարելի է ավարտել աստվածաշնչյան մի խրատով, որի հիշեցումն ավելորդ չի լինի, քանի որ, ինչքան էլ փորձեն ուղղել պատմությունը, այնուամենայնիվ՝ «...արդարությունը հավերժ անմեռ է»:

*Պավիթ ՍՈՒՍԵԼԻՇՎԻԼԻ. Բոնոն ԱՐՎԵԼԱՉԵ  
«Լիտերատուրուլի Սաքաթվելո»  
13 մարտի. 1988 թ.*

## ՎՐԱՑԻՆԵՐԻ ԷԹՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ\*

Վրաց ժողովուրդը դարերի ընթացքում չափազանց բարդ ճանապարհ է անցել: Վրաց էթնոսի ձևավորման, զարգացման և իբրև ազգ կազմավորման պրոցեսը... սերտորեն կապված է եղել երկրի պատմության ներքին և արտաքին գործոնների հետ:

Պատմության ամբողջ ընթացքում վրաց էթնոսի կազմ են ռափանցել այլ էթնիկական միավորների ներկայացուցիչներ: Վրացիները, իրենց հերթին, մտել են ուրիշ էթնոսի կազմի մեջ: Այս երևույթը բնորոշ էր բոլոր ազգերին: Նման գործընթաց այսօր էլ շարունակվում է աշխարհի տարբեր ժողովուրդների մեջ, և գրեթե անհնար է այժմյան վրացիների մեջ որոշել՝ ով է հայի, լեզգու, չերքեզի, հույնի կամ այլոց սերունդ: Սա՝ պատմության խորքերում: Սակայն ուշ շրջանի պատմությունից (ուշ միջնադար) մնացած այս կարգի նյութերը չոչափելի են:

Հայտնի է, որ էթնիկական գործընթացներում մեծ դեր են խաղացել կրոնները: Կրոնն ի վիճակի էր բոլորովին տարբեր էթնոսների ներկայացուցիչներից կազմել մեկ էթնոս և, հակառակը, պատմական երկար ժամանակի ընթացքում կազմավորված մեկ ժողովրդին ցրել ու բաժանել:

Բազում արհավիրքներ տարած վրաց ժողովրդի հետ մնան շատ դեպքեր են կատարվել...

Որքան մահնեղականացած վրացիներ են պարսիկների ու արաբների կազմի մեջ մտել, բայց դրանից հետո էլ պահպանել են իրենց էթ-

\* Հոդվածի սկիզբը, ուր հիմնականում խոսքը վրացիների մահնեղականացման պատճառների մասին է, թարգմանել ենք մասնակի կրճատումներով, մնացյալը ներկայացնում ենք ամբողջությամբ (ծանոթ. թարգմանիչ):

նիկական դեմքը, իրենց վրացիությունը, միայն թե նոր հավատը թույլ չէր տալիս նրանց վրացի համարել: Լեզուն և սովորույթները, բարք-ավանդույթները պապենական էին, գիտեին իրենց վրացական ազգանունները: Ովքե՞ր էին դրանք. վրացի մահմեդականները, որոնք հայտնի են մեզ բուլղրիս՝ Աջարիայի, Սամցխե-Ջավախքի, Սահինգիլիոյի բնիկ վրացիները:

Վրաստանում ուրիշ կրոններ էլ տարածվեցին: Ասվածը հատկապես վերաբերում է քրիստոնեական կրոնի՝ միմյանց հանդեպ թշնամաբար տրամադրված ճյուղավորումներին: Ուղղափառները, կաթոլիկները, գրիգորյանները (միաբնակները) հո խստիվ կերպով անջրպետվել էին իրարից: Եղել է ժամանակ, երբ վրացիների մի մասը եվրոպացիների հետ մերձեցման և իրենց փրկության միջոցներից մեկն էլ համարել է կաթոլիկությունը, և վրացիների մեջ ի հայտ եկան այդ դավանանքի հետևորդներ: Սա տեղի ունեցավ նույն Չարավային Վրաստանում, որտեղ այլազգիների ճնշումն ավելի զգալի էր: Սամցխե-Ջավախքի ոչ քիչ թվով գյուղերի բնակիչներ կոլեկտիվ կերպով դարձան կաթոլիկներ: Կաթոլիկ վրացիներ երևան եկան վրացական որոշ քաղաքներում (Գորի, Քութայիս...): Վրաստանում այսպես կազմավորվեցին կաթոլիկ վրացիների դավանական խմբեր: Այլևայլ կրոններ (նաև՝ քրիստոնեության ճյուղ-կրոնները) խստորեն արգելում էին ամուսնանալ այլադավան մարդկանց հետ: Ուստի կտրվում էին իրարից վրացի ուղղափառները (թեև այս ճյուղը հիշյալ առումով ամենալայն էր), վրացի կաթոլիկները, վրացի մահմեդականները... Ի տարբերություն բուլղր վրացիների, վրացի կաթոլիկներն իրենց «ֆրանկներ» էին կոչում. այստեղից էլ երևում է, որ այս հավատը առաջինը Ֆրանսիայի ճանապարհով է մեր մեջ մտել: Հետագայում պատահեց այնպես, որ վրացի «ֆրանկների» մի մասին հայ համարեցին՝ նորից ու նորից խորամուխ չլինելով պատմության ու ազգի անցյալի մեջ: Վրացի կաթոլիկները հայ համարվեցին այն պատճառով, որ Հռոմի պապը նրանց հայ կաթոլիկ եկեղեցուց կախման մեջ դրեց: Իսկ հայ կաթոլիկ եկեղեցին իր առանձնահատկություններով տարբերվում էր բուլղր մնացյալներից: Այստեղ, ի տարբերություն Հռոմի կաթոլիկ եկեղեցու, գործավարությունը և պատարագ-աղոթքները տարվում էին ոչ թե լատիներեն, այլ հայոց լեզվով: Այսպես և այսպիսով վրացի կաթոլիկների մեջ աստիճանաբար երևան եկան հայկական առումներ: Սրա հետևությամբ ի հայտ եկան նաև հայկական արմատներ

րով նոր ազգանուններ (թեև մեծամասնությունը լավ հիշում էր իր հին վրացական ազգանունը): Ոմանք սկսեցին կասկածել վրացի կաթոլիկների վրացի լինելուն: Բարեբախտաբար, որոշ վրացի մահմեդականներ ի նման նրանք «այնկողմ» չդարձան:

Վրաստանում, պատմականորեն, հատկապես քաղաքներում, համարյա միշտ ապրել են մեր եղբայրական և բազմաչարչար հայերը: Նրանց թիվը Վրաստանում, պատմական դեպքերի բերումով, փոփոխվել է: Մեր երկիրը հայերի համար միշտ էլ ապաստարան է եղել: Իսկ հայերը, հայտնի է, որ ազգային դավանանքի՝ գրիգորյան-քրիստոնեական կրոնի հետևորդներ էին: Մեզանում բնակություն հաստատած այլևայլ կրոնների հետևորդներին ոչ ոք չի խանգարել սեփական օջախ ստեղծելու գործում: Վրացի թագավորները միշտ էլ հովանավորել են հայրենիքից գաղթած բարեկամ ժողովրդի թե՛ տարբեր խմբերին, թե՛ նրանց եկեղեցիներին:

Վրաստանաբնակ հայերը հավատարիմ են մնացել իրենց ազգային կրոնին: Իսկ կրոնը հայերի համար, պետականության չզոյության պայմաններում, ազգությունը պահպանելու միակ միջոցն էր: Այլ կրոնների հայրապետների նման հայ եկեղեցու պարագլուխները նույնպես ամենուր փորձում էին բազմացնել իրենց հոտը: Այսպես էր նաև Վրաստանում, առավել ևս, որ օգտվում էին վրացի արքաների բարյացակամությունից: Գրիգորյան եկեղեցին վրացի ուղղափառների որոշ մասին հավատափոխ արեց, ժողովրդի խոսքով՝ «հայացրեց»: Այս ասելու հիմք են տալիս XIX դարում բազմիցս անցկացված մարդահամարի նյութերը, ինչպես նաև՝ XVIII դ. դեմոգրաֆիական հուշարձանները: Օրինակներ բերելը մեզ հեռուն կտանի: Բազմաթիվ ազգանուններ, որոնց կրողներն անցյալում ուղղափառ վրացիներ են եղել, ուշ շրջանում իրենց գրիգորյան հավատի հետևորդներ և հայեր են ներկայացնում: Վրացի գրիգորյանները սկզբնական շրջանում բնակվել են Ներքին Քարթլիում, որ պարզորոշ երևում է XVIII դարի մարդահամարի նյութերից և որին անպայմանորեն նպաստում էր հայերի հետ սահմանակից լինելը, հարևանությունը: Հետագայում՝ XIX դարի սկզբից, գրիգորյան բազմաթիվ վրացիներ հայտնվում են Միջին Քարթլիում և Կախեթում: Վրացիների գրիգորյանացման-հայացման ուղիներից մեկն էլ վրացի արքաների կողմից էջմիածնի և Հաղպատի վանքերին գյուղացիներ նվիրելն էր, նաև այն հանգամանքը, որ մի շարք գրիգորյան իշխան ազնվականներ (Թու-



մանիշվիլի, Ղորղանաշվիլի, Բերութաշվիլի...) իրենց հպատակ գյուղացիներին բերում էին իրենց հավատին և տալիս իրենց ազգանունները: XIX դարում վրացի ուղղափառների հայ գրիգորյան դառնալու գործն արագացավ կապիտալիստական հարաբերությունների ծագման, առևտրի ու արհեստների մեջ ներգրավվելու և գրիգորյան քահանաների քարոզչական գործունեության հետևանքով:

Վրացի գրիգորյանների մեծամասնության ազգանունը վրացական արմատ ունի, մի մասինն էլ՝ հայկական: Հայկական նոր ազգանունների ստեղծումը հայ եկեղեցու ծրագրի մեջ էր մտնում: XIX դարի երկրորդ կեսից արդեն վրացի գրիգորյանների ազգանուններն աստիճանաբար սկսեցին հայկական վերջածանցներով (երբեմն էլ ռուսական՝ -ով) ձևակերպվել:

Վրացիների գրիգորյանականացում-հայացումը միայն XIX դարի երկույթ չէ. այդ պրոցեսը տեղի էր ունենում նաև ավելի վաղ: Սա լավ երևում է 1800 թվականի մի փաստաթղթից: (Տե՛ս «Վրաց օրենսդրության հուշարձաններ», հ. 8, Թբ., 1985, էջ 630-631):

Վրացիների հայացման մի օրինակ ևս:

Իլիա Ալխազիշվիլին Ջավախքի Սանդածեների մասին նյութը գրի է առել 1896 թ.: «Ալեքսի Սանդածեն՝ մեր տանտերը, այնքան հետաքրքիր մարդ էր, որ չեմ կարող ընթերցողին չծանոթացնել: Ես Ալեքսանդրը հայ է, իսկ նրա եղբայրը՝ Մոսեն, վրացի:

Մեր պապը վրացի էր, — բացատրեց Ալեքսին, — շատ էլ հարգված մարդ է եղել օսմանցիների՝ այստեղ տիրապետության ժամանակ: Պարզվում է, որ օսմանական ղեկավարության կողմից շատ անգամ էլ ուղարկվել է Վրաստանի թագավորների մոտ: Հետագայում, երբ մեր պապը այրիացել է, Ախալցխայում սիրահարվել է մի հայ աղջկա: Աղջիկը թեև հավանել է փեսացուին, բայց չի դավաճանել իր հավատին: Նա այսպիսի պայման է դրել. «Թե մեր զավակներին հայ ես կնքելու, կանուսնանամ, չէ՛ չեմ ամուսնանա»: Ողորմածը համաձայնել է: Մեր հորը իբրև հայ են կնքել: Երիտասարդական տարիներին թույլ տված սխալը մեծ վերք է մնացել մեր պապի սրտում, և խոր ծերության ժամանակ իր որդուն՝ իմ հորը, խնդրել է. «Որդի՛, չեմ ուզում՝ իմ հիշատակը կտրվի և իմ ճրագը հանգչի, քո առաջնեկին ինձ նվիրի, իբրև վրացի կնքեմ ու մեծացնեմ»: Հայրս էլ տղաներից մեկին՝ իմ եղբայր Մոսեին, զիջել է ողոր-

մածիկին: Հիմի մենք հայ ենք, իսկ Մոսեն՝ վրացի»: (Ի. Ալխազիշվիլի, Ջավախքի լեգենդներ, Թբ., 1978, էջ 43):

Այս ձևով հայացման մասին մատնանշում էր նաև ակադ. Ն. Բերծե-նիշվիլին:

Սանդածեների գրիգորյանական դառնալ-հայանալը լավ է արտացոլվում XIX դարի մարդահամարի նյութերում:

Ուղղափառ վրացիների որոշ մասի հայ-գրիգորյանական դառնալու և, համապատասխանաբար, ազգային պատկանելիությունը փոխելու փաստերն արձանագրված են նաև ժամանակակից խորհրդային ազգագրական գրականության մեջ: Նշանավոր կովկասագետ ազգագրագետ Նատալյա Վոլկովան Ներքին Քարթլիի Վարդիսուբանի գյուղի մասին գրում է. «При распросах выяснилось, что все живущие здесь армянские фамилии по происхождению грузины, переселившиеся около 100 лет тому назад из разных районов Грузии. Так, предками Микаэлянца и Минасиянца были грузины Тетрадзе из Дигоми, откуда они ушли три поколения тому назад. Предки Маркаровых считаются по происхождению из Гори. Их грузинская фамилия Менабдишвили».

Այդ նույն գյուղերում ապրող Սիմոնյանցների սկզբնական ազգանունը ըստ պրոֆ. Գ. Ջալաբաձեի պեղած նյութերի՝ եղել է Սիմոնիշվիլի (տե՛ս «Միջին Քարթլի», Թբ., 1987, էջ 17):

Վրացիների հայ գրիգորյան հավատին անցնելու բազմաթիվ օրինակներ են բերված Գ. Մայսուրաձեի «Հայ և վրաց ժողովուրդների փոխհարաբերությունները XII-XVIII դարերում» գրքում:

XIX դարում Քարթլիի և Կախեթի յուրաքանչյուր երկրորդ գյուղում իր եկեղեցին բացեց հայ-գրիգորյան հոգևորականությունը: Այսպես աստիճանաբար ստեղծվեցին ու կազմավորվեցին վրացի գրիգորյան խմբերը, որոնք հավատի պատճառով վերագրվեցին հայ էթնոսին: Առանց երկմտելու կարելի է ասել, որ վրացի գրիգորյանների վրաց էթնոսից առանձնանալու միակ պատճառը եղել է կրոնը: Լեզվով, մշակույթով, կենցաղով, սովորույթով, սերնդով ու նկարագրով վրացի գրիգորյանները վրացի են մնացել: Վրացի գրիգորյաններին ազգային սյունակում «հայ» են գրանցել, որը և ժառանգաբար անցել է նրանց սերունդներին նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո: Իսկ այսօր, ինչպես հայտնի է, կրոնն իր դիրքերը զիջել է, առավել ևս, ժողովրդի գիտակցությունը և ազգային առանձնահատկությունը որոշելու հարցերում:

Ինչ-որ ժամանակ գրիգորյանացած-հայացած վրացիները լավ գիտեին իրենց ազգանունների պատմությունը, և անցյալից սկսած առ այսօր նրանք վրաց ազգային ինքնագիտակցության կրողներն են: Իսկ ինքնագիտակցությունը ազգությունը որոշելու հարցում կարևորից էլ կարևոր է: Այսօր վրաց ազգաբնակչության որոշ մասը իր ծագումով, արյամբ, լեզվով, մշակույթով, կենցաղով, և, որ ավելի կարևոր է՝ հոգեկան կերտվածքով, հայ է գրանցված: Մեր հանրապետությունում ազգությունը փոխելու հարցի վրա էլ համապատասխան մարմինները տաբու են դրել: Մինչդեռ միութենական մյուս հանրապետություններում, որքան մեզ հայտնի է, այս հարցին այլ կերպ են նայում: Օրինակ՝ մարդահամարից մարդահամար Ռուսաստանում պակասում է մորդովիների և կարելիների թիվը: Պատճառն այն է, որ երկու էթնոսի ներկայացուցիչների զգալի մասը իրեն ռուս է համարում:

«Սոփիս ցխովրեբա» («Գյուղական կյանք») թերթում (18.11.87 թ.) տպագրվեց մի հոդված «Ազգանունը փոխելը եթե անհրաժեշտ է» վերնագրով (հեղինակներ՝ Ց. Խոմերիկի և Ն. Թվալթվաձե): Նրանում կարդում ենք. «Արդյոք կարելի՞ է ազգությունը փոխել: Ազգությունը չի փոխվում: Ոմանք կարծում են, թե ազգանունն ու ազգությունը փոխելու մոտիվ կարող են ծառայել բարքերը, սովորույթները կամ խոսակցական լեզուն: Այդպես չէ: Մարդ որտեղ էլ ուզում է բնակվելիս լինի կամ ինչ աղաթ-ծեսի էլ ուզում է հետևելիս լինի, այնուամենայնիվ, անփոփոխ ազգություն է ունենում»:

Մենք հնարավորություն ունեցանք զրուցելու վերոհիշյալ հոդվածի հեղինակներից մեկի՝ հնարապետական զագսի բյուրոյի արխիվի վարիչ Ց. Խոմերիկի հետ: Պարզվեց, որ ազգությունը փոխել չէ, բայց վերականգնել կարելի է՝ հիմնվելով պատմական փաստաթղթերի վրա: Բայց որքան մեզ հայտնի է, շատ վրացիներ, որոնք պաշտոնական փաստաթղթերում ազգությունը հայ է գրված, որքան էլ ջանացել են փոխել (կամ վերականգնել) ազգությունը, մեծ դիմադրության են հանդիպել համապատասխան մարմինների կողմից: Սրանք վախեցել են նացիոնալիզմի մեջ մեղադրվելուց:

Արդարությունը վերականգնելուն հետամուտ մարդկանց մեծ մասը չգիտի՝ գիտականորեն հիմնավորված տեղեկություններ որտեղից կարելի է վերցնել: Կարծում է՝ նք՝ այդ բանին հետամուտ մարդկանց համար արդարադատության նախարարությունն ինքը պաշտոնապես պետք է

դիմի այն գիտական կազմակերպություններին, որոնք իրավասու են այս հարցի պատասխանը տալու:

Նշված հարցն ունի նաև երկրորդ կողմ: Ցավոք, բոլոր գրիգորյան դարձած-հայացածների մասին չէ, որ պահպանվել են համապատասխան վավերագրեր, մյուս կողմից՝ նման փաստաթղթեր փնտրելը շատ ժամանակ և էներգիա կպահանջի: Կարծում ենք՝ այս պարագայում համապատասխան մարմինները պետք է հաշվի առնեն ազգագրական և լեզվաբանական (ստուգաբանական) գիտությունների տվյալները:

Այս մասին զրուցեցինք մի քանի նշանավոր իրավաբանների հետ: Պարզվեց, որ ազգությունը փոխելն արգելող օրենք կամ որևէ նորմատիվ ակտ գոյություն չունի: Գոյություն ունի միայն միութենական ղեկավարության 1974 թ. հրահանգը, որով արգելվում է ազգությունը փոխել: Բայց ահա թե ինչ է գրված 1987 թ. լույս տեսած «Всесоюзная перепись населения 1989 года» քրոշյուրում. «Согласно принципам советской этнографической науки принадлежность человека к той или иной нации или народности основывается на его самосознании. Именно поэтому в советских переписях учитывается та национальность и тот родной язык, которые указывает сам опрашиваемый»:

Այսինքն՝ մեր երկրի երկու տարբեր ինստանցիաներ՝ արդարության նախարարությունը և վիճակագրության պետական կոմիտեն, մի հարցի վերաբերյալ երկու իրարամերժ կանոնադրություն ունեն: Կարծում ենք, մեր երկրում այսօր տեղի ունեցող հրապարակայնության, դեմոկրատացման և վերափոխության գործընթացը պետք է անդրադառնա նաև հոդվածում առաջադրված հարցերին, իսկ քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերում (ծննդյան վկայական, անձնագիր) պետք է ղեկավարվեն համամիութենական մարդահամարի վերոբերյալ կողմնորոշիչ կանոնադրությամբ: Հաշվի պետք է առնեն վրաց ժողովրդի անբաժանելի մասի (մի ժամանակ հայ-գրիգորյան դավանական խմբի) ցանկությունը՝ փոխեն (կամ վերականգնեն) ազգությունը, որպեսզի վերադարձնեն հայրական-պապենական ազգությանը լույս իրավաբանական տեսակետից, որովհետև ն՝ պատմականորեն, և՛ այսօր նրանք վրաց ազգային օրգանիզմի անբաժանելի մասն են:

Վերջապես, չենք կարող չանդրադառնալ նաև վերջերս «Թբիլիսի» թերթում (21.12.87) տպագրված Ակ. Բաքրաձեի հոդվածին, ուր խոսվում էր մեր մայրաքաղաքի ազգային կազմի մասին: Միանգամայն իրավա-

XIX դարի երկրորդ կեսին վրացական ազգանունների մասնիկը կազմող -շվիլի վերջածանցը փոխարինվել է ռուսական -ով վերջածանցով (Կոշկելով-Կոշկելաշվիլի-Կոշկելի), որ սովորական երևույթ էր ռուսական կայսրության գաղութային ծայրագավառներում:

Ընդհանուր գծերով ահա այսպիսին են վրաց ազգի էթնոպատմության որոշ հարցերը:

*Ռուանդ ԹՈՓՉԻՇՎԻԼԻ  
«Լիտերատուրուլի Սաքարթվելո»  
22 հուլիսի, 1988 թ.*

## ԻՎԱՆԵ ԶԱՎԱԽԻՇՎԻԼՈՒ ԱՐԽԻՎԻՑ

Վրաց մեծ գիտնական Իվ. Զավախիշվիլին 1930-ական թվականներին Վրաց. ԽՍՀ ղեկավարությանն ուղարկել է նամակ, որտեղ իրեն հատուկ գիտական հիմնավորվածությամբ ներկայացրել է տարբեր ազգության ժողովուրդներին վրացական հողում բնակեցնելու պատմությունը: Այդ պատմությունն ընդգրկում է XIX դարը, և նրանում պարզորոշ ցույց է տրված նույն այդ ժամանակաշրջանի Վրաստանում բնիկ ազգաբնակչության էթնիկական կազմը արհեստականորեն խայտաբղետ դարձնելու պատկերը:

Այս նյութն անծանոթ է լայն հասարակայնությանը և այսօր տպագրվում է առաջին անգամ:

*Բոնդո Արվելաձե*

9. 4717, նո. 1 գործ. նո. 6, (էջ 82-111)

Ի. Զավախիշվիլու զեկուցումը՝ գրի առնված իր իսկ ձեռքով:

Ռուսաստանի կառավարության կողմից Վրաստանին անկախությունից զրկելուն պես ռուսական պետության ներկայացուցիչները, մի կողմից՝ հայ չինովնիկներին առաջ մղելով, մյուս կողմից՝ ռուս նախկին զինվորներին բնակեցնելով, վրաց ազգաբնակչության շահերը անարգելով և երկիրն ազգագրականորեն խայտաբղետ դարձնելով, փորձում էին կանխել վրացիների կողմից սպասվող քաղաքական շարժումը: Հայերին նրանք և՛ ապուլիտիկ ժողովուրդ էին համարում, և՛ իրենց հավատարիմը: Սկսած 1828 թվականից, երբ Ռուսաստանը Թուրքիայից իլեց վրացի մահմեդականներով բնակեցված Սամցխեն, Զավախքը, է-

րուշեթը, Պալակացիոն, բնակիչներին հոգեկան այնպիսի կացության մեջ դրեց, որ վրացի մահմեդականները գերադասեցին թողնել իրենց նախնիների բնակավայրերը և տեղափոխվել Թուրքիա: Գրաֆ Պասկևիչը վրացիներին Լիխթենբերգից այնտեղ փոխադրվելու իրավունք չտվեց, բայց նրանց փոխարեն բնակեցրեց Թուրքիայից տեղափոխված հայերից 3000-ին: Արհեստական այս միջոցով Մեսխեթում, որտեղ մինչև 1828 թվականը վրաց ազգաբնակչությունը 90 տոկոսից ավելի էր, ռուս չինովնիկների օգնությամբ 1832-ին արդեն հայերն էին մեծամասնություն կազմում:

Սկսած XIX դարի 60-ական թվականներից Ռուսաստանի քաղաքական շրջանները արդեն դիմում էին ամեն միջոցի, որպեսզի Անդրկովկասն ազգաբնակչությամբ ռուսանա: 1864 թ. Մ. Կատկովը այլևս չէր բավարարվում նախկին ռուս զինվորների վերաբնակեցումով և երագում էր նաև ռուսական կառավարության կողմից Անդրկովկասում այնպիսի պայմանների ստեղծման մասին, որ ոչ միայն քաղաքները, այլ նաև գյուղերն աստիճանաբար լցվեն ռուսներով: Հապա՝ ռուսական ազդեցությունն այնտեղ ինչպե՛ս կավելանար: «Как бы усилилось (русское) влияние в стране, если бы допущены были это условия необходимые для того, чтобы и села могли постепенно наполняться «русскими людьми», տե՛ս «Московские Ведомости», 1864 г. թիվ 168, կամ Собрание передовых статей «Московских Ведомостей» (1864 г., с. 467).

Դրան օժանդակող միջոցներից մեկը նա համարում էր ռուս ազնվականության բնակեցումը Կովկասում և, մասնավորապես, Սև ծովի ափամերձ շրջաններում (նույն տեղը):

Բայց այդ ժամանակ Ռուսաստանի կառավարությունը ռուսների բնակեցումով ջանում էր Լեհաստանը ռուսացնել, ահա թե ինչու ռուս քաղաքագետները համոզվեցին, որ այդքան ժողովուրդ չունեն՝ ամենուր ցրելու: Նույն այդ ժամանակներում հայ գործիչ Կանանովը Սև ծովի ափերը գաղութացնելու նպատակով Թուրքիայից Չեթունի հայերի տեղափոխության նախագիծն է ներկայացնում: Եվ քանի որ ռուս գաղութարարները քիչ էին, Կատկովը դրան հավանություն տվեց և քաղաքական ու տնտեսական առումով գտավ նպատակահարմար. «Հայերը մեր հավատարիմ դաշնակիցները կլինեն և իբրև վաճառականներ իրենց հետ փող էլ կբերեն մեզ» (նույն տեղը, էջ 500-502):

Անդրկովկասում հայերին բնակեցնելու ռուս ազդեցիկ սևհարյուրակային Կատկովի թույլտվությունից հետո կառավարության տեղական բարձրագույն ներկայացուցչությունն էլ հավանություն տվեց ու սկսեց բնակեցումը: Հայերի հետ միաժամանակ նրանք ձեռնամուխ եղան նաև գերմանացիների և էստոնացիների տեղափոխության գործին: Ռուսներ քիչ էին երևում: Ազատ հողատարածությունների բնակեցումը գուցե դեռ գաղութատիրություն չէր նշանակում, բայց դրանով վրացիները զրկվում էին ընդարձակվելու հնարավորությունից. հանգամանք, որ ռուս քաղաքագետներին դույզն-ինչ չէր անհանգստացնում:

Նույն Մ. Կատկովը 1867 թ. արդեն գոռում էր, թե Սև ծովի ափերում բոլորին բնակեցնում են՝ Փոքր Ասիայից, Ավստրիայից, Գերմանիայից, մինչդեռ ռուսներ չեն երևում... Կատկովը գաղութակալական գործը համարում էր ազգային-քաղաքական գործ և պահանջում էր ռուս գաղթականների ուժեղացում (տե՛ս «Московские Ведомости», 1867 г. թիվ 264 և 282, Собр. перед. стат. «Моск. Вед.», 1867, с. 687-688).

Վրաստանում հայերին բնակեցնելու քաղաքականության ոգեշնչողը և բոցաշունչ ու ճարպիկ իրականացնողը Ալ. և Գ. Խատիսովների հայրն էր՝ Դովի. Ստեփանի Խատիսովը. նա 1865-ից մինչև 1875 թ. Անդրկովկասում պետական գույքի և գյուղատնտեսության վարչության ազդեցիկ պաշտոնական անձ էր համարվում, 1875-1883 թթ. Կովկասի փոխարքայի մոտ արտակարգ լիազորությունների պաշտոնյա էր, իսկ 1885-1893 թթ. զբաղեցնում էր պետական գույքի վարչության պետի պաշտոնը: Նրա ժամանակ և նրա աջակցությամբ շատ հայեր բնակություն հաստատեցին Վրաստանում՝ Բորչալուում, Ջավախքում և Սև ծովի ափին: Նկատի ունենալով Սև ծովի ափի քաղաքական կարևորությունը և, որպեսզի այդ վայրն էլ հայերին տրվի, նա առաջ է քաշում երկու նկատառում. նախ՝ քանի որ այս երկիրը պետք է դառնա գյուղատնտեսական բարձրագույն կուլտուրաների օջախ, ապա այստեղ բնակվելու իրավունք պիտի տրվի այդպիսի կուլտուրաների գիտակին, երկրորդ՝ ռուսները բոլորովին այլ կլիմայի և միայն հացահատիկային կուլտուրաների են սովոր, ուստի այնտեղի տեմդից կկոտորվեն, մինչդեռ հայերն ու հոյները տեմդային վայրերին սովոր են, այս անկյունը կչորացնեն, կծաղկեցնեն, հետո միայն նաև ուրիշների, այսինքն՝ ռուսներին էլ կարելի է բնակեցնել: Նման փաստարկով և իր բարձր պաշտոնի օգնությամբ նա արեց այն ամենը, ինչ կարելի էր անել հայրենակիցներին

Վրաստանում բնակեցնելու համար: Ռուսական կառավարությունը վրացիներին համարում էր քաղաքականապես անվստահելի ժողովուրդ, նրանց բնակության ասպարեզի ընդլայնումը՝ վտանգավոր, բայց որ ԱՆ՝ դրկովկասի շրջանակներում հայերը կարող էին քաղաքական անկախության ձգտել, նրա մտքով չէր անցնում: Ահա թե ինչու հայ գաղթականների բնակեցումը Վրաստանում վտանգավոր չէր համարում, քանի վրաց ազգաբնակչության տոկոսը նվազում էր, միաժամանակ Վրաստանում Ռուսաստանի ամբողջականության, ինչպես նրանք էին կարծում, ամենահավատարիմ հպատակների քանակն ավելանում էր: Բայց, վերջիվերջո, հայերին տեղափոխելու կարծիքին հավանություն տված Մ. Կատկովն էլ տեսավ, որ դա սովորական ածպարարություն է և 1887 թ. արդեն գրում էր, որ եթե Սև ծովի ափին ռուսները կոչնչանան, մի՞թե նույնը չի պատահի գերմանացի, հայ և հույն գաղթականների հետ: Պարզ է՝ Ռուսաստանի քաղաքական կարծիքն այստեղ հաշվի չի առնված («Моск. Вед.» թիվ 13): Բայց գործն արդեն արված էր, և պարզ դարձավ, որ ուրիշների համար ազատ բնակավայր այստեղ գոյություն չունի: Այդ ժամանակ ոչ ոք չէր հիշում վրաց ժողովրդին: Իր նախնիների երկրում ապրելու ամենաառաջին իրավունքը թեև նրանք էր, բայց այդ մասին լսել ու հասկանալ չէին ուզում ոչ ռուսական կառավարությունը, ոչ էլ նրա հայ չինովնիկները. ոտնահարվում էին վրաց գյուղացիությանը կենսականորեն անհրաժեշտ տնտեսական շահերը. իր հայրենիքում՝ նույնիսկ Վրաստանում, բնակվելու ուղիները նրա առաջ փակված էին այն ժամանակ, երբ օտար երկրներից բերածներին և՛ հող էին հատկացնում, և՛ ամեն կարգի օգնություն ցույց տալիս:

Երբ խոսք բացեցին Անդրկովկաս ժողովուրդ տեղափոխելու մասին և սկսեցին նախնական քննարկումները, բոլորին պարզ դարձավ, որ Թուրքիայի կողմից ճնշված հայերին Վրաստանում բնակեցնելով՝ միայն իրենց հայրենակիցների ֆիզիկական գոյությունն ապահովելու խնդրով չէ, որ հետաքրքրվում էին հայ քաղաքագետները. նրանք ազգային-քաղաքական որոշակի ծրագիր ունեին՝ մեկ ամբողջական տարածք ստեղծելու նպատակով գաղթավայրեր ընտրել ցրված հայերի համար: Հայերը պահանջում էին բաժանել Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ախալքալաքի գավառները, որպեսզի դրանք միացնեն Գյումրիին և ստեղծեն Գյումրիի հայկական նահանգ: Այդ ժամանակ Կովկասի փոխարքան հայերի հովանավոր գրաֆ Վորոնցով-Դաշկովն էր և նրա կի-

նը. նրանց հավատարմատար «խորհրդատուն» էր ժողովրդի ամենամեծ վիրական զգացումների ջերմ ու քաղցրախոս արտահայտիչ Հովհ. Խատիսովի որդի Ալ. Խատիսովը, իսկ հայերի կյանքի սանձը դաշնակների ձեռքին էր: Վորոնցով-Դաշկովը հրաման արձակեց, որպեսզի քննարկման դրվի անջատվել-միավորվելու նախագիծն իրականացնելու հարցը: 1913 թ. նոյեմբերի 6-ին և դեկտեմբերի 18-ին հրավիրված արտահերթ նիստը, որտեղ հայերը 6 ներկայացուցիչ ունեին, իսկ վրացիները՝ միայն 2, Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի անջատումը աշխարհագրական և տնտեսական առումով ճանաչեց անկարելի: Թիֆլիսի նահանգական հատուկ խորհուրդը 1914 թ. հունվարի 24-ին հաստատեց այդ որոշումը: Նույն այդ տարիներին և նույն այդ հանձնաժողովն ու օրգանները Ախալքալաքի գավառի անջատումը և Գյումրիին միացումը նույն աշխարհագրական-տնտեսական անխախտ տեսակետների պատճառով միաձայն մերժեցին և ճանաչեցին անկարելի:

Այդ ժամանակ սկսվեց համաշխարհային պատերազմը. թուրքական ճակատում ռազմական գործողությունները հեշտացնելու համար Ռուսաստանի կառավարությունը դաշնակցականներին խորհուրդ տվեց թուրքահայերին ապստամբության հանել՝ խոստանալով Թուրքահայաստանի ազատագրում և Ռուսաստանի սահմաններում ինքնավարություն կամ անկախություն՝ Ռուսաստանի հովանավորության տակ: Հայ քաղաքագետներն ու դաշնակցականները Ռուսաստանի քաղաքական այս ֆանտոմ ընդունեցին իբրև անկեղծ խոստում և որոշ ժամանակ նույնիսկ իրականացրին ռուսական կառավարության խորհուրդը, բայց գործը հակառակ ընթացք ստացավ, և զայրացած թուրքերն սկսեցին կոտորել դաշնակցականների ու նրանց քաղաքագետների կողմից հիմարացված հայ ժողովրդին: Ով հասցրեց փախչել Անդրկովկաս, Պարսկաստան կամ այլուր, փրկվեց, բայց մեծաքանակ հայություն զոհ գնաց դաշնակցականների խելացնոր քաղաքականությանն ու թուրքերի վայրագությանը: Հայերին հիմարացնող ռուսական կառավարությունն այժմ էլ չէր ուզում հայ փախստականներին թողնել Անդրկովկասում, իսկ հետագայում, երբ ռուսական զորքը դարձյալ Թուրքիա թափանցեց, հայ փախստականներին ոչ միայն իրավունք չտվեցին վերադառնալ իրենց հայրենիքը, այլև ձեռնամուխ եղան Թուրքահայաստանում՝ Ալաշկերտի և Բասենի դաշտում, ռուս զինվորներ բնակեցնելու պլանի մշակմանը:

Ռուսաստանի հեղինակությունն ու ռուսական զորքերի նահանջը թուրքիային հնարավորություն ընձեռեցին խլված բոլոր շրջանները հետ վերցնել։ Ղարսի շրջանն էլ ձեռք գցեց և մոտեցավ Գյումրի քաղաքին։ Բայց Գերմանիայի պարտությունից հետո անօգ վիճակի մեջ ընկած թուրքիան դարձավ ֆրանս-անգլիացիների հպատակը։ Երբ անգլիացիների և նրանց դաշնակիցների օկուպացիոն զորքերը հայտնվեցին Ստամբուլում և ապա անդրկովկասյան հանրապետություններում, դաշնակցական Հայաստանի կառավարությունն ու քաղաքական շրջանները վերստին Մեծ Հայքը վերականգնելու հույսեր ունեցան։ Հատկանշական է, որ ճիշտ այդ ժամանակ՝ 1918 թ., Ստամբուլում տպագրվեց Հայաստանի (իբրև թե պատմական) ֆանտաստիկ մի քարտեզ, որտեղ Համայն Հայաստանի սահմանները ձգվում են Սև ծովից մինչև Կասպից ծով և... Միջերկրական ծովերը... Ըստ այդ քարտեզի՝ Հայաստանի կազմում են նաև Բաթումը, Ախալցխան, Մցխեթը, նույնիսկ Թիֆլիսը, մինչդեռ Վրաստանին հատկացված է մի փոքրիկ, նեղ շերտ։

Եւ այդ ժամանակ, նույն այդ Ստամբուլում վերոհիշյալ ֆանտաստիկ քարտեզի հետևողությամբ տպագրվեց համահայկական պետության մի նոր քարտեզ, որտեղ Հայաստանը ներկայացված է իբրև վիթխարի պետություն և գրեթե նույն սահմաններն է ընդգրկում։ Թուրքիայի մեծ մասը ներառված է նրանում՝ Տրապիզոնը, Օրդուն, ք. Կեսարիան, Ադանան, Եդեսիան, նաև Պարսկաստանի հյուսիսային մասը՝ Թավրիզ քաղաքով և Արդեբիլով։ Ֆանտաստիկ քարտեզի համեմատ այստեղ Վրաստանին շատ քիչ բան է զիջված՝ Սև ծովով սահմանը Բաթումի հարավից սկսում է Մախրիալի հյուսիսով, Իջերեթը Հայաստանին է, Ախալցխան՝ Վրաստանինը։ Ախալքալաքը Հայաստանի տարածքում է, որտեղից սահմանային գիծը ձգվում է դեպի հյուսիս և վրացական ու հայկական պետությունների միջև իբրև սահման է նշված։ Այնուհետև Հայաստանի սահմանն ընթանում է Կուրի երկարությամբ, և ք. Գյանջան էլ Հայաստանի սեփականությունն է։ Պարզ է, որ նոր Հայաստանի պետության համար այսօրինակ սահմաններ որոշելիս ազգազրական սկզբունքով չեն սահմանափակվել։ այս ծրագիրը ոչ էլ ռազմավարական տեսանկյունից է հիմնավորված, որովհետև այսպիսի Հայաստան, որ XI դարից հետո քաղաքականորեն գոյություն չուներ, երբեք չի եղել։ Կարելի է ասել՝ այն կազմողները թեկուզև ամենաանճանաչողախոհություն չեն ցուցաբերել։

Հայաստանի կառավարության պատվիրակությունը, այս ամենով հանդերձ, նմանօրինակ մի քարտեզ ներկայացրեց միջազգային կոնֆերանս, որպեսզի հայկական պետությունը հաստատվի այս սահմաններում։ Ֆանտաստիկ այդ քարտեզի դեմ պայքարելու համար թուրքական պատվիրակությանը մեծ ջանքեր գործադրելու հարկ չէրավ, քանզի նա վիճակագրական տեղեկություններով ապացուցեց, որ նույնիսկ մինչպատերազմյան թվաքանակի առումով այս հսկայածավալ պետությունում յուրաքանչյուր քառակուսի վերստի վրա 2-3 հոգուց ավելի հայ չի եղել։ Բոլորի համար պարզ դարձավ, որ հայերի պատվիրակության ներկայացրած քարտեզն ու վիճակագրական տվյալները կեղծ են, և Ֆրանսիայի, Անգլիայի ու Ամերիկայի ներկայացուցիչների աջքերում հայկական պատվիրակության ֆանտաստիկ պլանները կորցրին ամեն տեսակ վստահություն։ Հայ դաշնակցական կառավարության և ղեկ. կուսակցությունների ամբողջ այս տարօրինակ և անհավատալի կարծատեսության պատճառով վիթխարի Հայաստանի պլանը ձախողվեց և օճառափրփուրի պես ցնդեց։

Բայց մինչ գործը կհասներ համայն Հայաստանի այդ քմահաճ պլանի քննարկմանը, դաշնակ-հայերի կառավարությունը ձեռնամուխ եղավ իր քարտեզում արտացոլված պլանը գործնականորեն իրականացնելու պատրաստությանը։

Հայկական հանրապետությունը թուրքահայաստանից բացի, որ կորցրեց ձեռքից, Երևանի նահանգից բացի տիրություն էր անում նաև Ղարսի ամբողջ գավառին՝ Արդահան-Արդվիհնով հանդերձ։ Բայց ոչ էլ դրանով բավարարվեց։ Ռազմական գաղտնի նախապատրաստությունից հետո, համաձայնելով Անգլիայի օկուպացիոն բանակի ավագ գեներալ Ուոֆեի հետ, 1918 թ. դեկտեմբերի սկզբին հայ դաշնակցական կառավարությունն իր զորքերը մտցրեց Վրաստան և միաժամանակ արտաքին գործերի նախարարի անունից Վրաստանից վերջնագրի կարգով պահանջեց՝ հետ գնալ մինչև Քարթլիի սահմանը, քանի որ հայերը Քարթլի են համարում Գորիի գավառը. պարզ է, որ այս վերջնագրով նկատի էր առնվում նաև Թիֆլիսի դատարկումը, և այդպիսով այդ պահանջը վերոհիշյալ երկու քարտեզներից շատ ավելի ֆանտաստիկ էր. իբրև թե պատմական քարտեզի սահմանները վերականգնել էին փորձում։ Թուրքիայում պարտություն կրելուց հետո Վրաստանը զավթելու և սեփականելու հայ քաղաքագետների ախորժակը ոչ միայն չկո-

րավ, այլ, ընդհակառակը, ավելի բացվեց. այժմ էլ նրանք ուզում էին հին Հայաստանի իբրև թե պատմական սահմանների վերականգնումն իրականացնել Վրաստանի և վրաց ժողովրդի հաշվին: Հարևանների միջև այս անմիտ պատերազմն ու արյունահեղությունը Հայաստանին հաղթանակ չբերին, և դաշնակցական կառավարությունը կրկին բավարարվեց առաջվանով: Այսպիսով՝ ռազմական ուժերով իբրև թե Հայաստանի պատմական սահմանները վերականգնելու հնարավորության հույսն ի դերն ելավ:

Այլևայլ միջոցներով ու ուղիներով իրենց պլաններն իրականացնելու դաշնակցականների փորձը հետագայում էլ չի ընդհատվել. չնայած Վրաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո Բորչալու գավառի բնակչության մեջ կատարված հարցումով կրկին հաստատվեցին Վրացական հանրապետության շրջանակներում նրանց մնալու ցանկությունն ու աշխարհագրական–տնտեսական փաստարկ–շահերով թելադրված որոշումը, բայց հայ կառավարողները կարողացան իրականացնել Լոռու շրջանը Հայաստանին միացնելու իրենց ծրագիրը, որ վնաս էր վրաց ժողովրդի անասնապահական գործի շահերին...

1922 թ. հայկական նույն կառավարող շրջանների կողմից ներկայացվեց մի նոր նախագիծ, համաձայն որի Ջավախքի կամ Ախալքալաքի գավառի մեծագույն մասը պետք է միացվեր Բորչալուի գավառին և ստեղծվեր հայկական ընդհանուր վարչական միավոր, որպեսզի հայերի ազգային շահերը լեզվի, դպրոցի և տեղական վարչության կողմից ապահովված լիներ, թեև Բորչալուի գավառի և Ջավախքի միջև ընդհանուր ոչինչ չկա՝ ոչ աշխարհագրական, ոչ էլ տնտեսական առումով. նրանց միջև գոյություն ունեցող բարձր և անանցանելի սարերի պատճառով անհնար է նաև ֆիզիկական կապը: Պարզ է՝ այդ ծրագիրն էլ հիշյալ երկու գավառները Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության սահմաններից անջատելու և Հայաստանին միացնելու վարպետորեն մտածված առաջին քայլի նախագիծն էր, որին անպայմանորեն պետք է հետևեր նաև երկրորդը: Բավական է աչքի անցկացնել դաշնակցականների կազմած քարտեզները և պարզ կդառնա, որ այստեղ էլ, թեև ուրիշ ճանապարհով, պայքարն ընթանում է նրանց առաջվա նպատակներն իրականացնելու համար: ԽՍՀՄ ներքին գործերի կոմիսարիատը Ախալքալաքի և Բորչալուի գավառների բնակիչների

կարծիքների և ազգագրական–տնտեսական գործոնների պատճառով այդ ծրագրի իրականացումը համարեց անհնարին, ինչը նա 1/26 փետրվարի 1923 թ. ծանոթացրեց կամունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին՝ թիվ 291/1367: Կենտրոնական կոմիտեի կողմից հաստատվեց այդ որոշումը: Դրանից հետո հայերի՝ նույն շրջանների թելադրանքով առաջ քաշվեց Վրաստանի Ղարայա–Շիրաքի դաշտավայրը հայերով բնակեցնելու նախագիծը: Այս վայրում ոռոգիչ ջրանցք պիտի անցկացվեր, և հայերն աստեղ բամբակագործությամբ պետք է զբաղվեին, որը, նրանց խոսքերով, շատ նշանակալից և կարևոր է Ռուսաստանի մանվածքային արտադրության համար: Հատկանշական է, որ այս պարագայում էլ Հովի. Խատիսյանական փաստարկներ են առաջ քաշել, երբ նույն այդ դաշտերի ոռոգումը կհավասարվեր վրաց գյուղատնտեսական կուլտուրաների ամայացման. հայ քաղաքագետներն այս մասին չէին մտածում:

Հայերի այս նախագիծն իրականացնելու կատարյալ անհնարինության հաստատումը ոչ մի դժվարություն չէր ներկայացնում Վրաստանի հողագործության կոմիսարիատի համար և, այսպիսով, այս նախագիծն էլ մերժվեց: Բնորոշ է, որ Ֆր. Նանսենը ևս, Թիֆլիս ժամանելուն պես, իսկույններս այս հարցի մասին սկսեց խոսել և ուզում էր իմանալ, թե հնարավո՞ր է հայ գաղթականներին բնակեցնել Վրաստանի այս մարզում: Պարզ է, որ Ֆր. Նանսենն ու տեղացի հայ քաղաքագետները սուրբ Հոգու ներշնչանքով չէին հանգել միևնույն մտքին. այստեղ մենք գործ ունենք Հայաստանի համար արհեստականորեն քաղաքական տարածք ստեղծելու դաշնակցականների՝ վերոհիշյալ հին քարտեզներում պատկերված պլանը կրկին իրականացնելու փորձի հետ:

Վերջում մի քանի խոսք Ջավախքին ինքնավարություն շնորհելու և բաժանելու անհրաժեշտության իբրև թե նոր նախագծի մասին: Ամբողջ վերոշարադրյալից պարզ է, թե ինչի համար և որտեղից է բխում նաև այս նախագիծը: Ո՛չ աշխարհագրական, ո՛չ էլ տնտեսական պայմանները չեն փոխվել: Հայերի ազգային շահերն այժմ հո միանգամայն ապահովված են: Հապա ինչո՞վ է պայմանավորված այս իբրև թե նոր պլանը, եթե ոչ այն նույն քաղաքական–տարածքային նպատակին հասնելու գործոնով: Այս ծրագրի իրականացումով միևնույն ժամանակ վրաց աշխատավոր ժողովրդի այն մասը, որն զբաղվում է անասնապահությամբ, իր գոյության վերջին պատառ հացից պետք է զրկվի, անասնապահու-

թյունն էլ Վրաստանում պետք է ավերվի ամբողջովին: Եթե նախկին Ռուսիայի տիրապետության ժամանակ վրաց ժողովրդի շահերը Վրաստանում ոտնատակ էր արվում, և Վրաստանում եղած ազատ հողը ռուս և հայ չինովնիկների քաղաքականության օգնությամբ միայն հայերն ու ռուսները ձեռք գցեցին, մի՞թե հիմա էլ պետք է վրաց ժողովրդի կենսական շահերը զոհաբերվեն հայ դաշնակցականների ազգային քաղաքական նախագծերի իրականացմանը: Սա այնքան անհավատալի է, որ համոզված եմ՝ ԽՍՀՄ կառավարությունն այս նախագիծն էլ կմերժի ճիշտ այնպես, ինչպես մերժվել են այդ նույն շրջաններից բխող վերոհիշյալ նմանատիպ նախագծերը:

*«Լիտերատուրուլի Սաքարթվելո»  
23 սեպտեմբերի, 1988 թ.*

## ՀՈՒՇԱՐՁԱՆՆ ՍՊԱՍՈՒՄ Է ԻՍԿԱԿԱՆ ՏԻՐՈՋԸ

Ներքին Քարթլիի տարածքում՝ այժմյան Մառնեուլիի շրջանի հարավարևմտյան կողմում, գտնվում է XII–XIII դդ. սահմանագծում կառուցված ճարտարապետական մի փառահեղ կոթող՝ Հուջաբը (նույն՝ Խուջաբ): Այո՛, Ներքին Քարթլիի տարածքում, քանզի հուշարձանը իր գոյության ընթացքում երբեք չի գտնվել Վրաստանի սահմաններից դուրս: Հուջաբի վանքը պաշտոնական տվյալներով այսօր էլ Վրաստանի տարածքում է, որ մի անգամ ևս հաստատվեց տեղում՝ վերջերս գործուղված հատուկ հանձնաժողովի կողմից. բոլոր ժամանակների և, ինչ խոսք, ժամանակակից քարտեզագրական տվյալներով հաստատվում է, որ Հուջաբի վանքահամալիրը Վրաստանի տարածքում է: Բայց, պետք է նշել և այն, որ «վոլյունտարիզմի» և «լճացման» անցողիկ ժամանակաշրջանում, երբ մեր իսկ անտարբերության և անուշադրության պատճառով վրաց ճարտարապետական փառահեղ համալիրը չկարողացանք խնամել, «անտեր եկեղեցուն սատանաները տեր դարձան»: Մենք կփորձենք համառոտակի ներկայացնել հիշյալ վանքահամալիրը և նրան առնչվող ցավալի պատմությունը:

Ի՞նչ զարմանալի, ի՞նչ հրաշալի տաճար է վեր խոյացել Բուլնիս գետի (Փուլադաուրի) մի փոքրիկ վտակի ափին, ծովի մակերևույթից 1100 մ բարձրությամբ, Ախկերպ գյուղից 1.5 կմ հեռավորության վրա:

1721 թ., Ներքին Քարթլիի մարդահամարի ժամանակ, Ներքին և Վերին Հուջաբում եղել է 23 ծուխ, բնակվելիս են եղել էլիարաշվիլիները:

Փուլադաուրիի կիրճի բնակչությունը հնուց ի վեր վրացական է եղել, ինչը վկայում են հենց այդ կիրճում մշակույթի հուշարձանների վրացական առատ արձանագրությունները, հենց թեկուզ XIII դարի



Ծուղրուղաշենի և Թևդործմինդայի արձանագրությունները: Սրանց հետ միասին է կառուցվել նաև Հուլաբի տաճարը: Բայց XVIII դարում այս կիրճի բախտը թարսվում է. 1717 և 1730 թթ. ասպատակում են լեզգիները, 1734–ին՝ օսմանցիները, այնուհետև՝ 1742, 1744, 1745 և 1747 թթ. ամբողջ կիրճը կրկին ավերում են լեզգիները: Մատենագրի ասելով՝ այնպես են ավերում այդ կիրճը, որ «Բուլնիսից և Սամծրիսից բացի ուրիշ չեն չկար»: Նույն դարում այս կիրճը մեծապես վնասվել է նաև երկրաշարժից:

Վերին Հուլաբի մոտ՝ Սաբա գյուղատեղում, XVIII դարի վերջին (Հեռակլ արքայի գլխավորությամբ) Շնողից տեղափոխվում են հայեր, որոնք հին եկեղեցուց, կամրջից և անտառից բացի ուրիշ ոչնչի այստեղ չեն հանդիպում: Դավիթ Մուսխելիշվիլին 1956–1958 թթ. գիտարշավի ժամանակ ծայնագրել է Ախկերպցի Ավետիք Կարապետի Աթաբեգյանցին, որի խոսքերով նրա պապը, որը XVIII դարի վերջին Շնողից տեղափոխվել է այստեղ, ամենաառաջին բնակիչներից մեկն է եղել: Ավելի ուշ հայեր են բնակվել նաև Ախկերպի հարևան գյուղերում: Ա՛յ, ճիշտ այս բնակիչներն են, որ հանդիպել են Հուլաբի վանքահամալիրին: Նոր բնակեցված վայրը անվանել են Ախկերպ, որ թուրքերեն նշանակում է Սպիտակ կամուրջ:

Հուլաբում պահպանվել են՝ գմբեթավոր տաճար, վաղմիջնադարյան եկեղեցի, միջնադարյան սեղանատուն, միջնադարյան գավիթ և այլ կառույցներ:

Վանքի շենքերը կառուցված են արհեստական տեղասների վրա, որով բնական է դառնում շրջապատի հետ զուգորդությունը: Դրանց թվում, կենտրոնական տեղասի վրա, կառուցված է խաչ–գմբեթավոր տիպի շինություն, որը վրաց ճարտարապետության պատմության մեջ XII–XIII դարերի սահմանագծում կազմավորված տաճարի տիպի լավագույն նմուշներից է: Առհասարակ, XII դարի վերջին քառորդին և XIII դարի առաջին կեսին է պատկանում Արևելյան Վրաստանի գմբեթավոր տաճարների մի մեծ խումբ, որն աչքի է ընկնում գեղարվեստական կատարյալ արժանիքներով: Այս խմբին են պատկանում նաև Բեթանիայի, Բվաթախի, Փիտարեթի, Ծուղրուղաշենի և այլ տաճարներ:

*Շարունակության մեջ հեղինակն անդրադառնում է հուլաբաճանախմբի նկարագրությանը, արտաքին և ներքին երեսապատմանը, շինանյութերի տեսականուն, ավերվածության չափերին և այլն: Այնուհետև գրում է, թե հարավային*

*դռան գլխից դիտավորյալ կերպով հանվել է ձվածն քարե թաղը. այն համարվում է կորած: Հավանաբար նրա վրա եղել են վիմագիր արձանագրություններ: Տաճարը ներսից նկարագրողված է եղել, որից մնացած փոքրիկ որմնանկարների վրա ինքը 1979 թ. վրացերեն արձանագրության մի քանի տառ է կարդացել: Հուլաբաճանի ուսումնասիրությամբ զբաղվել են դեռևս անցյալ դարում. այն նկարագրել է Դիմիտրի Բաքրաձեն (1875 թ.), իսկ ահա մեր դարի 10–ական թթ. Հուլաբի մասին տպագրվել է մի քանի հոդված, դրանց թվում՝ Վ. Պիզարևի (1913 թ.) աշխատությունը: Նույն այդ շրջանում Հուլաբի հուլաբաճանախմբի տարածքը պատկանելիս է եղել թավաղ Սելիքիշվիլուն: Մինչդեռ այդտեղ կանգնած եկեղեցին տեղի բնակիչները վերածել են ամասնոցի: Տարիներ շարունակ Հուլաբի վանքը լքված է եղել, բայց ահա գալիս է մի անչափ հավատացյալ կին, որը ոչ հնազետ էր, ոչ պատմաբան, այլ պարզապես մի հասարակ ռուս միանձնուհի՝ ծանր հիվանդ, և առողջանալու նպատակով հանգրվանում է այդ վայրերում: Նա մեծ պատվի է արժանանում նույնիսկ անհավատների կողմից, և տեղաբնիկները կամաց–կամաց վանքի ավերակներից հանում են իրենց անասունները: Այդ կինը որոշում է վերականգնել վանքը. 1910 թ. նա վերանորոգում է տաճարը, որ կարող էր պետք գալ կրոնական նպատակով: Լուրը հասնում է նույնիսկ սինոդին: Այդուհանդերձ,— գրում է հոդվածի հեղինակը,— նա չի կարողանում սկզբնական տեսքի բերել տաճարը: Անցել է 80 տարի, և հուլաբաճանի վիճակը շատ մտահոգիչ է: Ինչի՞ն վերագրել նման վերաբերմունքը:*

«Վերստին անդրադառնանք հուլաբաճանի գտնվելու վայրի հարցին: XVIII դարի երկրորդ կեսին, այնպես, ինչպես Ներքին Քարթլիի մեծագույն մասը, Բուլնիսի կիրճը ևս դատարկվեց տեղաբնիկներից. ի հայտ եկան բնակատեղիներ, գյուղատեղիներ (այս կիրճի մեծ մասն այսօր էլ դատարկ է և, հավանաբար, լավ կլինի՝ այստեղ վրացի ազգաբնակչություն բնակեցնենք): XIX դարում և, ընդհուպ մինչև XX դարի 20–ական թվականները, Ախկերպը և նրա շրջակայքը, մինչև Լավվար սարը, Բորչալուի գավառի կազմում է: Մեր հարյուրամյակի 20–30–ական թվականների բոլոր քարտեզներում էլ նմանապես Մառնեուլի շրջանի կազմում է: Այս շրջանում արդեն վճռված էր սահմանները որոշելու հարցը, բայց, ա՛յ թե՛ գարմանք, 40–ական թվականների քարտեզներում, դարձյալ անարդարացի կերպով, սահմանը բավականաչափ քաշվում է Վրաստանի տարածք: Հատկանշական է, որ սահմաններ գծելու սկզբունքը վերոհիշյալ հաստատված խախտված է: Չնայած դրան՝

Յուզաբի վանքը Վրաստանի շրջանակներում է և այստեղից մինչև պաշտոնական սահմանը ընդամենը մի հարյուր մետր է:

Այս ամենի պատճառով, մինչև 60-ական թվականները, ոչ ոք չի կասկածել հուշարձանի վրացական կարգավիճակի և գտնվելու վայրի վրա: Յուզաբի վանքը զետեղված է նաև 1959 թ. լույս տեսած «Պետության կողմից պահպանվող վրացական ԽՍՀ մշակույթի հուշարձանները» գրքում: Նմանապես զետեղված է վրացական հանրագիտարանի 2-րդ, 6-րդ և 11-րդ հատորներում, նմանապես՝ նույն հանրագիտարանի «Վրացական ԽՍՀ» հատուկ հատորում: Յուզաբը զետեղված է «Վրացական ԽՍՀ ատլասի» (1964) քարտեզներում: Յուզաբի վանքի մասին հետաքրքիր ուսումնասիրություններ և տեղեկություններ ունեն Լևան Մուսխելիշվիլին (1938), Ցիալա Գաբաշվիլին (1955) և ուրիշներ: Վերջերս Գերմանիայում լույս տեսավ Վախտանգ Տինցաձեի և Ռուսուդան Մեփիսաշվիլու «Վրաստան՝ աշխարհիկ կառույցներ և եկեղեցի-տաճարներ» (1987) գիրքը, որտեղ ներկայացված է նաև Յուզաբի վանքը:

Զնայած վերոհիշյալին՝ 60-ական թվականների սկզբին Յայաստանից որոշ անձինք հարձակում գործեցին Յուզաբի վանքի վրա. ամրացրին հայագիր հուշատախտակներ և Ախկերպ գյուղից հուշարձանի պահպանին էլ տարան, որին ահա 26 տարի է՝ Յայաստանի թունանյանի շրջանի մշակույթի բաժինն է աշխատավարձ տալիս: Ինչպես ասացին տեղում՝ ստեղծվել է հուշարձանի հայկական անձնագիր և վերականգնման պլան-նախագիծ: Յուզարձանի պահակ Ֆենյա Ավագյանի *սկետսուր-սկետսրայրը*, հրացանն առած, ոչ ոքի չի թողնում այն լուսանկարելու: Զգիտեմ՝ ում համար է վիճելի Յուզաբի վանքի տեղավայրը, բայց վրացիներիս համար այստեղ վիճելի ոչինչ չկա: Եիշտ մեր անտարբերության ու անուշադրության պատճառով 1986 թվականին Յայաստանում տպագրվեց Գառնիկ Շախկյանի «Լոռի. Պատմության քարակերտ էջերը», որտեղ Յուզաբի վանքը ներկայացված է թունանյանի շրջանում, իսկ հուշարձանը հայկական ճարտարապետության լավագույն նմուշ է համարված: Ինչպես գիտենք, առաջին անգամ է տպագրվում նման տեղեկատվություն: Ավելին՝ Յուզաբ անվանումը Խուճապ են դարձրել՝ տալով հայկական անուն: Իրականում՝ Յուզաբը, համաձայն Լևան Մուսխելիշվիլու, պետք է որ արաբական բառ լինի, որը էջիբ («Թագավորի դռնապան», «Զինվոր») է մշանակում: Թեև Յուզաբին (Խուջաբ) կապված պետք է լինի վրացական Խուջաբաձե ազգանունը:

Ինչպես նշեցինք վերը, Յուզաբի վանքը այժմ էլ Վրաստանի տարածքում է: Բանն այն է, որ Ախկերպ գյուղը հարավ-արևմուտքից շրջապատված է մրգատու այգիներով, որոնք շատ վաղուց են հիմնադրվել: Դենց այս այգիներում է գտնվում վանքահամալիրը, որից հետո սկսվում է բավականին խիտ անտառը: Մրգատու այգիները վերջանալուց հետո սկսվում է Յայկական ԽՍՀ սահմանը, որտեղ, իմիջիայլոց, նաև շլագբառում է տեղադրված: Այժմ էլ վեր կացել և մրգատու այգիների համար ինքնական «կտրել» են հարյուր մետր հրապարակ, ցցել են փայտե բերե և գոռում են, թե սահմանն այստեղով է անցնում: Բայց այս մրգատու այգին կտրելը (°) ուրիշ ձեռքի գործ է: Պարզվում է, որ Վրաստանում ապրող հայ ազգաբնակչությունը Յայաստանին «բարեկամական» ձեռք է մեկնել և ինքնական, ոչ պաշտոնական ձևով, զիջել է այն: Դա լավ է, բայց ուրիշի հաշվին չպիտի լինի: Ինչո՞վ կարող են արդարանալ հուշարձանների պահպանության Յայաստանի կազմակերպության պարզուխները: Մեր կարծիքով՝ սոսկ նրանով, որ ժամանակակից խոշորամասշտաբ քարտեզներում Յուզաբի վանքը նշված չէ: Հիմա դժվար է ասել՝ դա ինչի հետևանք է, բայց եթե նկատի առնենք, որ տեղագրական քարտեզներում նշված են նաև աննշան ավերակները, ապա՝ իսկապես զարմանալի է. թեկուզ նրա համար, որ վանքից մոտ 400 մետր հեռավորության վրա, արդեն Յայաստանի տարածքում, նշված են 20-30-ական թվականներին գոյություն ունեցած խոզերի ֆերմաների ավերակները, որոնք գրեթե 40 տարի այլևս չկան: Մի անգամ հաշվառված ավերակների հետքը անհիմն կերպով քարտեզից քարտեզ է անցնում: Ուրեմն՝ խոզերի ֆերմայի ավերակները պետք է սաղացնեն իբրև XII դարի հուշարձան: Իսկ, ընդհանրապես, բարեկամ Յայաստանում հանդիպող (Լոռի, Տաշիր) հին վրացական հուշարձանները մեզ համար առմիշտ կորսված են, բայց, Յուզաբի վանքահամալիրից բացի, մեր տարածքում ուրիշ հուշարձանների վիճակը նույնպես պետք է պարզաբանվի...

Վերջապես, հարց ենք տալիս՝ մինչև ե՞րբ են շարունակվելու եղբայրական Յայաստանի որոշ ներկայացուցիչների նման հարձակումները: Մեծ գրող և հասարակական գործիչ Իլիա Գավճավաձեն նման երևույթների պատճառով ժամանակին գրեց «Քարերի աղաղակը»: Այսօր, ավելի գիտակցության և լուսավորության պայմաններում, պրոֆ. Պարույր Մուրադյանի և նրա որոշ համախոհների հարձակումները դեռևս շարունակվում են: Մի-ով վերջացող Վրաստանի աշխարհագրա-

կան անունները հայտարարեցին հայկական, վրաց ճարտարապետական բազում նմուշներ վերագրեցին հայկական ճարտարապետությանը, պահպանված վրաց գրականության առաջին նմուշ «Շուշանիկի վկայաբանությունը» յուրացրին, Վրաստանի տարածքի գրեթե կեսը տեղադրեցին Հայաստանի պատմական քարտեզում, Ջավախքը հայտարարեցին հայկական շրջան և այլն... Իսկ մենք տեղական մամուլում արտահայտում ենք մեր վիշտը, բայց արժանի պատասխան չենք կարողանում տալ, ինչ է, թե ազգերի միջև բարեկամական հարաբերությունները չխաթարվեն, և սա բարեկամություն է:

Մինչդեռ մեկընդմիջտ խիստ սկզբունք է անհրաժեշտ, և որքան շուտ այն կիրառվի եղբայր ժողովրդի որոշ «գիտնականների» հանդեպ, գործի համար այնքան լավ...

Հուլյարի վանքն սպասում է օրինական տիրոջը:

*Կորա ԽԱՐԱԶԵ  
«Ախալզազրդա կոմունիստի»  
15 հոկտեմբերի, 1988 թ.*

## ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ «ՂԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ»

*Հողվածն սկսվում է Գոշի կյանքի ու գործունեության մասին դատողություններով: Այնուհետև. «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը կազմված է ընդարձակ՝ տասնմեկ գլխից բաղկացած նախադրությունից և երկու հիմնական մասից: Առաջին մասը ներկայացնում է Ասորա-հռոմեական եկեղեցական կանոնների հայերեն վերսիան՝ 124 հոդվածի ծավալով, երկրորդը՝ անծամբ Գոշի կողմից կազմված աշխարհական օրենքների գիրքը՝ 130 հոդվածի ծավալով»:*

.....

«Քանի որ գոյություն չունեն սեփական՝ հայկական գրավոր աշխարհիկ օրենսգիրք, այդ պատճառով Գոշը իր աշխարհական օրենքների գիրքը կազմելիս հիմնվում է քրիստոնյա ժողովուրդների օրենսգրքերի վրա: Նա գրում է. «...առնումք յամենայն ազգաց քրիստոնեից իբրև ի հարազատ եղբարց. գոր լուաք և տեսաք ի նոսա բարւոք դատաստանս՝ հաւաքեմք ի գիրս»: Կամ՝ «...Հույները այնպես, ինչպես վրացիները... միայն երեք դատավոր սահմանեցին, մենք էլ ընտրեցինք երեք թիվը, քանզի շատ դատավոր փնտրելը (ամենուր) դժվար է»:

«Վկայված տեղեկություններից շատ լավ երևում է, որ Գոշը հիմնականում օգտվել է վրաց աշխարհիկ օրենսգրքերից (Բագրատ 3-րդի՝), որ նա հունարեն և վրացերեն գրել-կարդալ է իմացել և, որ դատավորների թիվը՝ երեք, վրաց և հունական օրենսգրքերի նմանողությամբ է սահմանել»:

Հողվածագիրն անդրադառնում է XII դարի Հայաստանի կացությանը և, Ղատաստանագրքի տվյալներից ելնելով, փորձում համոզել ընթերցողին, թե իբր Գոշի գործունեության ժամանակ պատմական Հայաստանում որևէ տիրակալ գոյություն չի ունեցել, այլապես ինչո՞ւ պիտի հեռավոր Կիլիկիայի Ռուբեն իշխանին հիշատակեր, խաչենի մեկ-երկու կախյալ իշխաններին հիշատակեր, մյուսներին՝ ոչ: Ավելին, իբր երկայնաբազուկ եղբայրները Ձաքարյան դինաստիայի հիմնադիրներ չեն, ոչ էլ անկախ իշխաններ, այլապես Գոշը, որ նրանց հոգևոր հայրն էր, չէր գրի. «Այժմ մենք ո՛չ թագավոր ունենք, ո՛չ էլ իշխան»:

«Ինքնին պարզ է, որ եթե Մխիթար Գոշը երկայնաբազուկներին այսպես կոչված «Ձախարիդների» թե «Ձախարյանների» դինաստիայի հիմնադիր համարեր, չէր գրի, թե ընթերցողները իմ Ղատաստանագրքի հողվածները ծաղրի առարկա կդարձնեն, քանզի երկար ժամանակ է՝ այլևս հայկական թագավորություն չունենք. նրա վերականգմանը մենք այլևս չենք հասնի և այլն»:

«Այսպիսով, Գոշի Ղատաստանագրքի համաձայն՝ Հայաստանը վրացական պետության բաղկացուցիչ մասն է ներկայացնում և նա՝ Հայաստանը, Վրաստանի թագավորության կազմում ոչ մի քաղաքական ավտոնոմիայի նման բան չի ունեցել»:

«XII դարից դառնալով վրացական թագավորության բաղկացուցիչ մասը՝ Հայաստանում սոցիալական կառուցվածքը զարգացման բոլորովին այլ ընթացք է ստանում, իսկ այն մասը, որ գտնվում էր սելջուկների տիրապետության տակ սոցիալական այլ կառուցվածք ուներ: Եթե Հայաստանի այն մասում, որը գտնվում էր սելջուկների ազդեցության տակ, հետադիմական հասարակական կառուցվածք էր ձևավորվում, ապա Վրաստանի ազդեցության տակ գտնվող մասում՝ առաջադիմական հասարակական կառուցվածք: Սրա ամենախոսուն հաստատումը հենց Մ. Գոշի Ղատաստանագրքում ենք տեսնում: Նրանում վկայված (և ոչ ընդհանուր գծերով) սոցիալական տերմինները՝ իշխան, ազատ, զինվոր, շինական, ստուգորեն և ճշտիվ համընկնում են ժամանակի վրացական սոցիալական տերմիններին, ինչպիսիք են՝ դիդեբուլի, ազնաուր, մսախուրի, ղմազլեխի: Այս ամենը արժանահավատ ապացույցն են այն բանի, որ մեկ դարի ընթացքում, երբ Հայաստանը (նրա մեծ մասը) գտնվում էր Վրաստանի թագավորության կազմում (Մխիթար Գոշի Ղատաստանագիրքը կազմելու ժամանակ), այս երկիրը ոչ միայն քաղաքակա-

նորեն, այլև սոցիալապես Վրաստանի օրգանական մասն է դարձել, կամ Հայաստանում... Ֆեոդալիզմի վրացական տիպն է հաստատվել»:

«...Միանգամայն բնական է, որ Գոշը դասերի վճիռները սահմանելիս կախված է եղել վրացական հիմնական այն օրենսգրքից, որտեղ ճշտորեն սահմանված են եղել բոլոր դասերի վճիռները: Ո՞րն է եղել այդ հիմնական վրացական օրենսգիրքը (Բագրատ Երրորդի՞նը) հաստատորեն դժվար է ասել, որովհետև վրացական բոլոր օրենսգրքերը չէ, որ մեզ են հասել, բայց որ միայն և միայն հիմնական վրացական օրենսգրքին է հենվել Գոշը Ղատաստանագիրքը կազմելիս՝ անկասկած է հետևյալ պարագաների պատճառներով. 1. Հայաստանում երբեք չի եղել հիմնական գրավոր աշխարհիկ օրենսգիրք, որտեղ սահմանված լինեին դասերի կատարյալ վճիռները. 2. եթե նույնիսկ գոյություն ունենար նման օրենսգիրք, Գոշը, այդուհանդերձ, չէր կարող հիմնվել նրա վրա այն պատճառով, որ Գոշի ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալական դասերը Վրաստանի պետության սոցիալական դասերն էին և ոչ թե Հայաստանի պետական սոցիալական դասերը. 3. եթե Գոշի Ղատաստանագիրքը դասերի հիմնական վճիռները սահմանելիս չհիմնվեր հիմնական վրաց օրենսգրքերի վրա, ապա միանգամայն անհնարին կդառնար նրա կիրառելը և, պարզ է, այդ պատճառով էլ այն չէր կարող տարածվել Վրաստանի պետությունում և առաջին հերթին հենց այդ պետության հայկական մասում:

Այսպիսով, մեր աղբյուրի համաձայն՝ Վրաստանի և Հայաստանի քաղաքական և սոցիալական փոխհարաբերությունը այսպիսին է. 1. Հայաստանը (նրա մեծ մասը) քաղաքականորեն Վրաստանի պետության օրգանական մասն է, որ նշանակում է այն, որ Հայաստանում սեփական հայ քաղաքական տիրակալ՝ ի դեմս թագավորի, իշխանություն՝ ի դեմս իշխանի, գոյություն չի ունեցել: Հայաստանի մեծ-միակ լիիշխան տերը եղել է Վրաստանի թագավորը, որը Հայաստանում ունեցել է բացարձակապես այնպիսի քաղաքական իրավունքներ, ինչպիսին բուն Վրաստանում: 2. Հայաստանը սոցիալապես Վրաստանի սոցիալական կառուցվածքի օրգանական մասն է, որ նշանակում է այն, որ Հայաստանում գոյություն ունեցող, առանց բացառության, բոլոր սոցիալական կատեգորիաները՝ շինական, զինվոր, ազատ, իշխան, նմանապես՝ վաճառական և հոգևոր կոչումները Վրաստանի պետության այնպիսի սոցիալական կատեգորիաներ են, ինչպես բուն վրացական բոլոր սոցիա-

լական կատեգորիաները, այն առումով, որ բոլոր այս դարերի իրավունք-պարտականությունները Չայաստանում այնպես, ինչպես Վրաստանում, սահմանված են մեկ տիրակալի՝ Վրաստանի թագավորի կողմից և ձևակերպված են Վրաստանի հիմնական աշխարհիկ օրենսգրքում, որը պարտադիր է համայն Վրաստանի բոլոր՝ ազատ ազգերի հպատակության համար: 3. Վրաստանից Չայաստանի այսպիսի ամբողջական քաղաքական և սոցիալական կախվածությունը գոյություն է ունեցել XII դարում և XIII դարի քառորդում, ինչպես նաև XIV դարում: Չնայած այն բանին, որ XIII դարի առաջին կեսից մինչև XIV դարի սկիզբը Վրաստանի քաղաքական հզորությունը երերաց, բայց Վրաստանից Չայաստանի կախումը չթուլացավ, որը այն բանի համոզիչ ապացույցն է, որ Գոշի Դատաստանագրքի համաձայն հաստատված Չայաստանի՝ Վրաստանից ամբողջական քաղաքական և սոցիալական կախվածությունը չափազանց հիմնավորված և ամուր է եղել:

*Չուրաբ ՌԱՏԻԱՆԻ*  
«Մնաթրի», 1989 թ., թիվ 2, էջ 156–165

## ՎՐԱՑ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

*Ազգի գեղեցկությունը ես հաստատում եմ  
ազգային այբուբենով:*

Անատոլ ՖՐԱՆՍ

Վրաց այբուբենի հնագույն տեսակը՝ ասոմթավրուլին (գլխագիր) կամ մրգլովանին (բոլորագիր) հեթանոսական դարաշրջանի հուշարձան է: Այդ մասին խոսում է նրա հեթանոսական սիմվոլիկան, նրանում արտահայտված հեթանոսական աշխարհայեցությունը: Նշված եզրակացությունը, որ վերջին տարիների հետազոտությունների (Ռ. Պատարիձե) արդյունք է, համապատասխանում է վրաց հին պատմիչ Լեոնտի Մրովելու (XI դար) այն տեղեկությանը, համաձայն որի՝ արդեն մ.թ.ա. III դարում վրաց ազգային պետության հիմնադրի՝ Փառնավազ արքայի տիրապետության ժամանակ սկիզբ է դրվել վրաց գրականությանը, ստեղծվել է «վրաց դպրությունը»:

Վերոհիշյալը քաջ հայտնի է ընթերցողներին: Վրաց այբուբենի պատմության հետազոտումը հո վրաց հասարակության մեջ աշխույժ հետաքրքրություն է առաջացրել: Միաժամանակ հայտնի է և այն, որ հայ հին պատմագրության մեջ վրաց այբուբենի ծագման մասին տարբերվող վերսիա է պահպանվել: Ըստ այդ վերսիայի՝ վրաց այբուբենը մ.թ. V դարի սկզբում, այսինքն՝ քրիստոնեության ժամանակ՝ Քարթլիում Բակուրի թագավորության տարիներին, ստեղծվել է հայ նշանավոր դպիր և քրիստոնեական միսիոներ Մեսրոպ Մաշտոցի կողմից:

Վրաց այբուբենի ծագման մասին հայկական վերսիան իրականությանը չի համապատասխանում: Ինչպես նշեցինք վերը, վրաց ասոմթավրուլին արտահայտված է հեթանոսական աշխարհայեցու-

թյամբ: Մինչդեռ քրիստոնեական եկեղեցու գործչի ստեղծածը նման բան, պարզ է, չի կարող բովանդակել: Միաժամանակ, ինչպես սա բազմիցս՝ նշվել է մասնագիտական գրականության մեջ (Ա. Փերիխանյան, Թ. Գամդրելիժե), այբուբենի ստեղծումը չի հիմնվում տառերի գրաֆիկական պատկերի վրա: Այբուբենի ստեղծումը, ինչպես լեզվի գոյության արտահայտության փորձ, ենթադրում է լեզվաբանական հիմնավոր վերլուծություն, ինչի համար, բնական է, անհրաժեշտ է լեզվի խոր իմացություն: Մեսրոպ Մաշտոցը, համաձայն պատմական աղբյուրների, վրացերեն չի իմացել, ահա թե ինչու վրաց աստմթավրուլին (վրաց լեզվի այս կատարելապես ռացիոնալ համակարգը) նա իսկապես չէր կարող ստեղծել:

Ի վերջո, վրաց այբուբենի ծագման պատմության մասին հայ հին պատմագրության մեջ տարածված վերոհիշյալ վերսիային չի կարելի լուրջ նշանակություն տալ հենց նրա համար, որ մեր ծեռքում են մինչ-մաշտոցյան վրաց գրականության նմուշները: Այդպիսին է թեկուզև մ.թ. IV դարի կեսերին վերը վկայած Բակուր արքայի մեծ մոր՝ Սալոմե Ուժարմելի թագուհու կողմից կազմված վրացիների մեջ քրիստոնեություն տարածող Նինոյին նվիրված ժամանակակիցների հուշերի ժողովածուն, այսպես կոչված, ընդարձակ «Նինոյի վարքը» (Սալոմեի և «Նինոյի վարքի» ա՛յդ հնագույն խմբագրության մասին մանրամասն տե՛ս մեր մենագրությունը. «Վրաց վարքագրության աղբյուրագիտական ուսումնասիրության պրոբլեմները», Թբիլիսի, 1987, նմանապես՝ «Նինոյի վարքի» ընդարձակ խմբագրության բոլոր հատկանիշները» հոդվածում, «Մնաթրքի», 1987, թիվ 5):

Այսպիսով՝ չնայած անվիճելի է վրաց այբուբենի ծագման մասին հայկական վերսիայի սխալականությունը, այդուհանդերձ, հանուն վրաց այբուբենի պատմության մասին գիտական կոնցեպցիայի ավարտունության, անհրաժեշտ է պարզաբանել աղբյուրներում նման տեղեկության ի հայտ գալու պատճառները:

Այս հարցում վրացի մասնագետներն ընդունում են Իվ. Ջավախիշվիլու կարծիքը, համաձայն որի՝ Կորյունի «Վարք Մաշտոցի»-ում (V դարի առաջին կեսի պատմիչ Կորյունն առաջինն է հայ գրականության մեջ, որի երկում առկա է խնդրո առարկա տեղեկությունը) վրաց այբուբենի մասին պատմածը ուշ շրջանի տեղեկացիոգ հավելում է:

Իվ. Ջավախիշվիլին գտնում էր, որ Կորյունի երկի վրա ընդհանրապես առկա է վերասարքման հետքը: Որոշակիորեն՝ վրացական այբուբենի մասին նախնական խմբագրության մեջ տեղեկության չգոյությունը գիտնականին խորհել է տալիս V դարի երկրորդ կեսի հայ պատմիչ Ղազար Փարպեցու երկը, որտեղ, հենվելով Կորյունի վրա, հանգամանալից անդրադառնում է Մաշտոցի գործունեությանը՝ նրա կողմից հայկական այբուբենի ստեղծման մասին: Յենց այս փաստը Իվ. Ջավախիշվիլուն հիմք էր տալիս եթադրելու, որ «Վարք Մաշտոցի» արխիտիպում՝ հնագույն տարբերակում, վրաց այբուբենի մասին չպետք է խոսք եղած լիներ:

Բայց Ղազար Փարպեցու երկը մատնանշելն այս դեպքում դեռևս փաստարկ չէ: Բանն այն է, որ Փարպեցին ծանոթ էր վրաց իրականությանը (միառժամանակ նա ապրել է Քարթլիում): Ահա թե ինչու, Մեսրոպ Մաշտոցի՝ վրաց այբուբենն ստեղծելու մասին նրա լռությունը պետք է բացատրել ոչ թե բնագրում համապատասխան տվյալների բացակայությամբ, այլ նրանով, որ Փարպեցին, իմանալով մինչմաշտոցյան վրաց այբուբենի գոյության փաստը, համամիտ չէ Կորյունի տեղեկությանը:

Դրանից բացի, Մեսրոպ Մաշտոցի կողմից վրաց այբուբենն ստեղծելու մասին պատմածը օրգանական է «Վարք Մաշտոցիի» համար: Դա կրկնում է նաև V դարի հայ պատմիչ Մովսես Խորենացին: Այնպես որ, Կորյունի աշխատության մեջ վրաց այբուբենի մասին ստույգ տեղեկության ի հայտ գալու պատճառների ջավախիշվիլիական մեկնաբանությունը ճիշտ չէ. դա կասկածի ստվեր է գցում ինքնին արժանահավատ փաստարկների վրա հիմնված վրաց այբուբենի՝ հեթանոսական շրջանում ստեղծված լինելու կոնցեպցիայի վրա: Պատճառներից մեկն էլ անշուշտ դա է, որ ոչ վրաց մասնագիտական թե հանրամատչելի գրականության մեջ այդ կոնցեպցիան հաշվի չեն առնում և ասում են, թե վրաց այբուբենը Մաշտոցն է ստեղծել:

Վրաց այբուբենն ստեղծելու հայկական վերսիայի երևան գալու պատճառները բացահայտելու վրաց պատմագրության լուրջ թերությունը իբրև ելակետ հայ հին գրականությանը տեղեկացիություն վերագրելն է: Դա անխուսափելի պարտության տանող քայլ է վրաց հետազոտողների համար, քանզի կասկածի տակ է առնում նրանց օբյեկտիվությունը և ի սկզբանե անվստահության է տրամադրում ոչ վրացի ընթերցողին: Միաժամանակ՝ սկզբունքորեն ճիշտ չէ նման դիրքորոշումը:

Պատմական հետազոտության պրակտիկան ցույց է տալիս, որ հին պատմիչները պատմական պրոցեսի շուրջ խորհրդածելիս շատ թե քիչ տուրք էին տալիս սուբյեկտիվությանը: Բայց մեծ մասամբ դա տեղի էր ունենում ակամա, իբրև հետևանք այն բանի, որ պատմական մտքի զարգացման համեմատաբար ցածր մակարդակի պատճառով մատենագիրները դժվարանում էին իրականությունն ամբողջության մեջ տեսնել:

Կորյունը Մաշտոցի կենսագիրն է: Կասկած չի կարող. դա պարզորոշ երևում է աշխատությունից: Իր երկի գլխավոր պերսոնաժին մեծարելու համար նա ջանք չի խնայում: Բայց չպետք է մոռանալ, որ Կորյունը Մաշտոցի ժամանակակիցն է: Եվ, պարզ է, որ նրա սուբյեկտիվ ձգտումները չեն կարող անսահմանափակ լինել: Ահա թե ինչու, զոնե այս կոնկրետ դեպքում պետք է խոսենք հայ հին պատմիչի ակամա սխալի և ոչ թե տենդենցիոզ լինելու մասին: Եվ սա բոլորովին էլ աննշան նրբերանգ չէ. առաջադրված պրոբլեմը այլ կերպ է ներկայանում հետազոտողին, երբ նա Կորյունի՝ գիտակցված կանխակալության պատճառներն է փնտրում և, այլ կերպ, երբ ակամա սխալ է փնտրում:

Անհրաժեշտ է ընդգծել ևս մեկ իրողություն. Կորյունը չի ասում, թե մինչև Մաշտոցը վրացիներն այբուբեն չեն ունեցել: Նա սուկ տեղեկացնում է, որ Մաշտոցը վրացիների համար այբուբեն է ստեղծել, իսկ թե ինչպիսին է եղել իրադրությունը դրանից առաջ, նա բաց է թողնում:

Կորյունի վկայությամբ Մեսրոպ Մաշտոցը հայկական այբուբենն ստեղծել է, չնայած մինչ այդ էլ հայերն ուրիշ այբուբեն են ունեցել: Այդ հին այբուբենը Մաշտոցը խոտանել է, որովհետև ամբողջ երկու տարի գործադրության մեջ դնելու փորձերից հետո պարզվել է, որ այն չի համապատասխանում հայոց լեզվի հնչյունական համակարգին: Կարելի է ենթադրել, որ Մաշտոցի կողմից վրաց այբուբենն ստեղծվելու մասին լուրը ևս պիտի ընկալել այնպես, թե Կորյունը չի ժխտում մինչմաշտոցյան վրաց այբուբենի գոյությունը: Նախ՝ անհավատալի է, որ Մաշտոցը՝ իբրև այբուբենների գոյությամբ մասնագիտորեն հետաքրքրվող անձ, վրաց ասոմբավորլիի մասին ոչինչ չգիտենար և, երկրորդ, հայ հին պատմիչ Կորյունը, որքան էլ հակված լիներ կանխակալության, դժվար թե ժխտեր V դարի սկզբում յոթ հարյուր տարվա ավանդույթ ունեցող վրաց գրականության գոյությունը:

Ելնելով այս ամենից՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից վրաց այբուբենն ստեղծելու Կորյունի տեղեկությունը պետք է հասկանալ ոչ թե որպես հեթանոսական շրջանում վրաց այբուբենի գոյությանը հակադիր ապացույց, այլ իբրև մատնացույց այն բանի, որ որոշակի նպատակներ հետամտելու պատճառով հայ միսիոներին չի բավարարել գոյություն ունեցող վրաց այբուբենը, և այն փոխելու փորձ է արել:

Ինչպես արդեն ասել ենք, Մաշտոցը վրացերեն չգիտեր, ուրեմն՝ վրաց լեզվին չհամապատասխանելու պատրվակով վրաց ասոմբավորլին նա չէր կարող խոտանել: Մեզ մնում է ենթադրել, որ գաղափարախոսական նկատառումներով քրիստոնեական եկեղեցու գործչին ձեռնտու չէր վրաց այբուբենը. չէ՞ որ վրաց ասոմբավորլին հեթանոսական մշակույթի կենդանի մասն էր:

Նման տեսակետի ճշմարտացիությունը հաստատվում է Մեսրոպ Մաշտոցի գործելակերպով:

V դարի սկզբին, երբ Մեսրոպ Մաշտոցը գործունեության ասպարեզ էր դուրս գալիս, անդրկովկասյան երկրներում առկա էր երկու երևույթ. ա) ծայրահեղորեն լարված քաղաքական կացություն՝ պայմանավորված զրադաշտական Պարսկաստանի էքսպանսիայի մշտական վտանգով, բ) քրիստոնեացման գործընթացը խորացնելու հետ կապված գաղափարական պայքար:

Այս երկու երևույթները փոխկապակցված էին. մեկ դար առաջ անդրկովկասյան երկրների կողմից պաշտոնական կրոն հռչակված քրիստոնեության իրական արմատավորումը ռեգիոնում հակապարսկական, հակազրադաշտական կռալիցիա ստեղծելու անհրաժեշտ պայման էր:

Մեսրոպ Մաշտոցի հյուրընկալը՝ Քարթլիի թագավոր Բակուրը, վրաց հին պատմական երկի՝ «Քարթլիի դարձի» համաձայն՝ ինքնապաշտպանական արտակարգ միջոցառումներ էր անցկացնում «պարսիկների վտանգի» դեմ:

Այդ «պարսիկների վտանգը» եղել է այն ժամանակվա հայ գործիչների՝ մասնավորապես Մեսրոպ Մաշտոցի և նրա գաղափարակից հայոց կաթողիկոս Սահակի՝ ակտիվ կրոնական գործունեության դրդապատճառներից մեկը: Նրանց նպատակն էր քրիստոնեությունը խորապես արմատավորել ամբողջ Անդրկովկասում և վերջնականապես արմատախիլ անել հեթանոսության մնացորդները: Հայերի կողմից այդպիսի միսիան, նրանց բացառիկ անձնուրացությունը հասկանալի է, եթե

նկատի ունենանք, որ Հայաստանն ավելի հաճախ էր անպաշտպան հայտնվում Պարսկաստանին դեմառդեմ, քան, ասենք, Քարթլին: Ահա թե ինչու, հայ գործիչների համար կենսական նշանակություն ունեւոր, որպէսզի սեփական երկրում սկիզբ դրած կրոնական շարժմանը տային ռեզիդենալ մասշտաբներ:

Բնական է, որ հեթանոս բազմադարյա ավանդույթ ունեցող վրաց այբուբենը փոխելը մտնում էր Անդրկովկասում հեթանոսության մնացորդներն իսպառ ոչնչացելու ծրագրի մեջ՝ իբրև կարևորագույն կետերից մեկը, որի իրականացման էր ձեռնամուխ եղել Մեսրոպ Մաշտոցը: Նրա հենց այդ քայլն է արտացոլված Կորյունի՝ քննարկման ենթակա տեղեկության մեջ: Բայց քանի որ պատմիչը Մաշտոցի ժամանակակիցն է, նա չէր կարող հեռանկարում ընկալել նկարագրվող փաստը: Պատճառն այն է, որ Կորյունը չգիտեր, որ հեթանոսական շրջանի վրաց այբուբենը նորով փոխարինելու հայ դպիրի փորձը հաջողություն չի ունեցել, որ Մեսրոպ Մաշտոցի ստեղծածը չի արմատավորվել (հենց այդ պատճառով էլ մեզ չի հասել):

Այսպիսով՝ Կորյունի՝ վրաց այբուբենը Մաշտոցի կողմից ստեղծելու մասին լուրը կիսաճշմարիտ է, որը, սակայն, առաջին հայացքից ճշմարտանման է. նրանում մի շարք անկարևոր փաստեր ճիշտ են վկայված, մինչդեռ էական պահերն անստույգ են: Ահա թե ինչու, այդքան դժվար էր խորամուխ լինել այդ տեղեկության իրական, պատմական կոնտեքստի մեջ, ահա թե ինչու հետազոտողները, սխալվում են նաև այն դեպքում, երբ համակարծիք են դրան նաև այն դեպքում երբ ժխտում են հախուռն կերպով:

Ինչպես ասացինք, Կորյունը չգիտեր, թե ինչ բախտ է վիճակվել Մաշտոցի ստեղծածին Վրաստանում: Բայց այն, ինչ չի կարողացել տեսնել V դարի առաջին կեսի պատմիչը, հստակ ու որոշակի է Ղազար Փարպեցու համար, որը համամիտ չէ Մաշտոցի կողմից վրաց այբուբեն ստեղծվելու մասին Կորյունի տեղեկությանը: V դարի երկրորդ կեսից, այսինքն՝ ժամանակի որոշ հեռավորությունից՝ նա հնարավորություն ուներ նշելու, որ Մաշտոցի կողմից վրացիների համար ստեղծած տառերը վրաց գրականության մեջ չեն իրականացվել, վրաց մշակույթի համար դրանք գործառնական չեն եղել:

Ուշադրության արժանի է նաև Լեոնտի Մրովելու տեսակետը. նա լավ գիտեր հայ գրականությունը: Նրա՝ իբրև քրիստոնյա գրողի համար

ընդունելի պետք է լիներ վրաց այբուբենն ստեղծելու մասին հայկական վերսիսան: Եվ եթե Լեոնտի Մրովելին, այդուհանդերձ, համամիտ չէ այդ վերսիսանին և նշում է, որ վրաց գրականությունը գոյություն է ունեցել դեռևս հեթանոսական շրջանում՝ Փառնավազ թագավորի օրոք, վկայում է, որ նա նույնպես լուրջ փաստարկներ է ունեցել Մաշտոցի կողմից վրաց այբուբենն ստեղծվելու մասին տեղեկության ստույգությանը կասկածելու: Եվ այս դեպքում բացառվում է վրաց պատմիչի տենդենցիոզությունը Մաշտոցի էթնիկական պատկանելության պատճառով: Խորամուխ լինելով Լեոնտի Մրովելու ստեղծագործական լաբորատորիայի մեջ՝ համոզվում ենք, որ նա ոչ միայն զարմանալիորեն անաչառ պատմիչ է, այլև առանձնահատուկ համակրանք է տածել հայերի նկատմամբ: Մրովելին հակված չէ նսեմացնելու հայ գործիչների դերը պատմության մեջ, ավելին՝ մասնագիտորեն մեծարում է նրանց:

Այսպիսով՝ քննարկման ենթակա լուրը՝ որպես անստույգ, վաղուց ի վեր մերժվել է գործի մեջ խորամուխ եղած հին պատմիչների կողմից:

Ցավոք, ժամանակակից կովկասագիտության մեջ այս հանգամանքը պատշաճ ուշադրության չի արժանանում:

Ասացինք որ միանգամայն հասկանալի պատճառներով վրաց այբուբենը Մեսրոպ Մաշտոցին չէր բավարարում, և նա ձգտում էր փոխել այն: Բայց արդյո՞ք հայ միսիոներին նման դիրքորոշումը համապատասխանում էր Քարթլիի այն ժամանակվա ղեկավարների դիրքորոշմանը:

Այն, որ Քարթլիում Մաշտոցին դիմավորել են պատվով և ունկնդիր եղել նրան, բոլորովին բավարար չէ այս հարցին դրական պատասխանելու համար: Մաշտոցի հյուրընկալը՝ Քարթլիի թագավոր Բակուրը՝ բյուզանդական աղբյուրների «հույժ վստահելի այրը», խելացի ու հեռատես տիրակալ էր և հավասարապես «փայլում էր թե՛ մարմնով, թե՛ հոգով»: Որը, չնայած աշխարհիկ գործունեությանը, միշտ եղել է օրինակելի քրիստոնյա և մշակույթի երկրպագու (Բակուրի մասին մանրամասն տե՛ս մեր «Հույժ վստահելի Բակուրը» հոդվածում, «Մնաթրբի», 1986, թիվ 5): Այնպես որ, հայ եկեղեցական նշանավոր գործչի և դպիրի՝ Բակուրի կողմից պատվով ընդունվելու փաստը միանգամայն բնական է վրաց հեթանոսական շրջանի այբուբենի հետագա ճակատագրի մասին նրանց ունեցած թեկուզև տարբեր կարծիքների պարագայում:

Հենց դա էլ մեզ խորհել է տալիս, որպեսզի Կորյունի հավաստումն այն մասին, թե Քարթլիի արքան «խոնարհաբար լսում էր» Մաշտոցին,



չընդունենք անվերապահ ապացույց, թե հայ միսիոնների հանձնարարությանը Բակուրը պատրաստակամորեն փոխել է ի՛նչ–որ բան:

V դարի սկզբում վրաց ասոմթավրուլին ուներ առնվազն յոթ հարյուր տարվա պատմություն: Ահա թե ինչու, բնական է, որ Մաշտոցի հապճեպ ստեղծածը նրա հետ հակադրվելու ժամանակ պարտվել է և չի արմատավորվել:

Բայց վրաց հեթանոսական այբուբենի գոյատևումը պայմանավորված է ոչ միայն նրա բազմադարյա ավանդույթով և կատարելությամբ: Այս օբյեկտիվ պայմանների կողքին անպայման կա նաև սուբյեկտիվ գործոն, դա Բակուր արքայի անձն է: Օրինակելի քրիստոնյա, իր աստվածահավատությամբ աչքի ընկած Բակուրը բյուզանդացի նշանավոր հեթանոս փիլիսոփա Լիբանիոսի բարեկամն էր, որի հետ նա ծանոթացել էր իբրև արքայազն Բյուզանդիայում եղած տարիներին: Չնայած դավանանքների տարբերությանը՝ նրանց միավորում էր հոգեկան մեծ մտերմությունը: Այս փաստը վկայում է Բակուրի շրջահայեցության մասին և մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ նա այնպիսի գործիչ էր, որն ի վիճակի էր ճիշտ ընտրություն կատարելու վրաց հեթանոսական այբուբենի և գաղափարապես ընդունելի, բայց մաշտոցյան անկատար տառերի միջև: Ահա թե ինչու կարծում ենք, որ կրոնական անզիջում հակամարտության պայմաններում, եթե վրաց ժողովրդի պատմության հեթանոսական և քրիստոնեական դարաշրջաններն իրար կապող կամուրջը չքանդվեց, վրաց ասոմթավրուլին ծառայեց իբրև վրաց ամբողջական մշակույթի ողնաշար, ապա դրանում զգալի է Բակուրի վաստակը:

Իբրև այս հոդվածի ամփոփում կարելի է ասել հետևյալը. ինչպես համոզվում ենք վերոշարադրյալ դատողություններից, Մեսրոպ Մաշտոցի կողմից վրաց այբուբենի ստեղծվելու մասին լուրը չպետք է տեղ գտնի վրաց այբուբենի ծագման կոնցեպցիայում, որովհետև դա այս պատմության վերաբերյալ մի հետաքրքիր մանրամասն է պարունակում. հիշեցնում է, որ մ.թ. V դարի սկզբին գաղափարախոսական նկատառումներով դեռևս հեթանոսական շրջանում ստեղծված վրաց այբուբենը փոփոխության ենթարկելու փորձ է արվել, բայց այդ փորձը ձախողվել է. վրաց ասոմթավրուլին չեն կարողացել փոխել... բարեբախտաբար:

79. Վերջերս «Լիտերատուրուլի Սաքարթվելո» թերթում (1989, 17 մարտի) տպագրվեց Թ. Չխենկելու հոդվածը՝ «Մոտիվացիա և վարիացիաներ», որտեղ հեղինակը փորձում է քննադատաբար վերլուծել ամե-

րիկացի պրոֆեսոր Ջոն Գրեպինի «Մի քանի դիտողություն վրաց այբուբենի ծագման մասին» աշխատությունը: Հեղինակն իր զարմանքը չի թաքցնում, որ ամերիկացի գիտնականը վրաց այբուբենի ծագումը կապել է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ: Նա գիտակամորեն անարդարացի և մեթոդաբանորեն անընդունելի է համարում, որ Ջ. Գրեպինը նկատի է առել վրաց այբուբենի ծագման նույն այդ հայկական վերսիան, մինչդեռ վրացական տրադիցիան՝ կապված նույն այս հարցի հետ, անտեսում է, այդ պատճառով էլ Թ. Չխենկելին օտարերկրացի կոլեգային համարում է ոչ օբյեկտիվ:

Մենք, ինչ խոսք, չենք կարող Ջ. Գրեպինին՝ իբրև գիտնականի, անաչառ համարել, բայց, միևնույն ժամանակ, չենք հասկանում, թե Թ. Չխենկելին ինչո՞ւ է կասկածում ամերիկացու բարեխղճության վրա, երբ նա վրաց այբուբենի ծագումը կապում է Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, չէ՞ որ դա հիմնավորվում է նրանով, որ նշված մշակութային ֆենոմենը քրիստոնեական շրջանում ծագելու մասին տեսակետ է ստեղծում, որն այնպե՛ս ջանադարաբար մասսայականացնում են նաև «բբիլիսցի որոշ գիտնականներ», և որին համամիտ է նաև ինքը՝ Թ. Չխենկելին:

Չխենկելին նախ անհասկանալի է համարում, թե ինչու Ջ. Գրեպինը «լուրջ չի համարում» նախաքրիստոնեական դարաշրջանում վրաց այբուբենի մասին վերսիան, մյուս կողմից՝ դժգոհում է, որ ամերիկացի պրոֆեսորը այս խնդրին անդրադառնալիս անտեսում է վրաց ազգային տրադիցիան: Բայց մի՞թե Չխենկելին էլ նույն կերպ չի վարվում այդ տրադիցիայի հանդեպ, երբ վրաց այբուբենը քրիստոնեական շրջանի արգասիք է համարում:

Ծիշտ է՝ Ջ. Գրեպինը սխալվում է, երբ վրաց այբուբենի ստեղծումը կապում է Մաշտոցի անվան հետ, բայց նրա առավելությունն այն է, որ հետևողական է իր տեսակետում: Վրաց այբուբենի ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի անունից հեռացնելը (ուղիղ նայենք ճշմարտության աչքերին) անլուծելի խնդիր է այն հետազոտողների համար, ովքեր ենթադրում են, թե վրաց այբուբենն ստեղծվել է քրիստոնեական շրջանում՝ ժամանակի ճիշտ այն հատվածում, երբ գործում էր Մեսրոպ Մաշտոցը:

Կոյունի կեղծ տեղեկության պատճառը նրանք չեն կարող բացատրել, եթե շարունակեն հայ հին պատմագրությանը մեղադրել տենդենցիոզության մեջ: Ահա թե ինչու վրաց այբուբենը քրիստոնեական շրջանում ստեղծված լինելու տեսակետն ընդունող վրացի գիտնականնե-

որ իրենց արտասահմանցի կոլեգաների մեծ մասի աչքում մարդիկ են, որոնք կամակորում են հանուն ազգային արժանապատվության:

Մեսրոպ Մաշտոցի անունը վրաց մշակույթից կհեռացվի միայն վրաց այբուբենը հեթանոսական շրջանում ծագած լինելու կոնցեպցիայով: Եվ դա ոչ միայն նրա համար, որ նշված կոնցեպցիան ժամանակագրական անհամապատասխանության պատճառով ինքնըստինքյան բացառում է Մաշտոցի կողմից վրաց այբուբենի ստեղծումը, այլ նաև այն բանի համար, որ այս կոնցեպցիայի շրջանակներում, ինչպես դա վերը ցույց տվեցինք, կհաջողվի բացատրել Կորյունի՝ կեղծ տեղեկության ի հայտ գալու պատճառը:

*Մարինա Չխարտիշվիլի  
«Մնաթրբի», 1989 թ., թիվ 6, էջ 169–173*

## ՆԵՐՔԻՆ ՔԱՐՔԻԻ ԷԹՆՈՍԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ\*

Ներքին Քարթլիի պատմությունը վարդ–մանուշակներով ծածկված չի եղել. այստեղ բնակվող վրացին մշտապես պաշտպանվել է օտար բռնավորներից: Այստեղ եկած թշնամի թե բարեկամ փորձել են արմատախիլ անել ուղղափառ քրիստոնեության կողմից ու հնուց ի վեր հաստատված աշխարհագրական անունները և յուրովի անվանակոչել շրջապատը: Վրաց ժողովրդի մեջ մահմեդականությունն ուժով էր արմատավորվում, իսկ քրիստոնեության երկու ճյուղերը՝ կաթոլիկությունը և գրիգորյանությունը, տարածվում էր առանց ուժի, խաղաղ ճանապարհով:

Հրապարակայնությունն ու վերակառուցումը վերջերս շոշափեց նաև երկրի էթնոսին և տեղանունների: Դրվեց գյուղերի, շրջանների և քաղաքների պատմական անունները վերականգնելու հարցը: Մի մասը նույնիսկ իրականացվեց (Սենակի, Օգուրգեթի, Խոնի, Խարագոուլի և այլն)...

.....

Առհասարակ, վրացական բնակավայրերի թե աշխարհագրական կետերի անունները փոխվում էին՝ նայած թե այնտեղ ինչ տոհմի ժողովուրդ էր տնավորվում:

Նման բան տեղի էր ունենում ոչ միայն տեղանունների, այլ նաև էթնոսի հետ: Իբրև օրինաչափություն, բնիկը պետք է ազդեցություն թողնի վերաբնակչի վրա, օտարին դարձնի իր կրոնին ու դավանանքին. տեղի

\* Թարգմանվում է մասնակի կրճատումներով:

է ունեցել հակառակը. շատ վրացիներ դարձել են մահմեդական, ֆրանկ, հույն, հայ... Ավելի ճիշտ կլինի ասենք՝ փոխել են նրանց հավատը: Դիմենք փաստերին:

Սկսած 1740–ական թվականներից պատերների մուտքը սաստիկ կրճատվեց և նշված կողմերի վրաց կաթոլիկների խնամակալությունը փոխանցվեց Թուրքիայում մի ժամանակ վերաբնակված հայ կաթոլիկների պատրիարքին:

Թուրքերի և պարսիկների աջակցությունից քաջալերված՝ հայ կաթոլիկները Վրաստան գալույն պես իրենց տիրելունը մտցրին եկեղեցի և պատարագ–ժամերգությունն սկսեցին «հայերեն» անել: Վրացական համայնքն, ասես, հարմարվեց հայ կաթոլիկ քահանաներին. լեզվին չտիրապետելու պատճառով, որպեսզի հայերեն տարվող ժամերգություն սովորելուն չդժվարանան, վրացերեն տառերով գրի էին առնում, ապա սերտում տեքստը: Հայ կաթոլիկները, համայնքում վստահություն ձեռք բերելուն պես, վճռեցին բազմակողմանիորեն տեր ու տնօրեն դառնալ այստեղ և սկսեցին հայերեն գրագիտություն տարածել:

Հայ կաթոլիկ քահանաների (տերտերների) հավատարիմ դաշնակիցները ռուսներն էին. «Սկսած 1828 թվականից, երբ Ռուսաստանը Թուրքիայից խլեց վրացի մահմեդականներով բնակեցված Սամցխեն, Ջավախքը, Էրուշեթը, Պալակացիոն, բնակիչներին այնպիսի հոգեկան կացության մեջ դրեց, որ վրացի մահմեդականները գերադասեցին թողնել իրենց նախնիների բնակավայրերը և տեղափոխվել Թուրքիա: Գրաֆ Պասկևիչը վրացիներին Լիխթինեթից այնտեղ փոխադրվելու իրավունք չտվեց, բայց նրանց փոխարեն բնակեցրեց Թուրքիայից տեղափոխված հայերից 3000–ին: Արիեստական այս միջոցով Մեսխետում, որտեղ մինչև 1828 թվականը վրաց ազգաբնակչությունը 90 տոկոսից ավելի էր, ռուս չինովնիկների օգնությամբ, 1832–ին արդեն, հայերն էին մեծամասնություն կազմում» (Ա. Կիկվածե, Վրաստանի պատմություն, Թբիլիսի, 1952, էջ 209):

Հույների և հայերի (նմանապես՝ օսերի և լեռնականների) վերաբնակեցումը թվագրվում է 1850–ական թվականներով. դա վկայվում է Վրաստանի կենտրոնական պատմական արխիվում պահպանված մարդահամարի նյութերով, ընտանեկան ցուցակներով և փոխարքա Մ. Ս. Վորոնցովի ցուցումով 1854 թ. այժմյան Թեթրիճղարոյի շրջանի կազմի մեջ մտնող գյուղերի հաշվեգրումով (նյութերը մտցված են «Կովկասի օ-

րացույց»–ի մեջ, 1855 թ.): «Մնաթրի» ամսագրի (1988 թ. թիվ 6) էջերում ընթերցողին ծանուցեցինք, որ Գյումուշխանից և Անատոլիայից տեղափոխված հույների կողքին ապրող ոչ քիչ թվով վրացիների հույն դարձրին և ազգանունները փոխեցին: Այստեղ միայն նշենք, որ Ծինճղարոյում տարածված բամբասանքները, թե իբր հույների հետ այստեղ են եկել նաև տասը հայի ընտանիքներ, թե գյուղի երկրորդ եկեղեցին էլ նրանց է պատկանում և հայկական է, իրականությանը չի համապատասխանում: Հայ անվանակոչված Արուղովը վրացի Արդիշվիլին է, իսկ վրացական փոքրիկ եկեղեցին Կվիրացխովել գյուղին էր պատկանում: Հաշվեգրման ցուցակում (1854 թ. տվյալներով) Ծինճղարո, Դուռնուկ, Սամշվիլդե... գյուղերի ուղղությամբ «բնակիչները ո՞ր տոհմին են պատկանում» հարցին ի պատասխան գրված է՝ «վրացիներ», «ո՞ր դավանանքի հետևորդներ են՝ ուղղափառ, «մայրենի, խոսակցական լեզուն»՝ վրացերենը: Այժմյան հայկական Սամղրեթ (պետք է լինի՝ Սամղերեթ) գյուղում 1873 թ. մարդահամարով 15 ծուխ էր ապրում, որից՝ 11–ը հայկական, 5–ը՝ վրացական: Հայերից հիշատակվում են՝ Գասպարովներ, Բոգդասովներ, Սուրունովներ և Քանանովներ:

1855 թ. Բուլնիս–Խաչենից հայեր են տեղափոխվում Դաղեթ և Մեծ Դաղեթը անվանակոչում Դաղեթ–Խաչեն: Այդ հայերի ազգանուններն են՝ Ասանջյան (հետագայում՝ Ասանջանով), Գապրիելյան (Գապրիելով), Տեր–Անդրիասով, Սարուխանյան, Ցականով, Իգիթով, Ջագինով, Քոսմանով, Ալեքսաիդերով, Գրիգորյան և այլն:

Մարդահամարի ցուցակներում վրացական ընտանիքները հայկական ընտանիքներ գրանցելու և ազգանունները փոխելու օրինակները քիչ չեն: Մինչև «հյուրերի» գալը այս վայրերը վրացիներով էին բնակված եղել: Մամաջանաշվիլին (հմմտ. Մամիսուլաշվիլի, Ամիսուլաշվիլի) Մամաջանով և հայ են գրանցել, Թեյմուրազաշվիլին Թեյմուրազով դարձավ, Խառատաշվիլին՝ Խառատով, Աղամաշվիլին՝ Աղամով, Սարգիսաշվիլին՝ Սարգիսով (Թոնեթի գյուղից Դուռնուկ են տեղափոխվել 1864 թ.), Մախարաշվիլին՝ Մախարով (նույն՝ Ջիրաշվիլի), որ այսօր էլ հայ է գրվում (Վրաստանի ԿՊՊԱ, ֆ. 254, նո. 144, ց. 109, թ. 179–199):

Ռուսացման քաղաքականության ենթարկվեցին նաև Անդրկովկասի այլ ժողովուրդներ: Այս գործում ռուսներին հայերն էին աջակցում: «Հայերը մեր հավատարիմ դաշնակիցները կլինեն և, իբրև վաճառականներ,

իրենց հետ փող էլ կբերեն մեզ»,— ասում էին նրանք (Իվ. Ջավախիշվիլի, «Լիտերատուրուլի Սաքարթվելո» 1988 թ., 23 սեպտեմբերի):

Ռուսաց թագավորական իշխանությունը վրացիներին համարում էր քաղաքականապես անհուսալի ժողովուրդ, վրաց ազգաբնակչության գործունեության ընդարձակումը՝ վտանգավոր: «Որ Անդրկովկասի շրջանակներում հայերը կարող էին քաղաքական անկախության ծագել, նրա մտքով չէր անցնում: Ահա թե ինչու հայ գաղթականների բնակեցումը Վրաստանում վտանգավոր չէր համարում, քանզի վրաց ազգաբնակչության տոկոսը նվազում էր, միաժամանակ Վրաստանում Ռուսաստանի ամբողջականության, ինչպես նրանք էին կարծում, ամենահավատարիմ հպատակների քանակն ավելանում էր» (Իվ. Ջավախիշվիլի, «Լիտ. Սաքարթվելո» շաբաթաթերթ, 1988 թ., 23 սեպտեմբերի):

Ցարիզմի լծի տակ հեծող վրացիությունը սեփական երկրում, օտար տարրերի համեմատ, հալածյալ և անարգված վիճակում էր: Գյուղացիների կենսական, տնտեսական հետաքրքրությունները ոտնահարվում էին, նույնիսկ իր հայրենիքում՝ Վրաստանում, փակ էր նրա տեղափոխության ճանապարհը, մինչդեռ օտար դրսեկներին թե՛ հողեր էին տալիս և թե՛ ամեն կարգի օգնություն: Հայ գիտնականները լուրեր էին տարածում, թե գոյություն է ունեցել Մեծ և Փոքր Հայք: Այս աներես մտքի պսակը 1918 թ. Ստամբուլում տպագրված քարտեզն է, որտեղ Վրաստանի մեծ մասը Հայաստանի կազմի մեջ է մտցված: Տերտերները հարմար պահը ձեռքներից բաց չէին թողնում, որ վրացիներին (կաթոլիկներին) հայ գրիգորյանական դավանանքի դարձնեին, իսկ հետագայում, մարդահամարի գրքում, գաղտնի իբրև հայ «մկրտեհն»: Այստեղ էլ նրանց ամենահավատարիմ դաշնակիցները և աջակիցները երմուլով կատկովներն էին:

.....

Ընթերցողը եթե խորամուխ լինի, հավանաբար կնկատի, որ հայացման հաճախ ենթարկվել են օտար արմատներով և –ով–ով վերջացող ազգանունները: Վրաստանում «գործող» տերտերների ուշադրությունը ճիշտ այս երևույթի վրա է բևեռված եղել: Ալեքսանդր Ֆրոնելը այս պրոցեսը հետևյալ կերպ է նկարագրում. «Շատ վրացի կաթոլիկ համայնքների առաջնորդները հայեր էին, որոնք վրացական համայնքում աղավաղված վրացերենով էին խոսում: Պատարագ–ժամերգություն և այլ արա-

րողություններ մայրենի լեզվով էին կատարում: Պաշտոնապես հայ կաթոլիկներ էին գրվում, որը համապատասխանում էր «վրացի կաթոլիկին»: Դժբախտաբար, կրոնական տերմինը վերածվեց ազգությունը նշող տերմինի: «Հասարակ վրացի կաթոլիկին եթե հարցնես՝ ո՞վ ես, կպատասխանի՝ հայ կաթոլիկ: Եթե զայրացած կամ բարկացած ասես՝ ի՞նչ ես դեսուդեն ընկնում, ապուպապով վրացի ես եղել, էդ ո՞նց հայ դարձար, ամոթխած հարսնացուի նման գլուխը կկախի և ակնածանքով կպատասխանի. «Այո՛, ասում են, որ առաջներում մեր ապուպապերը վրացի են եղել»: Հայ կաթոլիկ քահանաներին կոչում էին «տեր». նրանց անունները հնչում էին այսպես՝ տեր Պողոս, տեր Պետրոս, տեր Առաքել և այլն»: (Ալ. Ֆրոնելի, Փառաշուք Մեսխեթը, ք. Գորի, 1914, էջ 33):

XIX դարի մատենագիր Չաքարիա ճիճինաձեն վկայում է, որ Սամցխե–Սաաթաբագոյում քրիստոնյա ուղղափառներ այլևս չես գտնի. «Այստեղ–այնտեղ հատուկենտ թե ձկնտում են, որոնք գիշերները գաղտնի սուրբ հաղորդություն են առնում աշխարհիկ հագուստով քահանայից, կամ էլ Շենդյան տոները նշում էին խոզի միս ստանալով, որ նույն ազգի քահանաները խուրջիներով գյուղեգյուղ ման էին տալիս համայնքի համար: Ո՛վ կմտածեր, որ վրացին ընդամենը 130 տարի առաջ այսպես կկեղեքվեր. շատերին հեքիաթ կթվա 2 միլիոն վրացիների մահմեդականացումն ու 400 հազ. հայացումը, բայց կատարյալ ճշմարտություն է և իրականություն» (Չ. ճիճինաձե, Վրաց գրիգորյանականները, 1900 թ., էջ 27–28):

XVIII դարի սկզբին վրաց կաթոլիկները պատարագ–ժամերգությունը լատիներեն էին կատարում: Հետագայում, հասկանալի պատճառներով, վրացի կաթոլիկ քահանան ստիպված եղավ պատարագ–ժամերգությունը հայոց լեզվով կատարել: Այս գործի համար տերտեր էր հրավիրվում և արթուն թշնամուն ասում ի՞նչ ես ուզում, հանգստացի՛ր, հո տեսնում ես՝ ո՛չ կաթոլիկ եմ, ո՛չ վրացի: Այս հնարանքը մասնակիորեն օգնեց, որ քրիստոնյա մնան, մինչդեռ ազգությունը ցայժմ մնաց իբրև անուղղելի խարան: Մի առլեցի (գյուղ Ադիգենի շրջանում) վրացի կաթոլիկ՝ Մավեն Թաթևոսովը (Մախկինում՝ Թոմաշվիլի), պատմական այս փաստը անթերի վրացերենով այսպես նկարագրեց. «Թուրքը հային չի նեղում, դրա համար էլ ապուպապերս հայ կաթոլիկական դավանանք են ընդունել» (անդ, էջ 28):

Բորբալոնեցի (Թերթոնդարոյի շրջան) մանկավարժ Ռևազ Ասլանիշվիլին պատմում էր. «Մի օր նստեցի 90—ամյա պապիս մոտ և հարցրի. «Պա՛պ, ազգությանը ո՞վ ենք, և ի՞նչ գիտես մեր նախնիների մասին»: Դարձավ ինձ ու ասաց. «Ի՞նչ է, շան որդի, կասկածո՞ւմ ես, որ վրացի ես, ուրիշ ի՞նչ պիտի լինեիր»: «Հա՛, եթե այդպես է, բացի մեկից, մյուս հինգ տղաներին ինչի՞ ես հայի անուններ դրել»: «Ինը զավակ ունեի,— բացատրեց նա,— վեց տղա, երեք աղջիկ: Ավագը քո հորաքույր Մարիամն էր: Շատ փոքր (14 տարեկան) էր, որ թիֆլիսցի մի հայ վաճառականի տղայի հետ ամուսնացավ: Փեսան էլ նույն գործին էր: Ընտանիքս տնտեսապես կարիքի մեջ էր. փեսան էր օգնում, երեխաներին նույնպես նա էր խնամում և հայկական եկեղեցում մկրտում, անուններն էլ ինքն էր դնում: Մեր նախնիները, ասում են, իշխաններ են եղել: Բարաթաշվիլիների սերնդից ենք եղել» (Բորբալո, Ռ. Ասլանիշվիլի, 64 տարեկան, գրի է առնվել 1986 թ. օգոստոսին):

XIX դարի երկրորդ կեսին՝ ճորտատիրության վերացումից հետո, բազմաթիվ վրացի ավատատերերի կալվածքներ հաճախ ընկնում էին հայ վաճառականների ձեռքը: «Երբեմն այս կալվածքներում գյուղացիները նոր տիրոջ հավատն էին դավանում» (Գ. Ջիբլաձե, Միջին Քարթլի, Թիֆլիս, 1987, էջ 16):

Դեպքեր են եղել, երբ վրացի վաճառականներից և արհեստավորներից բացի, արքաները, կառավարողները, նույնիսկ իշխանորդները ևս հաղորդություն առնելու համար հայկական եկեղեցի են հաճախել, պսակադրվել են և երեխաներին մկրտել: Օրինակ՝ Ալեքսանդր Բատոնիշվիլին՝ Չերակլ Երկրորդի որդին, պսակադրվել է Էջմիածնում և հենց այնտեղ, եկեղեցու բակում է թաղված:

Պատմության մեջ պահպանված տեղեկությունների համաձայն՝ խանի կողմից Պարսկաստան տարվող գերիների մի մասին Չարակլ Երկրորդը ազատել է փողով, իսկ մյուս մասին գնել է Էջմիածնի եկեղեցին՝ գերիներից համաձայնություն վերցնելով, որ գրիգորյանական հավատ կընդունեն:

Վրացու համար այլազգիների եկեղեցի հաճախելը, այսպես թե այնպես, տանելի էր, բայց կարևորն այն է, որ գրիգորյանական քահանայությունը նրանց ազգանունը փոխում էր, իսկ անվանը՝ այլ հնչեղանգ տալիս:

1795 թ. դեպքերից հետո հայ են կնքվել որոշ Լուսիններ, Գորգածներ, Գոգիծներ, Սիխարուլիծներ, Շիռշվիլիներ, Գաբաշվիլիներ, Սենաբղեններ, Մեծաղիշվիլիներ, Չերքեզիշվիլիներ, Եպիտաշվիլիներ, Մայիսաշվիլիներ, Ջուրաշվիլիներ, Ալիխանաշվիլիներ, Լազարեշվիլիներ, Մոսեշվիլիներ, Գոգիաշվիլիներ, Մամուլաշվիլիներ, Սդիվհիշվիլիներ, Գալեգաշվիլիներ, Բաքրածներ և այլն:

Այս ճանապարհով են Քարթլ—Կախեթում բազմացել «վրացի» հայերը: Թիֆլիսում, Տաբախմեյայում և Մարտղոփիում բնակվող Փարսահանաշվիլիները (հետագայում՝ Փարսադանովներ) 1795 թ. հայ—գրիգորյանական հավատ ընդունեցին, իսկ մի քանի ընտանիք որպես հայ գրանցվեցին:

Այս փաստի առիթով Ռ. Թոփչիշվիլին գրում է. «1886 թ. մարդահամար անցկացնելիս Թիֆլիսում բնակվող... Փարսադանովները գրիգորյան հավատի պատճառով հայ էթնոսին են վերագրվել: XIX դարի արխիվային նյութերի հիման վրա, ավելի ճիշտ՝ 1823 և 1860 թթ. տվյալներով, Փարսադանովները (Փարսադանաշվիլի են գրանցված) Թիֆլիսի մերձակա գյուղերի՝ Մարտղոփիի և Տաբախմեյայի բնակիչներ են, ուղղափառ դավանանքի հետևորդ, ազգությանը վրացի: Համապատասխանաբար՝ այս ազգանունները կրողների անունները նույնպես վրացական—քրիստոնեական են: 1801 թ. Փարսադանաշվիլիները բնակվելիս են եղել նաև Թիանեթում և Ախմետայում: Նշենք նաև, որ տղամարդու Փարսադան պարսկական անունը շատ էր տարածված Վրաստանի տարբեր անկյուններում» («Լիտերատուրուլի Սաքարթվելո», 22 հուլիսի, 1988):

Փարսադանաշվիլիները հիշատակվում էին նաև Թիֆլիս քաղաքում:

.....

XVII դարում կաթոլիկական դավանության անցնելը զանգվածային բնույթ կրեց: Վրացիների այս շարժմանը միացան ինքը՝ արքան, հոգևոր անձինք, նույնիսկ եպիսկոպոսներ: Միսիոներների նամակները վկայում են, որ պատեր Ջուստինոն կաթոլիկական դավանանքի է բերել Գեորգի թագավորին, նրա եղբորը՝ Լևանին, նմանապես Վրաստանի արքեպիսկոպոս Էքվթիմեին՝ մի քանի քահանաներով հանդերձ:

...Բայանդուրաշվիլիների մի մասը XIX դարի երկրորդ կեսից հայ էթնոսին է վերագրված և մարդահամարի գրքում էլ, սյունակի ուղղու-

թյամբ՝ տոհմը, հետնորդը, հայ է արծանագրված: Եման ճակատագիր է վիճակվել նաև հետևյալ ազգանուններին՝ Մղեբրիշվիլի (Մղեբրով — ներկարար), Մեբաղիշվիլի (Մեբաղով — այգեպան, պարտիզպան), Սաակածե (Սահակով), Օլբիաշվիլի (Օլբիս), Ափրիամաշվիլի (Ապրիամով), Պավլիաշվիլի (Պալյանց), Ջաալաիշվիլի (կավածատերեր՝ Ջաալով, Ջալյանց), Քոբուլաշվիլի (հմնտ. հին-հին իշխաններ Քոբուլիսծեններ), եղել են ն՛ կավածատերեր, ն՛ ռամիկներ (Քոբուլով), Մաղալաշվիլի (Մաղալով), Մամուլաշվիլի (Մամուլով), Լաշքարաշվիլի (Լաշքարով), Դեղալամազիշվիլի (Դեղալամազով), Ասլամազիշվիլի (Ասլամազով), Ալխազիշվիլի (Ալխազով, նույն՝ Լամազաշվիլի), Քոչորաշվիլի (Քոչորով) և շատ շատերի:

Վերոհիշյալ ազգանունները մեկնաբանության կարիք չեն զգում: Եվ ոչ մի ազգանուն արմատով ընդհանուր ոչինչ չունի հայերենի հետ: Առաջին երկու ազգանունները արհեստ են ցույց տալիս: Հիշենք... թե այս կարգի ազգանուններից ինչ պատիվ էր բաժին ընկնում նալբանդին, դալլաքին, դուրզարին, խառատին, խարազին, ատաղձագործին, փականագործին, մանածագործին, նախրապանին, թաղիքագործին, լուղարկողին, ոչխարաբույծին, հացագործին, հայելագործին, զինագործին, ճոնին, թամբագործին, զուռնաչուն, զութանավորին, ձկնորսին, դիոլչուն, բրուտին, խոհարարին և այլն: Այս ճանապարհով են երևան եկել Մճեղիշվիլիները, Մճեղիծենները, Մճեղուրիները, Խուրոշվիլիները, Դալլաքաշվիլիները, Դուրզիշվիլիները, Խառատաշվիլիները, Խարազիշվիլիները, Ջեհնկալիշվիլիները, Մեխրիշվիլիները, Մեխրածենները, Մենաբղենները, Մենաբղիշվիլիները, Մետիվիշվիլիները, Մեցխվարիշվիլիները, Սզարեուլիշվիլիները, Փեիքիշվիլիները, Խաբազաշվիլիները, Մեսարկիշվիլիները, Մեսաբիշվիլիները, Մկերվալիշվիլիները, ճոնիաշվիլիները, Մեունարգիաները, Մեստվիրիշվիլիները, Մեգուսնիշվիլիները, Մենաղարիշվիլիները, Մեփարիշվիլիները, Մեքանարիշվիլիները (հմնտ. Արուսեմաշվիլի), Մեքվեպրիշվիլիները, Մեղանծիշվիլիները, Մեշվիղիշվիլիները, Մշվիղածենները (հին ձևով՝ Մեմշուղիղիշվիլի), Մեխաշիշվիլիները և այլն:

Մերաբիշվիլիներից մի քանի մարդ 1795 թ. հայ-գրիգորյանական դավանանք են ընդունել և «դարձել» Մերաբով (Մերաբյանց): Մերաբ անունը պարսկական է և նշանակում է «արևի նման փայլող», բառացի՝ «արևի ջուր» կամ՝ «արևի պայծառություն», կամ՝ «ջրի

տեր»: Մերաբ էին ասում ջուր բաժանող պաշտոնյային: Մերաբ է «Շահ-Մամեի» պերսոնաժներից մեկը՝ Ռոստոմի պապը, որը թագավորում էր Ջաբուլիստանում» (Ջ. ճումբուրիժե, Մայրենի լեզու վրացերենը, Թբիլիսի, 1987, էջ 367):

Սաակածենների մի մասը հնում կաթոլիկություն է ընդունել, երկու կաթոլիկ Սաակածեններ գրիգորյանական դավանանք են ընդունել և Սաակով գրվել (Մանգլիսի), նույն այդ ժամանակաշրջանում էղիլաշվիլիները (Էղիլյանց), Դարչիաշվիլիները (Դարչիյանց), Սոսիաշվիլիները (Սոսիյանց), Էլբաքիծենները (Էլբաքիյանց), Մանուկաշվիլիները (Մանուկիյանց), Տատիշվիլիները (Տատիյանց), Իտրիաշվիլիները (առնչվում է Իտրիա գյուղի հետ, Իտրիյանց), Մարկոզաշվիլիները (Մարկոզով) «հայեր են դարձել»:

Ի հավաստունն վերոհիշյալի՝ վկայենք ականատեսներ Բատոնիշվիլիների, Մելիթաուրիի քահանայի, Դավիթ Ամերիջիբիի և դերասան Իոսեբ Էլիազաշվիլու (Էլիազով) պատմածները. «1795 թ. կռվից հետո Թիֆլիսը դատարկվեց: Թշնամին վառեց երեք կամուրջ և դրանց հետ էլ ամբողջ քաղաքը, ավերեց և հրդեհեց նույնիսկ այնպիսի եկեղեցիներ, որոնք տաշած քարից էին կառուցված: Այդ ժամանակ քանդեցին քսանից ավելի վրացական եկեղեցիներ, փրկվեցին միայն Մետեխը, «Ջվրիս մամա»-ն, Սիոնը, Անչիսխատին և Քաշվեթը: Հայկական եկեղեցիները մնացին անվնաս: Միայն ներսում թաքնվածներին սրի քաշեցին: Այսպես շարունակվեց մեկուկես ժամ: Թաքնվածները ասում էին, որ իրենք հայեր են, բայց պարսիկները չէին հանգստանում նրանց հայտարարություններից:

— Եթե հայեր եք, ինչո՞ւ եք թաքնվում այստեղ:

Այդ ժամանակ փրկվեց միայն Սայաթ-Նովայի կինը՝ Մարիամը:

Սպանվելու ահից շատ վրացիներ ասում էին՝ հայ ենք: Թշնամու գնալուց հետո վրացական եկեղեցիներն անտեր էին: Երեցները ոչ մի տեղ չէին երևում. բոլորը վախից դուրս էին գնացել: Թիֆլիսում մնացածներից մի մասին գերի տարան Պարսկաստան, մյուս մասն էլ կռվում զոհվեց: Իսկ վրացիներից ովքեր փրկվեցին՝ սկսեցին հայի եկեղեցի հաճախել:

Դոսիթես Փիցխեաուրու հաղորդմամբ՝ Չուղուրեթում, Կուկիայում, Շավսոփեաուրու, Վերայում և Հավլաբարում չափազանց շատ վրացիներ հայկական դավանություն ընդունեցին: Բոլոր վրացիներն այս

էին ասում. «Միայն թե քրիստոնյաներ մնանք, դավանանքը ո՛րն ուզում է լինի»:

Ինչ վերաբերում է գյուղերին, ապա այնտեղ նույնպես, համարյա բոլոր գյուղերն սկսեցին անցնել. այդ ժամանակ հայ-գրիգորյանական դարձան թելեթ գյուղի բնակիչները: Վրացիանալ այլևս չէր լինի, որովհետև նրանք թշնամուն երդվել էին, որ իրենք հայեր են: Նաև, որ թշնամու՝ կրկին հետ դառնալու սարսափն էլ ուժեղ էր: Լուրեր էին տարածվել, թե թշնամին (Աղա Մահմադ խանը) նպատակ է դրել երկրորդ անգամ գալ Թիֆլիս, կոտորել բոլոր վրացիներին. դե էլ ինչո՞ւ մենք պիտի հանձնվեինք թշնամուն: Այդ ժամանակ են հայացել Մայսուրաձենները, Լազարեշվիլիները, Մերաբիշվիլիները, Ռամիլիկուշվիլիները և բազում շատերը»:

.....

Տասնյակ հարյուրամյակներ թոհուրոհերով անցած հարևան, եղբայրական հայերի և վրացիների միջև կանգնեց ցարիզմը: Ռուսական բյուրոկրատական կառավարությունը հարձակվում էր կայսրության ծայրամասային ժողովուրդների վրա նա ցանկանում էր ոտնատակ տալ ոչ ռուս ժողովուրդների ազգային հետաքրքրությունները, ջլատել նրանց ուժերը, խանգարել ազգային միասնությունը և ժողովրդին հեռու պահել համընդհանուր պայքարից: Այդ վայրագ պայքարում ցարիզմը հաճախ վարում էր հարևան ժողովուրդներին միմյանց դեմ հանելու քաղաքականություն և նրանց աստիճանաբար հեռացնում պայքարի հիմնական ուղուց. ցարիզմի այս քաղաքականությունը, որտեղ էլ որ կիրառվեց, անցանկալի, երբեմն էլ սարսեցուցիչ հետևանքներ ունեցավ:

«Պայքարի ասպարեզ ելան խուդաբաշովները, Քիշմիշովները, Նահապետյանները, Ելովները, Պատկանովները, Արծրունիները և ուրիշներ, որոնք նպատակ էին դրել, հայ և վրաց ժողովուրդների ազգային պատմական կյանքը կեղծելով և անպատվելով, Վրաստանում ամուր հող ստեղծել հայ բուրժուազիայի համար, նպաստել դասակարգային պայքարը թուլացնելուն և ազգային թշնամանք հրահրելուն:

Իլիա ճավճավաձեն այս անձանց «հայերի մի խումբ» է անվանել, որոնք բացահայտորեն շնուն էին հայ ժողովրդի դեմ՝ անտեսելով

նրանց իսկական իղծերը...» («Թեմի», 1918 թ., N 8, Ակադի Ծերեթելի, «Իմ դավանանքը»):

Պատմությունն իր օրինաչափությունն ունի, և վաղ թե ուշ արդարությունը կհաղթի: Կյանքը երևան հանեց պատմական իրողությունը կեղծողներին և պարարտ հող ստեղծեց ճշմարտությունը վերականգնելու համար:

Իսկոբ ԱՍՈՒԲՇՎԻԼԻ  
«Մնաթրփ», 1989 թ., թիվ 10, էջ 134-144

## ՎՐԱՍՏԱՆԻ ԼԻՆԵԼ-ՉԼԻՆԵԼԸ\* (ծնելիության պրոբլեմը)

...Ինչո՞վ էր պայմանավորված Մեսխեթ-Ջավախքը վրաց ազգաբնակչությունից հետզհետե դատարկելու և ոչ վրացի, մասնավորապես, հայ ազգաբնակչությանը լցնելու իրողությունը: Նրանով, որ պատմականորեն ցարիզմի գաղութատիրական քաղաքականությունը նպատակ էր դրել այդ երկրամասը քայլ առ քայլ հանձնել Չայաստանին, դրանով իսկ Վրաստանը բաժան-բաժան անել և ենթարկել ասիմիլյացիայի: Սույն միտումը, ցավոք, այժմ էլ շարունակվում է: Այդ են հավաստում բազմաթիվ փաստեր, որոնցից մենք կթվարկենք մի քանիսը միայն:

1. Ամբողջ Մեսխեթ-Ջավախքը տարիներ շարունակ հայտարարված էր սահմանային գոտի. Վրաստանի ազգաբնակչությանն արգելվում էր այնտեղ գնալ առանց անցաթղթի, որը մեծապես դժվարացնում էր երթևեկը, և դա այն ժամանակ, երբ Չայաստանից հնարավոր էր այնտեղ մուտք գործել առանց անցաթղթի: Ի՞նչ է սա, եթե ոչ հայ ազգաբնակչությանն արտոնություն տալ՝ Մեսխեթ-Ջավախքը յուրացնելու:

2. Ջավախքի վրաց ազգաբնակչության համար ստեղծվել են անտանելի պայմաններ. ոչ վրացի ազգաբնակչության շովինիստորեն տրամադրված մասը հալածում է մեծ փոքրամասնություն կազմող վրացի ազգաբնակչությանը և ստիպում նրան հեռանալ հայրենի երկրից. տարածվում էին հակավրացական թուրքիկներ, փակվում էին վրացական դպրոցները, ավերվում էին վրաց մշակույթի հուշարձանները, վրացական գյուղերի համար նախատեսված փոխադրամիջոցները տրվում էին ոչ վրացի

\* Թարգմանվում է մասնակի կրճատումներով:

ցական գյուղերին. այս ամենով հանդերձ, այսօր էլ Ախալքալաքի անասնաբուժական ինստիտուտում վրացական բաժին գոյություն չունի:

3. Ախալքալաքի և Ջավախքի մշտական հյուրերն են հայ մշակույթի գործիչները, որոնք իրենց ազիտացիայով նրանց նեջ ներարկում են զավթողամուլական զգացումներ. հետևանքը վրացիներին հալածելն է, վրաց մշակույթի հուշարձանների ավերումը և այլ վայրագություններ: Օրինակ՝ Կումուրդո հուշարձանն առայսօր կանգնած է ի ողորմություն այն բանի, որ հուշարձանների պահպանության մեր մշակները խաբում են գյուղին, թե, իբր, դա հայկական ճարտարապետության հուշարձան է. ահա հենց սրա շնորհիվ է մինչև հիմա այն անձեռնմխելի մնացել:

4. Վրացի գրողները և մշակույթի գործիչները չեն հաճախում ոչ միայն Ախալքալաքի շրջան, այլև Ախալցխա, Ասպինձա և Ադիգեն (հնարավոր է՝ վախի պատճառով): Հարկ է նշել, որ վերջին շրջանում Ախալցխայում նույնպես նկատվում են հակավրացական ելույթներ: Այժմ կրկին հարց տանք, թե այստեղ ինչպե՞ս պետք է բազմանա վրաց ազգաբնակչությունը, եթե, առհասարակ, չկան սոցիալական պայմաններ, չկա գազ, չկա ջուր, մթերքի ճգնաժամ է. մթերքի համար ժողովուրդն ստիպված Չայաստան է գնում:

.....

Վերոհիշյալ հոդվածի հեղինակը առաջ է քաշել լոզունգ. «Բազմանալու հարցում ընդօրինակենք եղբայրական Չայաստանին»: Նա նորից մոռանում է, որ պատմականորեն ռուսական շովինիզմը առաջնությունը տալիս է հայերին՝ վրացիներին համեմատ, և Վրաստանն աստիճանաբար գաղութացնելու նրանց առաքելությունն իր վրա է վերցնում (քանզի իր ազգաբնակչությունը չէր բավարարում այդ նպատակին հասնելու համար):

Հայերի կողմից Մեսխեթ-Ջավախքի գաղութացումն սկսվել է դեռևս Պասկևիչի ժամանակից, որն այսօր հասել է գագաթնակետին: Հայերի արտոնությունը երևում է նաև այն բանում, որ նրանք, փաստորեն, նվաճեցին մեր Սև ծովի ափերը, հատկապես՝ Աբխազիան և Աջարիան (ինչում նրանց ոչ ոք չի խանգարում), մինչդեռ վրաց ազգությանը պատկանող քաղաքացու համար Աբխազիայում գրանցվելը մեծագույն պրոբլեմ է:

Հայերի համար իրենց հայրենիքում ոչ ոք արհեստականորեն ժողովրդագրական ճգնաժամ չի ստեղծում, ոչ ոք չի վտարում իրենց հայ-



րենի հողից, ոչ ոք արհեստականորեն պայմաններ չի ստեղծում զանգվածաբար Ռուսաստան գաղթելու համար, ոչ ոք չի խլում կրոնն ու եկեղեցին, լեզուն, մշակույթը, ոչ ոք չի կեղծում ու հայիոյում պատմությունը, ոչ ոք Չայաստանը չի համարում Վրաստան, Ադրբեջան կամ որևէ այլ ազգի ժառանգական տարածք: Այս ամենը, շնորհիվ այն բանի, որ Ռուսաստանի կովկասյան քաղաքականությունը իր նպատակների իրականացման ճանապարհին, հանձինս հայերի, երբեք չի տեսել իբրև վտանգավոր տարր, ընդհակառակը, նրանց միշտ համարել են հնազանդ և հուսալի հպատակներ՝ ադրբեջանցիներից հետո:

Ասում են, թե վերջերս, Վազգեն Առաջինը էջմիածնում այսպիսի լուզուզով է ավարտել իր քարոզը. «Չայե՛ր, նվաճեցե՛ք Սև ծովի ափերը»: Պարզ է՝ դրանով նա նկատի չունի սոսկ Ղրիմի ու Անատոլիայի ափերը: Ի դեպ՝ Վազգենը ոչ միայն լուզուզներով է աջակից լինում իր հայրենակիցների բազմանալուն՝ մեր որոշ թերթերի նման, այլ ֆինանսավորում է Վրաստանում տնավորվող հայ գաղութաբնակներին (ակնհայտ է, որ եթե պաշտոնականությունը չօգնի Վազգենին, նա այդքան ո՛չ համարձակություն կդրսևորի, ո՛չ էլ հնարավորություն կունենա): Պլանը հետևյալն է. մոտալուտ տարիներին Վրաստանում ազգաբնակչությունը կհասնի նվազագույնի, այնպես որ, Ջավախքի փորձով ոգևորված, շովինիստներն այսօր արդեն ամբողջ Վրաստանն են աչքի տակ առել:

Պարզ է՝ դաշնակների այս հետմորդները չեն ուզում տեսնել, թե նման հարձակումներով ինչպիսի փոս են փորում հայ-վրացական պատմական եղբայրության համար կամ ում ջրաղացին են ջուր լցնում:

*Զվիադ ԳԱՄՍԱՆՈՒՐԴԻԱ  
«Լիտերատուրուլի Սաքարթվելո»  
8 հունիսի, 1990 թ.*

## ԹԻՎ 24 ԲԱՆԱԶԵՎԻ ՍԱՍԻՆ

...Չգիտեմ՝ իմ խոսքը կհասնի՞, թե չէ, բայց ուզում եմ դիմել Չայրիկյանին.

Պարո՛ն Պարույր,

Զվիադ Գամսախուրդիան և Դուք մի տիպի քաղաքագետներ եք: Ինչպես Դուք, Զվիադը նույնպես, երբեք թույլ չի տալիս «իմտերնացիոնալ» սխալ և երբեք չի մոռանում, որ գլխավոր նպատակը հայրենիքն է:

Զեր երկուսի միջև տարբերությունն այն է, պարո՛ն Պարույր, որ Զվիադ Գամսախուրդիան չի ձգտում իմտերնացիոնալ և համամարդկային լուզուզներով դիմակավորվել, երբ գործում է ի բարօրություն Վրաստանի:

Երբ Դուք ասում եք, թե յուրաքանչյուր որոշակի դեպքի՝ արդարի ու անարդարի քննությունը մեզ հեռուն կտանի, Չեր հայրենիքի՝ Չայաստանի շահերից եք ելնում: Մինչդեռ Չեզ այնպես եք պահում, ասես համաշխարհային դեմոկրատիայի մասին եք հոգ տանում:

«Մեզ հեռո՛ւն կտանի...»:

Գիտեք, որ եթե հեռուն գնայիք, ի վերջո պիտի բախվեիք 1829 թ. նոյեմբերի 18-ին: Հավանաբար, հիշում եք՝ դա այն օրն է, երբ Պասկևիչին հայտնեցին, որ ռուսական կայսրությունը բավարարել է նրա պահանջը, այսինքն՝ նա կարող է սկսել Թուրքիայից 10 հազ. հայ ընտանիքների տեղափոխությունը:

Այսպես թուրքերի ոչնչացումից փրկվեցին բազմաթիվ հայեր:

Բոզդանովկայի այժմյան հայերը վրացական գթասիրտ հողն այսպես ժառանգություն ստացան այն հայերից:

Այնպես որ, պարո՛ն Պարույր, Բազդանովկայում էթնոբախում չի եղել:

Այն հայերը, ովքեր այժմ ընդդիմանում են վրացական հողում վրացիների բնակվելուն, վրացերեն միայն մեկ անուն ունեն՝ երախտամոռություն և անխղճություն:

Իսկ Ձեր սխալն այն է, պարո՛ն Պարույր, որ «հեռուն չգնանք» ասելով՝ աջակից եք դառնում ակնբախ անարդարությանը:

Մինչդեռ դա կործանարար է, քանզի տակտիկապես գուցես շահեք, բայց ստրատեգիական առումով կպարտվեք:

Աստված բարձր է և, վերջիվերջո, նա բոլորին կտա իր արդար վճիռը՝ ո՛վ ինչի՛ արժանի է:

Ձվիադ Գամսախուրդիան չի վախեցել «հեռուն գնալուց», որովհետև բոլոր «էթնոբախումներում» նրա ժողովուրդն է արդար:

Իսկ նրա մեն-միակ «հանցանքն» այն է, որ վրաց պատմական հողերի վրա ծայրեծայր լցված օտարազգիներին հիշեցնում է պատմական ճշմարտությունը:

Ես նույնպես ուզում եմ թիվ 24 բանաձևն ստորագրած չորս հայերիդ և երկու ադրբեջանցիներին, որ Ձվիադ Գամսախուրդիային և նրա կողմնակիցներին մեղադրում եք «ազգային անհաշտությունը» և «ազգամիջյան պրոբլեմները ուժի գործադրումով որոշելու հակադեմոկրատական դիրքերում կանգնելու» մեջ, հիշեցնել, որ Վրաստանից ոչ ոք ոչ մի այլազգու չի պարտադրել հեռանալ, մինչդեռ այն, ինչ տեղի ունեցավ Ձեր հանրապետություններում, բոլորը գիտեն, թե որքան ցավալի է, վշտալի և ոչ դեմոկրատական:

Ավելացնեմ, որ շատ հետաքրքիր կլիներ, եթե «Վրացական ֆիլմ» թերթը տպագրեր նաև այն բանաձևը, որտեղ խոսվում է Ադրբեջանի և Հայաստանի միջև գոյություն ունեցող «էթնոբախման» մասին:

Հավատա՞մ, որ նրանում էլ է գրված՝ հեռուն չգնանք, չքննենք՝ ո՛վ է արդար, ո՛վ՝ անարդար: Հավատա՞մ, որ հայերդ ստորագրել եք այնպիսի փաստաթուղթ, որտեղ նշված է, թե բախման համար մեղավոր է ոմն հայ, իսկ ադրբեջանցիներն էլ գլուխ են ջարդում, թե՛ չէ ու չէ՛ ամեն ինչում մեղավորը մեր մարդն է:

Չեմ կարող հավատալ:

Ներեցե՛ք անմիջականությանս համար, թիվ 24 բանաձևն ստորագրող հայ և ադրբեջանցի բարեկամներ, բայց պիտի ասեմ Ձեզ. Դուք ցանկանում եք, հակադեմոկրատիայի և ազգային շարժումները մարողի պիտակ կպցնելով, վախեցնել նրանց, ում թվում է, թե այսպես

կոչված «էթնոբախումները» իրականում ոտնձգություններ են Վրաստանի կենսական հետաքրքրությունների դեմ, և դրանց արծագանքելն անիրաժեշտ է:

Եվ վերջում էլի մի քանի բացատրություն.

«էթնոբախումները» չակերտների մեջ եմ վերցնում և «այսպես կոչված» եմ ասում, որովհետև դրանք ոչ թե էթնոբախումներ են, այլ ագրեսիա՝ Վրաստանի և վրացիների դեմ:

Բարիդրացիական հարաբերություններ՝ բոլորովին էլ չի նշանակում այն, թե աչք պիտի փակենք իրական հանգամանքների առաջ և վերացական դատողություններ անենք դեմոկրատիայի և ազգային իրավունքների մասին:

«Քանի որ «Դեմոկրատիա և անկախություն» կազմակերպության պրեզիդենտը հայ է, ուղղակի խոսենք մեր երկու ժողովուրդների հարաբերությունների մասին:

Այս պահին իմ առջև դրված է Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Վազգեն Առաջինի նամակը՝ տպագրված Երևանում ռուսաց լեզվով լույս տեսնող «Կոմունիստ» թերթում: Դա բաց նամակ է, որ Վազգեն Առաջինը ուղարկել է Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարք Իլիա Երկրորդին:

Հենց այն հանգամանքը, թե ինչպես են անվանակոչվում մեր եկեղեցիների հայրապետները՝ ինքնին շատ բան է ասում:

Իլիա Երկրորդի համայնքը համայն Վրաստանն է: Կամ մեկ երկիր է՝ երկնքի ներքո: Մինչդեռ Վազգեն Առաջինի համայնքը այս աշխարհում ապրող բոլոր հայերն են. ասել է թե՛ նրա քարոզները հասնում են երկրազնդի բոլոր քունջուպուծախները:

Պատմական ծանր ճակատագրի բերումով հայ ժողովուրդը սփռվել է ամբողջ երկրագնդով:

Սա ցավալի պատմություն է և, պարզ է, խորապես անհանգստացնում է Նորին Սրբություն Վազգեն Առաջինին:

Նա գրում է. «...Իմ բոլոր քարոզները ուղղված հայերին, եղել են կոչեր համախմբվելու Մայր հայրենիքի տարածքի վրա, չցրվել, չհեռանալ մայր հողից: Ավելին, երբ լսել եմ, որ որոշ ընտանիքներ, անձնական նկատումներով, Հայաստանից տեղափոխվել են Սոչի կամ Սուխումի, կամ Միջին Ասիա, ես մեղադրել եմ նրանց և, այո՛, կոչեր եմ ուղղել մեր ժողովրդին, չիտեսել նրանց օրինակին և չբաժանվել մայր երկրից: Իսկ Վրաստանում բնակվող հայերին միշտ, ամեն առիթով հորդորել եմ և հի-

մա էլ նրանց կոչ են անում՝ մնալ հավատարիմ քաղաքացիները վրացական հայրենիքի, նվիրված վրաց եղբայր ժողովրդի բարօրության, նրանց արդար սպասումների իրագործման»:

Հայերը բնակվում են Վրաստանում:

Բնակվեն թող, պարոն, բոլորը գիտեն՝ ինչպիսի հյուրընկալներ ենք մենք:

Բայց Վազգեն Առաջինի դատողության մեջ տրամաբանությունը որ խաթարված է, դա պետք է նշել:

Հապա կարդացեք մեկը մյուսին հաջորդող այն խոսքերը, որ ես ընդգծել եմ. տեսե՛ք՝ ինչ տարօրինակ բան է ստացվում: «Իմ բոլոր քարոզները ուղղված հայերին, եղել են կոչեր համախմբվելու Մայր հայրենիքի տարածքի վրա, իսկ Վրաստանում բնակվող հայերին կոչ են անում մնալ հավատարիմ քաղաքացիները վրացական հայրենիքի»:

Եթե հայերին կոչ է անում՝ Մայր հայրենիքում հավաքվել՝ բռունցքվելու, Վրաստանում ապրող հայերին ինչո՞ւ նույնը չի ասում:

Ի՞նչ մտածենք՝ որ այս հայերին իսկական հայեր չի՞ համարում Վազգեն Առաջինը:

Թե՞ որևէ ֆանտաստիկ բան պետք է մտածենք՝ որ «Մայր հայրենիքը» և «վրացական հայրենիքը» ընդունում է իբրև նույն հասկացությունը:

Ինձ համար՝ վրացական մտածողության տեր մարդուս համար, բոլորովին անհասկանալի է Ամենայն Հայոց կաթողիկոսի տրամաբանությունը:

Իբրև օրինակ ասեմ, որ երբ ժողովրդական ճակատի կանոնադրությունն էր գրվում, ես նույնպես գտնվում էի խմբագրական կոլեգիայում, և իմ առաջարկությամբ կանոնադրության մեջ մտցվեց մի կետ. Վրաստանի ժողովրդական ճակատը պետք է հոգ տանի Վրաստանից դուրս բնակվող բոլոր վրացիների՝ հայրենիք վերադառնալու համար:

Վրաստանում այժմ բազմաթիվ կուսակցություններ և կազմակերպություններ կան: Միակը, որ անհամաձայնության տեղիք չի տալիս, հենց այս խնդիրն է:

Վրացիներին ինքնին հասկանալի է, որ լավ կլինի, եթե բոլոր երկրներից ժամանեն մեր ազգակիցները, և հավաքվենք Վրաստանում:

Բացառություն մենք թույլ չենք տալիս: Չենք ասում՝ բոլորը գան, իսկ ա՛յ, օրինակ, Մոլդովայից թող չգան, մնան մոլդովական հայրենիքին հավատարիմ քաղաքացիներ:

Կարող եմ հիշեցնել Նորին Սրբություն Վազգեն Առաջինին, որ նրա բազմակի կոչերը՝ հայե՛ր, մնացե՛ք հավատարիմ քաղաքացիները վրացական հայրենիքի, որոշ հայեր այնպես հասկացան, կարծես կաթողիկոսն ուզում էր ասել՝ ինչ գնով էլ լինի՝ Վրաստանի քաղաքացիները դարձեք:

Կարող եք վերցնել բնակարաններ փոխանակելու բյուլետենը և կտեսնեք, որ Ադրբեջանից որոշակի պատճառների հետևանքով փախչել ցանկացող հայերը ավելի հաճախ դեպի Թբիլիսի են ձգտում և ոչ թե դեպի իրենց Մայր հայրենիքը՝ Երևան:

Ահա՛ չօգտագործված մի օրինակ:

Թբիլիսիի Կալինինի ժողովրդական դեպուտատների խորհրդի գործկոմի 1990 թ. հունիսի 6-ի թիվ 206 հրամանի հիման վրա տրվել է երկսենյականոց բնակարանի օրդեր: Հասցեն՝ Վարկեթիլի 3, 3-ա միկրոշրջան, շենք 343, բն. 30:

Պարզվում է, որ այս բնակարանում պետք է տնավորվեն Լենինականից եկած Մանանա Միքայելի Հակոբյանը և իր զավակները՝ Կառլենը և Դիանան:

Կրկին Պարույր Հայրիկյանին պիտի դիմեմ.

— Մի՞թե Դուք կարծում եք, պարո՞ն Պարույր, վրացիներս այնքան լավ ենք ապրում, որ բոլորս արդեն բնակարաններ ունենք և հիմա հարևան հանրապետություններին պետք է բավարարենք:

Այդպես չէ:

Ես ճանաչում եմ երիտասարդ ամուսինների՝ ուսանողների, որոնք բոլորովին վերջերս երեք զույգ ունեցան:

Աստված կմեծացնի, բայց հո մե՞նք էլ պետք է օգնենք:

Չգիտեմ՝ ինչ պիտակ կկացնի ինձ Ձեր ինտերնացիոնալ կազմակերպությունը, բայց, իմ կարծիքով, Լենինականից Մանանա Հակոբյանից ավելի այս վրացիներին՝ Ավթանդիլ Մելիքիժեհին, նրա կնոջը և նրանց երեք զավակներին է պատկանում այս երկսենյականոց բնակարանը:

Քաղաքականությունն արդար, պատվելի և դեմոկրատական կլինի այն ժամանակ, պարո՞ն Պարույր, երբ այդ քաղաքականությունը հիմնված կլինի ոչ թե ընդհանուր լոզունգների վրա, այլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ արդար-անարդարին որոշելու:

Դա հեռուն չի տանի, ինչպես Դուք եք ուզում մեզ հավատացնել, այլ կմոտեցնի ճշմարտությանը, այդքանով էլ՝ արդարությանը:

Եվ վերջում կրկին դառնանք Ձվիադ Գամսախուրդիա անձնավորությանը:

...Հիմա, երբ լարվածությունը հասել է գագաթնակետին, նրանով են ուզում նպաստել փոխըմբռնմանը, որ կփորձեն բացատրել Գեորգի ճանտուրիային, թե ես՝ վրացի այր, քաղաքացի և գրող, վրացի բոլոր քաղաքագետներից ավելի շատ ինչո՞ւ են Ձվիադ Գամսախուրդիա քաղաքագետին սիրում:

Սա կարելի է բացատրել և երկար, բայց այդ ժամանակ հարկ կլինի, որ ես գիրք գրեմ: Իսկ կարճ այսպես կասեմ.

— Ձվիադ Գամսախուրդիան այնպիսի վրացի քաղաքագետ է, որ միշտ և ամենուր Վրաստանն է հիշում:

Ո՛չ դեմոկրատիան, ո՛չ ազատությունը Ձվիադ Գամսախուրդիայի համար ինքնանպատակ չեն: Թե՛ մեկը և թե՛ մյուսը նա միջոց է համարում այն բանի, որ վրաց ազգը լինի ուժեղ, արդար, հոգով պայծառ և գեղեցիկ: Եվ դրան հասնելու համար վրաց ժողովուրդը հողագնդի վրա մի փոքրիկ տարածք ունի միայն՝ Վրաստանը:

Թիվ 24 բնածնի հեղինակները կհամաձայնեն ինձ հետ, որ ասվածը չի հակասում համաշխարհային դեմոկրատիային և ներդաշն եղբայրությանը, միասնությանը, ազատությանը:

7.9. Հողվածը գրելուց հետո երկու լուր իմացա.

Առաջին. Պարզվում է, որ «Դեմոկրատիա և անկախություն» կազմակերպության այն նիստը, որի ժամանակ ընդունել են թիվ 24 բնածնը, սկսել են երեքուկես ժամ ուշացումով: Պատճառը եղել է այն, որ Ադրբեջանի պատգամավորությունը պահանջել է հանել նիստերի դահլիճում կախված այն քարտեզը, որի վրա Հայաստանն ու Ղարաբաղը միևնույն գույնով են ներկված եղել:

Այս իրողությունը հաստատում է իմ կասկածը, որ հայ և ադրբեջանցի քաղաքագետները միայն Վրաստանում առաջացած «էթնոբախումների» պատճառները գնահատելու հարցում են համերաշխ:

Երկրորդ լուրը.

Պարույր Հայրիկյանը ելույթ ունեցավ արտասահմանյան ռադիոյով և Վրաստանում առաջացած «էթնոբախումների» համար մեղադ-

րեց վրաց ազգային շարժմանը: Ոչ թե Ձվիադ Գամսախուրդիային և Կլոր սեղանին, ինչպես դա արված է թիվ 24 բնածնում, այլ ամբողջ շարժմանը:

Այնպես որ, ցավոք, շատ շուտ իրականացավ մեր գուշակությունը: Վրացիների կողմից այլ վրացիների դեմ ստորագրած փաստաթուղթը ամբողջովին օգտագործվեց բոլոր վրացիների դեմ:

Գոնե այս դառն իրողությունից դաս առնենք, որ վրացին իր եղբոր հետ վիճելիս ուրիշին դատավոր չընտրի:

Տա՛ Աստված, որ սա լինի վերջին սխալը մեր ազգային շարժման մեջ:

Գուրամ ՊԵՏՐԻԱՇՎԻԼԻ  
«Լիտերատուրուլի Սաքարթվելո»  
10 օգոստոսի, 1990 թ.

## ՓՈՔՐԻԿ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

«Լիտերատուրուլի Սաքարթվելո» շաբաթաթերթի ս.թ. օգոստոսի 10-ի համարում տպագրվել է Գուրամ Պետրիաշվիլու «Թիվ 24 բանաձևի մասին» հոդվածը:

Ես չեմ անդրադառնա այդ հովածում արծարծված որոշ դատողությունների. անաչառ և շատ թե քիչ կարդացած քմահաճ ընթերցողն էլ առանց ուրիշի օգնության կհամոզվի այդ դատողությունների անհեթեթության մեջ:

Ես ուզում եմ անդրադառնալ երկու զրպարտության, որ օգտագործել է Գուրամ Պետրիաշվիլին, բայց որոնք զուրկ են որևէ հիմքից:

Առաջին զրպարտության համաձայն՝ Պրազայի կոնֆերանսում թիվ 24 բանաձևն ընդունվել է երեքուկես ժամ ուշացումով, որովհետև Ադրբեջանի պատգամավորությունը իբրև թե պահանջել է հանել այն քարտեզը, որի վրա Չայաստանն ու Ղարաբաղը մեկ գույնով են ներկված եղել:

Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ. այնտեղ մեծ ոչինչ տեղի չի ունեցել: Ավելին՝ նիստերի դահլիճում կախված չի եղել և ոչ մի քարտեզ:

Երկրորդ զրպարտությունը վերաբերում է Պարույր Չայրիկյանի ռադիոհարցազրույցին...Ո՛չ Պետրիաշվիլու մատնանշած ռադիոհարցազրույցում, ո՛չ որևէ այլ տեղ Չայրիկյանը Վրաստանի ազգային ազատագրական շարժումը չի անարգել, մինչդեռ հակառակ փաստեր շատ կգտնվեն:

Վրաստանի հեռուստատեսության ներկայացուցիչները Պրահայում հարցազրույց ունեցան Պարույր Չայրիկյանի հետ, և եթե Վրաստա-

նի հեռուստատեսությունը ցուցադրի այդտեսագրությունը, բոլորը կհամոզվեն, թե ի դեմս Պարույր Չայրիկյանի (Մերաբ Կոստավայի հոգևոր եղբոր) Վրաստանն ինչ մեծ բարեկամ ունի:

Այս զրպարտություններին գուցեև չարժեր ուշադրություն դարձնել, բայց, ցավոք, մեծ զրպարտություններից ոմանք հետագայում կարող են «քաղաքականություն» սարքել:

Եվ դարձյալ. եթե զգում ենք, որ քաղաքագետներ չենք, ավելի լավ չէ՞ կրկին զբաղվենք հեքիաթներ գրելով:

Գեորգի ՃԱՆՏՈՒՐԻԱ  
«Լիտերատուրուլի Սաքարթվելո»  
17 օգոստոսի, 1990 թ.

## ԱՅՄՊԵՍ ԱՆԱՍՏՎԱԾՈՐԵՆ

1987 թվականին «Հայաստան» հրատարակչությունը Երևանում հայերեն հրատարակեց Լեոյի (Առաքել Բաբախանյան) երկերի ժողովածուի տասնհատորյակի 6-րդ հատորը, որտեղ զետեղված են Լեոյի «Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի» (սա այն Գրիգոր Արծրունին է, որի հետ բանավեճ են ունեցել Իլիա ճավճավաձեն և Ակակի Ծերեթեփին) և «Մեսրոպ Թաղիադյան» աշխատությունները: Հրատարակությունն ունի չորս կազմող, յոթ հոգուց բաղկացած խմբագրական կոլեգիա. գիտական խմբագիրն է Հայաստանի ԳԱ ակադեմիկոս, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը: Գրքում զետեղված է «խմբագրի կողմից» ակնարկը:

Թվարկված աշխատություններից առաջին երկուսը Լեոն գրել է ընթացիկ դարի սկզբին: «Ստեփանոս Նազարյանցը» տպագրվել է Թբիլիսիում 1902 թ., իսկ «Գրիգոր Արծրունին»՝ 1902-1905 թթ.՝ երեք գրքով, դարձյալ Թբիլիսիում, «Մեսրոպ Թաղիադյանը» գրել է համեմատաբար ուշ և տպագրել Բաքվում լույս տեսնող «Գործ» հայկական ամսագրի 1917 թ. մի քանի համարներում:

Երևանում ինչ են հրատարակում, ինչ չեն հրատարակում, դա, իհարկե, մեր գործը չէ, բայց խմբագրական կոլեգիան և գիտական խմբագիրը զոնե քննադատական հղումներ պիտի անեին «հայ Կլուչնակի» անունը կրող Լեոյի աշխատությունների այն տեղերի առնչությամբ, որտեղ անարգված են Վրաստանն ու վրաց ժողովուրդը: Ցավոք, նման ոչինչ չի արվել: Ավելին՝ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը (այս մասին մանրամասն կխոսենք ստորև) ճշմարիտ է համարել վրաց-հայկական փոխհարաբերությունների լեոյական բնութագիրը:

Ո՞վ էր Լեոն: «Հայկական սովետական հանրագիտարանի» չորրորդ հատորում (Երևան, 1978 թ.) նրա մասին գրված է. «Լեո, 1860, Շուշի — 1932, Երևան, հայ պատմաբան, հրապարակախոս, գրող, գրականագետ: Պրոֆեսոր (1925), ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամ (1925): 1895-1906-ին «Մշակ» թերթի (Թիֆլիս) մշտական աշխատակիցն էր ու քարտուղարը: 1906-07-ին դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա՝ տեղափոխվել Թիֆլիս ու ամբողջովին նվիրվել գիտական աշխատանքի: 1924-ից հրավիրվել է Երևան և պետ. համալսարանում հայագիտական տարբեր առարկաներ դասավանդել մինչև կյանքի վերջը... Հաղթահարելով կղերապառաջական պատմահայեցողությունը՝ Լեոն կանգնել է ժամանակի առաջավոր հայագիտության դիրքերում և հայ ժողովրդի պատմության հանգուցային շատ հարցեր նոր ձևով լուսաբանել: Այս տեսակետից ուշագրավ են «Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի», «Ս. Մեսրոպ» աշխատությունները: Հայ ժողովրդի պատմությունը Լեոն սերտորեն կապակցել է հարևան երկրների պատմության հետ, անցկացրել զուգահեռներ, համեմատություններ, նշել փոխազդեցությունները, հայտնաբերել առանձնահատկություններ և ընդհանրություններ հայ և հարևան ժողովուրդների սոցիալական, քաղաքական ու մշակութային կյանքում: Լեոյի աշխատությունները պարունակում են ինչպես հարուստ փաստական նյութեր, այնպես էլ պատմագիտական կուռ ընդհանրացումներ, աչքի են ընկնում գրելաձևի ինքնատիպությամբ ու շարադրանքի մատչելիությամբ: Այս տեսակետից Լեոն հայ պատմագիտության նշանավոր դեմքերից է, խոր ազդեցություն է թողել հայ պատմաբանների հետագա սերունդների վրա»:

Լեոյի երկերի ժողովածուի առաջին իսկ պարբերությունն սկսվում է այսպես. «Ռուսաց տիրապետությունը Անդրկովկասում պաշտոնապես հաստատվեց 1801 թվականի փետրվարի 16-ին: Այդ օրը մեր լայնատարած, զեղեցիկ երկրի մի փոքրիկ մասն էր հյուսիսային մեծ պետության սեփականություն դառնում՝ Վրաստանը: Բայցևայնպես, իրողությունը ահագին նշանակություն ուներ ամբողջ Կովկասի համար» (էջ 7):

Այլևս ուշադրություն չդարձնելով ուրիշ անճշտությունների վրա՝ նշենք միայն, որ ամբողջ Անդրկովկասը հայտարարված է Հայոց երկիր: Ինչ խոսք՝ XX դարի սկզբին Լեոն ինտերնացիոնալիստական գաղափարներով չէր առաջնորդվում և ամբողջ Անդրկովկասը այս երկրում



IX–XI դարերում Անդրկովկասի քաղաքական պատմությանը քաջածանոթ, բոլորովին հակառակ իրողությունը հաստատող, աղաղակող փաստերը եթե մի կողմ թողնենք, «Քարերի աղաղակին» եթե ուշադրություն չդարձնենք, Ա. Ալպոյաճյանին և նրա հանցակիցներին, ըստ երևույթին, ընդհանրապես անծանոթ են Գրիգոր Խանձթելու, Ստեփանե Մտբևարու, Գեորգի Մերչուլու, Իոանե Չոսիմեի, Էքվթիմե և Գեորգի Մթածմինդելինների, Գեորգի Մցիրեի և այն ժամանակվա վրացի այլ գործիչների անունները, նրանց՝ ազգային ոգով տոգորված գործունեությունը, մասնավորապես, հստակ նպատակներ հետամտող հակամիաբնական (հակագրիգորյանական, հակահայկական) ուղղվածությունը, այլապես նման հայտարարություններ անելը, հավանաբար, ամոթ կհամարեին:

Հավանաբար Լեոյին թվում է, թե թուրք–սելջուկները Վրաստանը ժամանակավորապես փրկեցին լիովին հայկականամալուց, իսկ XIX դարում այդ գործընթացն արդեն ավարտվել էր, և դրա համար Անդրկովկասը, մասնավորապես՝ Վրաստանը ևս, համարում է «մեր երկիրը»:

Այսպիսի տեսակետները հիմք ընդունելով՝ Հայաստանի դաշնակցական կառավարությունը միանգամայն անհիմն պահանջներ ներկայացրեց Վրաստանին: Ինչպես հայտնի է, այն տարիներին հրատարակվել էր Հայաստանի երկու քարտեզ, որոնց մեջ Թբիլիսին, Մցխեթը, Գորին, Ախալքալաքը, Ախալցխան, Բաթումը ներառված են Հայաստանի պետական սահմաններում (տե՛ս Իվ. Ջավախիշվիլի, Պ. Սուրգուլաձե, պրոֆ. Լիստ, Պատմական ռարիտետներ, 1989, էջ 60: «Իվանե Ջավախիշվիլու արխիվից», «Լիտերատուրուլի Սաքարթվելո», 23.09.88: Մեր հողվածը 1990 թ. սեպտեմբերի 2–ի «Կոմունիստի»–ում: Ի դեպ՝ արտասահմանում վերաբնակված դաշնակցական կուսակցությունը այսուհետ նորից նախապատրաստվում է ակտիվորեն ներգրավվել Հայաստանի կյանքի մեջ):

Ընթացիկ դարի սկզբին, երբ Լեոն վերոթվարկյալ աշխատությունները գրում էր Վրաստանում, վրաց–հայկական հարաբերությունները, մասնավորապես Թբիլիսիում, բավականին լարված էին: Դրա գլխավոր պատճառներից են Թբիլիսիի քաղաքային ընտրությունները, որոնք մեծ մասամբ ընթացել են Թբիլիսցի հայ մեծահարուստ վաճառականների սցենարով (տե՛ս Գ. Լասխիշվիլի, Մեմուարներ, Թբ., 1934, էջ 114–117, 153–154): Այդ լարված հարաբերությունների արդյունքն է Իլիա ճավճավաձեի «Հայ գիտնականները և քարերի աղաղակը», որն առաջին անգամ տպագրվել է 1892 թ.: Սրա առնչությամբ Լեոն հայտարարում է.

«Մեր այժմյան օրերում, երբ ազգայնամոլությունը այնքան կուրացրել է վրացի գործիչների մի մասը, հայերի դեմ համարյա խաչակրաց արշավանք է քարոզվում, և այդ ատելությունը հայերի դեմ վրացի ազգայնամոլները հիմնում են այն իրողության վրա, որ Վրաստանում վաշխառու են մեծ մասամբ հայերը» (էջ 474): Լեոն հայերին ատելու մեջ մեղադրում է նաև «Դրոեբա» թերթին: Նա գրում է, թե որոշ ժամանակ անց «Դրոեբա»–ն սկսեց «ատելություն քարոզել հայերի դեմ» (էջ 475): XIX դարի 70–ական թվականներին «Մշակի» խմբագրի՝ Գր. Արծրունու և նրա համախոհների դեմ «Դրոեբա»–ում տպագրվեցին նաև Ակակի Ծերեթելու հոդվածները և, հավանաբար, դա նկատի ունի Լեոն: Վրացի շովինիստ գործիչների շարքում այլոց հետ միասին նա անպայման նկատի ունի նաև Իլիա ճավճավաձեին, Ակակի Ծերեթելուն, Իակոբ Գոգեբաշվիլուն և Վաժա Փշավելային, քանզի այն տարիներին նրանք ստիպված էին ապացուցել, որ Վրաստանը հայկականացված չէ և ոչ էլ նպատակ ունի ենթարկվելու նման ճակատագրի:

Եթե վրացի գործիչները երբեմն բողոք էին արտահայտում, ապա դրա համար ունեին հիմնավոր պատճառներ: Հայ մեծահարուստ վաճառականների խարդավանքների շնորհիվ Թբիլիսիի քաղաքային ընտրություններից հեռացվեցին Իլիա ճավճավաձեն և վրացի ուրիշ նշանավոր գործիչներ (Գ. Լասխիշվիլի, «Մեմուարներ», էջ 115–116), մինչդեռ 1875 թվականից մինչև 1887 թ. Թբիլիսիի քաղաքային «գումայի ծայնավորը» «Մշակի» խմբագիր Գ. Արծրունին էր (Լեո, հ. 6, էջ 718), այս և այս կարգի ուրիշ փաստերի վրացիները ոչ մի արծազանք չպիտի՞ տային: Պարզ է՝ համբերությունն էլ սահման ուներ, և Իլիա ճավճավաձեն այդ ամենը գնահատեց այսպես. «Հայերն ասում են, թե ձեր մատով կպչելն իսկ մեզ զայրացնում է, իսկ մեր աքացիից դուք մի նեղացեք: Ես անցավոր աշխարհի ապօրինածինների՞ց եմք, որ մեզ այսպիսի բաներ են ասում, այսպիսի խորհուրդներ են տալիս»:

«Մի՞թե ակնհայտ չէ, որ այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Պատկանովը, փիլիսոփա Արծրունին, ոմն Ելովները, Խուղաբաշովները և բոլոր նրանց համքարները (նրանց թվում և Լեոն.— Ա. Ա.) ոչնչից չեն խորշում, միայն թե իրենց սևը սպիտակ ներկայացնեն, իսկ մեր սպիտակը սևացնեն՝ ըստ տեղի և ժամանակի պահանջի, ըստ իրենց ցանկության» (Իլիա ճավճավաձե, հ. 5, 1987, էջ 28, 103):



Ինչ վերաբերում է վրաստանաբնակ հայ վաշխառուների լաիրշուքյանը, ապա դրանց մասին անհամար նյութեր կան: Այսպես, օրինակ, Ջաքարիա Ճիճինաձեն գրում է, թե ոմն Իվ. Ջ-սկի՝ ազգությամբ ռուս, «երկար ժամանակ պրիստավ էր. նա չափազանց շատ կարիքավոր մարդկանց ունեցվածքներ է վերգրել վաշխառուների պարտքի դիմաց: Շատ վայրերում շատ չքավոր մարդիկ են անխղճորեն կործանվել. մեծ մասամբ պարտապաններին կործանել են հենց քրիստոնյաները, ավելի շատ՝ հայերը, մինչդեռ ռուսից նման գործերի ոչ մի դեպք չի եղել... Մի այսպիսի հայ վաշխառու այս պրիստավի (Իվ. Ջ-սկու.— Ա. Ա.) հոգին հանել է՝ շատ գյուղացիների ունեցվածքը վերգրել տալով ու ավերելով: Իմիջիայլոց, մի անգամ նա հիշյալ պրիստավին տարել է մի մարդու կալվածք, վերգրել տվել և վաճառել: Հետո անցել է անշարժ գույքը ծախելուն. վաճառել է նաև շարժական գույքը: Շարժական գույքը վաճառելու համար պրիստավին տանում է տուն և պրիստավից պահանջում, որ նա վերգրի նաև օրորոցը. որտեղ պառկած է եղել երեխան, և մի ձեռք անկողինը, որի մեջ պառկած է եղել հիվանդ մի ծերունի...»: Այդ վաշխառուն գյուղացուն 100 ռուբլի պարտքի փոխարեն, պարզվել է, ստիպել է վճարել 100 թուման (Ջ. Ճիճինաձե, Վրացի հրեաները Վրաստանում, 1990, էջ 45—47, տե՛ս նաև Ի. Մեունարզիա, Վրացի գրողները, 1954, էջ 123):

Լեոյի խոսքերով՝ «1866 թվին Թիֆլիսում մտցվեց քաղաքային կառավարության նոր կանոնադրությունը. առաջին քաղաքագլուխ ընտրվեց Արծրունին (Գր. Արծրունու հայրը՝ Երեմիան.— Ա. Ա.) և այդ ընտրությունը գոհություն պատճառեց քաղաքացիներին... «Թիֆլիսի ժողովուրդը,— գրում է «Հայկական աշխարհը»,— գիտե, որ պ. Արծրունին է մի գործունյա և ազնիվ մարդ, և այս արդեն բավական է. պ. Արծրունու ընտրության օրից ազնիվ ծանոթները, միմյանց պատահելով, շնորհավորում էին, որ պ. Արծրունին ընտրվել է քաղաքագլուխ» (Լեո, հ. 6, էջ 234—235):

Իբր վրացիները նույնպես գոհ են եղել, որ Երեմիա Արծրունին Թիֆլիսի քաղաքագլուխ է ընտրվել: Եթե հաշվի առնենք ընտրությունների հետ կապված վրաց-հայկական առճակատումը, ընդդիմությունը, նման բան, հասկանալի է, պետք է բացառենք: Լեոն պարզապես հարկ չի համարել թիֆլիսցի վրացիների կարծիքը հաշվի առնել, որովհետև իր նախնիների, իր համախոհների նման նա նույնպես մտածում էր, որ եթե ինչ-որ տեղ ինչ-որ վրացիներ հավաքվելով՝ մի տասը գոմի չափ տեղ են զբաղեցրել և այն էլ գրեթե լիովին հայերի ողորմածությամբ, ապա ի-

րենք՝ այդ վրացիները՝ իբրև ժողովուրդ, հիշատակվելու արժանի չեն, որովհետև բնաջնջման և ոչնչացման եզրին են կանգնած, դա էլ չլինի, նրանք այնքան խելք չունեն, որ դժբախտությունից մի բան հասկանան. առք ու վաճառքի ունակություն աստված նրանց չի տվել, տնտեսությունից ու չալվադարությունից բացի ուրիշ արհեստ չգիտեն, և այդ փոքր-մոքր գոմատեղերն էլ չկարողանալով օգտագործել՝ ծաղրի համար Վրաստան են կոչել» (Իլիա ճավճավաձե, հ. 5, էջ 22):

1872 թ. Արծրունին Թիֆլիսի «Տեխնիկական ընկերության» մի նիստում զեկուցում կարդացել և հայտարարել է, թե «անհրաժեշտ է Անդրկովկասից երկաթուղի տանել մինչև Հնդկաստան»: Այդ զեկուցումը նույն տարին լույս է տեսել առանձին բրոշյուրով: Երեմիա Արծրունին «կարծում էր, որ անգլիացիների ձեռքից հնդկական առևտրի մեծ մասը խլել կարելի է՝ անցկացնելով երկաթուղի Պարսկաստանի վրայով դեպի Հնդկաստան: Նրա ծրագրով երկաթուղին պիտի սկսվեր Բաքվից, անցներ հյուսիսային Պարսկաստանով դեպի Մեշեդ, Հերաք և Քաբուլ» (Լեո, հ. 6, էջ 235):

Ռուսական կայսրության տիրակալների վաղուց փայփայած երազանքը ճիշտ և ճիշտ Հնդկաստանի գաղութացումն էր: Երեմիա Արծրունին Ռուսաստանի կողմից նույնիսկ Աֆղանստանի գաղութացումն էր կանխագուշակել: Ինչ խոսք՝ կայսրության տիրակալներն այդպիսի մարդու նկատմամբ ուշադիր և հարգալից պիտի լինեին: Առավել ևս, որ Ռուսաստանի հանդեպ անհնազանդ Վրաստանի մայրաքաղաքում վրացի գործիչները ռուսականացման քաղաքականությանն աջակից իրենց հայրենակիցներին չէին վստահում և, պարզ է, նրանք ոչ էլ Ե. Արծրունուն և նրա հանցակիցներին էին փաղաքշում:

Հետաքրքիր է՝ Արծրունիները ե՞րբ և ինչպե՞ս են հայտնվել Թիֆլիսում: Կրկին ունկնդիր լինենք Լեոյին. «1913 թվականին վան քաղաքից Թիֆլիս եկավ մի հարուստ հայ վաճառական: Նա աշխարհ տեսած, շատ ճանապարհորդած մի մարդ էր, առևտրական գործերով եղել էր Թուրքիայի զանազան կողմերում, Պարսկաստանում, Կ. Պոլսից անցել էր հարավային Եվրոպա: Բոլոր այդ տեղերում նա առևտրական էր, որ կարգադրում էր իր գործերը ու հետո հեռանում: Իսկ Թիֆլիս եկել էր մի դիտավորությամբ: Սովորական երթևեկողներից մեկը չէր նա, այլ մի դիտավորությամբ: Սովորական երթևեկողներից մեկը չէր նա, այլ մի նշանավոր անձնավորություն. ներկայացավ Վրաստանի կառավարչապետ զեներալ Ռոտշչևին և հայտնեց, որ կամենում է ընտանիքով բնա-

կություն հաստատել թիֆլիսում, ընդունել ռուսական հպատակություն: Կառավարչապետ Ռոտիշչևը, տեղեկանալով հանգամանքներին, խոստացավ իր հովանավորությունն ու աջակցությունը, և նույն տարվանից թիֆլիսի բնակիչ դարձավ այդ՝ ծագումով և հարստությամբ նշանավոր օտարականը:

Դա Գեորգ աղա Երան-Արծրունին էր»:

Այս Գեորգը Գրիգոր Արծրունու պապն է. հատկանշական է, որ փոքր-ինչ ավելի վաղ Ռուսաստանի Ալեքսանդր Առաջին կայսրը իշխան Ցիցիանովին գրում էր. «Հայերը՝ իբրև մի արդյունագործ ժողովուրդ, որ իր ձեռքերում ունի Ասիայի այս մասի ամբողջ առևտուրը, արժանի են Ձեր առանձին ուշադրության և պաշտպանության, որովհետև, նկատի առնելով, որ նրանց նեղում են Պարսկաստանում, կասկած չի կարող լինել, որ այդ ժողովրդի բազմությունը կհաստատվի Վրաստանում, հենց որ նրանք իրանց ապահովված կհամարեն կառավարության բավակա-նաչափ բարեկարգությամբ» (Լեո, հ. 6, էջ 208, 213):

Ռուսաստանի տիրակալները, ագրեսիվ նպատակներ ունենալով Թուրքայի և Պարսկաստանի հանդեպ, այդ գործի մեջ մտադիր էին ներքաշել նաև հայերին, ընդ որում՝ փորձում էին նրանց հրապուրել և գայթակղելով իրենց կողմը քաշել նույնիսկ Վրաստանի շահերը ոտնահարելու հաշվին: Հասկանալի է՝ վրացի գործիչները դժգոհ պիտի լինեին, որ XIX դարի և XX դարի առաջին քառորդում Ռուսաստանի տիրակալների կամեցողությամբ մեծաքանակ հայ ազգաբնակչություն գաղթեց Վրաստան: Մինչև XIX դարն էլ նրանք հո այստեղ շատ, բավականաչափ շատ էին բնակություն հաստատել:

Թբիլիսիում բնակություն հաստատելուց հետո Գեորգ աղա Արծրունու առաջնահերթ հոգսերից մեկն իր իշխանական ծագումը հաստատելն էր: Իրավ է՝ նա համապատասխան փաստաթղթեր չունեւ, միայն աստճուն էր հայտնի, թե արդյո՞ք Երան Արծրունիները ժառանգորդներն էին հայ հին իշխանական տոհմի, բայց, այդուհանդերձ, Գեորգ աղան հասնում է իր նպատակին (Լեո, հ. 6, էջ 213-214): Կարելի է կարծել, որ դրա համար նա նաև մեծաքանակ կաշառք է տվել:

Իշխանական տիտղոսի հետ միաժամանակ Գեորգ աղան սկսում է Թբիլիսիում նաև կալվածքներ գնել. «Ամենից առաջ, այն է՝ 1818-ին, նա գնում է իշխան Օրբելիանովների այգու մի մասը 1700 ռուբլով»: Սիոնի եկեղեցու մոտերքում՝ Քուռի ափին, «ռուսաց եկեղեցական

վարչությունն ուներ մի հին, ավերակ կարավանսարայ: Վրաստանի եկզարիսը ձեռնտու համարեց ծախել այդ կալվածքը»: Նա այն 200 000 ռուբլով վաճառեց Գեորգ Արծրունուն: Գեորգ աղայի տղան՝ Երեմիան, «երկու անգամ դիմում է փոխարքային, գնում նրա այգուց մոտ 400 սաժեն տարածություն 122 000 ռուբլով: Գնում է հող նաև մյուս հարևանից, զինվորական շտաբից և այդպես ընդարձակում կալվածքը...» (Լեո, հ. 6, էջ 222-223, 231):

Բնական է՝ վրացի գործիչները չէին կարող համակերպել այն պարագային, որ Թբիլիսիի հողը որոշ թեթևսովի թավադների, կայսրության բարձրաստիճան պաշտոնյաների և հայ մեծահարուստ վաճառականների քմահաճույքով առք ու վաճառքի առարկա էր դառնում: Նրանք ամեն ինչ պետք է անեին, որպեսզի վրացական հողն օգտագործվեր Վրաստանի բարօրության համար:

Զգիտես ինչու, Լեոյին զայրացնում է և այն, որ Թբիլիսիում վրացական «Դրոեբա» լրագիրը դարձել է ամենօրյա. «Թիֆլիսում հրատարակվող ռուսերեն երկու լրագիրները 1877-ին ամենօրյա էին դարձել. նույնիսկ վրաց «Դրոեբան» էլ նույն թվին սկսեց հրատարակվել ամեն օր: Իսկ մե՞նք»: Այդ առթիվ Լեոն վկայում է ոմն Ասիացու խոսքերը. «...ամոթ չէ՞ մեզ՝ հայերիս համար, եթե ռուսաց և մինչև անգամ վրաց լրագրությունը արդեն ամենօրյա է դարձել, իսկ հայոց լրագրությունը դեռ չէ կարող այդ դրությամբ հասնել» (Լեո, հ. 6, էջ 541, 563, 570): Այդ ժամանակներում Թբիլիսիում հայկական թերթեր ու ամսագրեր վրացականից ավելի շատ էին լույս տեսնում: Չնայած դրան՝ եթե Լեոն և նրա դավադրակիցները վրդովվել էին, ապա դրանով իրենց հայրենակիցներին կոչ էին անում, թե զգույշ եղեք, ձեր զգոնությունը չթուլացնեք, հանկարծ վրացիները Թբիլիսի մեր ձեռքից «չխլեն»: Իմիջիայլոց, 1878 թ. «Մշակը» նույնպես ամենօրյա դարձավ:

Լեոյի՝ քննարկվող գրքի խմբագիր ակադ. Մ. Ներսիսյանը հատորին կցած ակնարկում նշելով, որ Արծրունին 1872 թ. Թբիլիսիում հիմնադրեց իր հայտնի «Մշակ» լրագիրը, որի անփոփոխ խմբագիրն էր մինչև իր մահը (1892), միաժամանակ հայտարարում է. «Ճիշտ էր Լեոն, երբ գրել է. «Եթե Նազարյանցը հայկական ճահճային անշարժությունը վրդովում էր հեռավոր Մոսկվայից, Արծրունուն վիճակված էր գործել հենց այդ ճահճների մեջ, ճակատ առ ճակատ ընդհարվել այն խավար, հետադեմ ուժերի հետ, որոնց հալածանքը, կատաղությունը այնքան զգալի չափով

թունավորում էին Նազարյանցին հեռվից: Պատերազմը այստեղ, հայկական իրականության սրտում, իհարկե, ավելի կատաղի, ավելի անողորմ պիտի լիներ...» (Լեո, հ. 6, էջ 857): Հետևաբար՝ Մ. Ներսիսյանը նույնպես թբիլիսին «հայ իրականության սիրտ» է համարում: Մինչդեռ մենք խնդրեցինք նրան, որպեսզի Լեոյի աշխատություններում առկա Վրաստանին և վրաց ժողովրդին անարգող տեղերի համար քննադատական ծանոթագրություններ կցի. Ի՞նչ ես կորցրել, ինչի ես ման գալի: Մ. Ներսիսյանը կարողացել է թբիլիսիի մասին լեոյական ավելի հակիրճ արտահայտություն գտնել: Օրինակ՝ խոսելով 1870-ական թվականների անցքերի մասին՝ Լեոն գրում է. «Թիֆլիսի իրականությունը, որ իհարկե, ամբողջ հայության մի հարազատ կտորն էր ներկայացնում...» (էջ 354):

Եթե ուրիշ անեն բան մի կողմ թողնենք, ապա հարց է ծագում, թե 1832 թ. ռուսական տիրապետության դեմ ապստամբության, որի կենտրոնը թբիլիսին էր, և որի նպատակը թբիլիսիից և, ընդհանրապես, Վրաստանից զաղութարար ռուսների վտարումն էր, հայե՞րն էին տրամադրում, թե՞ Սոլունոն Դոդաշվիլին, Գեորգի Էրիսթավիլին, Օրբելիանիները և վրացի ուրիշ նշանավոր գործիչներ: Մի՞թե թբիլիսիի հայ իրականությունն էր ոգեշնչում Նիկոլոզ Բարաթաշվիլուն, երբ Քուռն ու Մթածմինդան իր տառապյալ հոգու սրտակիցներն էր դարձնում: Իլիա Ճավադաձեի, Ակակի Ծերեթելու, Իակոբ Գոգեբաշվիլու և նրանց համախոհների գործունեությունը չէ՞ր խանգարում այս քաղաքի «հայ իրականության» պահպանմանը:

Բազում «մարգարիտներ» էլ կարելի է հավաքել մեծ տպաքանակով տպագրված Լեոյի՝ ինչպես այս քննարկվող գրքից, այնպես էլ նրա մյուս երկերից: Բայց, կարծում ենք, բերված հատվածներն էլ բավական են ցույց տալու համար, թե երևանում ինչ կարգի աշխատություններ են հրատարակվում (արտասահմանում լույս տեսնող հայագիտական գրականության մասին եթե որինչ չասենք) Վրաստանի և Հայաստանի, վրաց-հայկական փոխհարաբերությունների մասին:

*Ալեքսանդր ԱՐԴԱԼԱՁԵ*  
*«Մնաթրի», 1991 թ., թիվ 9-10, էջ 165-169*

**ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀՀ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ  
 ԿԱՍ  
 ԻՆՉՈՒ ԵՆ ԼՈՌԻՄ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ, ԵՐԲ ԱԲԽԱԶԻԱՅՈՒՄ  
 ՎՐԱՑԻՆԵՐԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ  
 ՆԱԵՎ ՀԱՅԵՐԸ**

**Բաց նամակ Հայաստանի գրողների միության նախագահին՝  
 պարոն Սերո ԽԱՆԶԱՂՅԱՆԻՆ**

*Եվ էն հայ գործիչը, որ չէր պաշտպանում  
 Վրաստանին, չէր հասկանում իր ժողովրդին  
 ու իր պատմությունը, և էն վրացին, որ  
 չէր պաշտպանում հային ու Հայաստանը,  
 չէր հասկանում վրաց ժողովրդին և Վրաստանի  
 պատմական ծանապարհը:*  
 Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բավական երկար խորհելուց և վարանումներից հետո որոշեցի բաց նամակով դիմել Ձեզ և Ձեզ հետ բաժանել այն վրդովմունքն ու ցավը, որ պատել է յուրաքանչյուր վրացու Աբխազիայում Ձեր հայրենակիցների դավաճանության պատճառով: Խոսքս, այսպես կոչված, Բաղրամյանի անվան գումարտակի և նրա երկչոտ պարագլխի մասին է: Աստծո երեսից ընկած այս մարդիկ պղծեցին և անարգեցին հայ գորավարի պայծառ հիշատակը: Նրա անվան տակ թաքնվելով՝ ափսուս\* անջատողականների նման անողորք պայքար հայտարարեցին վրաց ժողովրդին:

\* Ափսուս — աբխազների ինքնանվանումն է (ծանոթ. քարզմանչի):

Բատոնո Սերո,

Աբխազիայում վրացիների ցեղասպանության առյուծի բաժինը պատկանում է հայ բռնիկներին, իսկ վայրագությամբ նրանք գերազանցեցին անգամ ասիուա անջատողականներին: Հավանաբար կասեք՝ կոնկրետ, կոնկրետ փաստեր նշեք: Ցավոք, փաստեր կան և այն էլ ինչքան... Հայերի կողմից վրացիներին տանջահար անելու և կտորելու փաստերը հաշվարկվել են և մամուլում կիրառարակվեն: Ինչ խոսք, ինչի հաշվարկը որ հաջողվել է անել, քանզի այս «օպերացիան» մասսայական բնույթ ուներ և շատ է հիշեցնում 1915 թվականի թուրքերի կողմից հայերի մեծածավալ ցեղասպանությունը, այն տարբերությամբ միայն, որ վրացիների հանդեպ այս զարհուրանքն իրականացրին քրիստոնյա հայերը... Ավելին՝ հայ բռնիկներն այսօր էլ կազմակերպում են պատժիչ արշավանքներ: Նրանց ակտիվ մասնակցությամբ տեղի ունեցավ Սուխումի շրջանի գյուղերի էթնիկական գտումը: Ոչ լրիվ տվյալներով միայն 1994 թ. սեպտեմբեր ամսին հրդեհվել է վրացական 14 տուն, սպանվել է 27 մարդ: Այս պատժիչ արշավանքի արդյունքում 1994 թ. սեպտեմբերին Գալի շրջանում անարգվել և կործանվել է ավելի քան 180 օջախ: Հայ բռնիկները չափազանց ակտիվ են Կոդորի կիրճի մատույցներում, որտեղ իրականացվում են էթնիկական լայնամասշտաբ գտումներ: Նրանց խղճին են հարյուրավոր անարգված, կտտանքի ենթարկված և սպանված վրացիներ:

Բատոնո Սերո, կարծում եմ՝ ավելորդ չի լինի՝ ծով արյունոտ նյութերից Ձեզ ներակայացնեմ մի աննշան մասը, որպեսզի ամբողջական պատկերացում կազմեք այն մասին, թե Ձեր հայրենակիցները Աբխազիայում ինչքան ծանրագույն հանցանքներ են կատարել Վրաստանի հանդեպ:

«Սգիա Մ... 23—ամյա այս աղջկան (հոր խնդրանքով ազգանունը չեմ գրում) Սուխումում, Գոչուայի փողոցում, իր սեփական տան մեջ հայ բռնիկները խմբովին բռնաբարում են, չարաչար տանջում, ուժասպառ անում և շարտում:

Գրանից հետո խնջույք են կազմակերպում: Ուշքի գալով՝ աղջիկը կարողանում է ավտոմատով յոթից երեքին սպանել, չորսին վիրավորել ու թաքնվել հարևաններից մեկի մոտ, բայց հենց այդտեղի արմեն բնակիչը մատնում է նրան: Գունարտակից գալիս են, քարշ տալիս, կրկին

բռնաբարում, տանջահար անում, ականջներն ու մատները կտրատում, հենց իր տան շեմին գնդակահարում ու շարտում մի կողմ:

Սեպտեմբերի 10—ին, Սուխումի շրջանի վրացական հիմնավորը գյուղում՝ Ակափայում, հայերը սեփական տներում ոչնչացնում են Ռաուլ և Իլիա Փիփինների, Անգոր, Ջեներ և Օթար Գոգուլենների, Նորա Արոնիայի, Կուտա Քարոպայի ընտանիքների անդամներին, իրենց՝ ընտանիքների գլխավորներին, հրդեհում տները (որոշակի նկատառումներով բոլորի անուն—ազգանունները չեն գրում): Այդ օրվա ասպատակության հետևանքով 27 մարդ է նահատակվում Ակափայում:

Սեպտեմբերի 14—ին Յաշվայից Սոչի տանող ճանապարհով մի կերպ մազապուրծ Մարգո Նարսիան և Նուրու Չաբարավան նշեցին, որ մինչև սեպտեմբերի 27—ը պետք է ավարտվեր շրջանի և, առհասարակ, Աբխազիայի մաքրումը վրացիներից: Այս մասին գյուղական հավաքում բացահայտորեն և պարզորոշ հայտարարել է ոմն «պատասխանատու անձ» Պետրոսյան՝ ծագումով արմավիրցի: Այդ մաքրմանը ակտիվորեն մասնակցել և առանձնահատուկ ջերմեռանդություն են ցուցաբերել արմեն չինովնիկներն ու բռնիկները: Նույն Մարգո Նարսիայի տունը, նրա այնտեղ իսկ գտնվելու ժամանակ, իր որդու համար յուրացրել է դրկից հարևանը՝ Սուրենը:

Առ 17—ը սեպտեմբերի Տղվարչելի քաղաքում բնակություն են հաստատել 1500 արմեններ («Արչևանի» թերթ, 1994 թ., նոյեմբեր, Սերգո Սաջախ, «Օրեր՝ հանգուցյալների լռին հետքերով»):

Բատոնո Սերո, մի քանի փաստի վրա ևս հրավիրում եմ Ձեր ուշադրությունը.

«Ձազա Սամուշիա, Գուլրիփշի շրջան, գյուղ Փշափի:

Երբ բռնիկների երրորդ պարտիան եկավ, սպանեցին 11 մարդ: Սրանցից կեսից ավելին կանայք էին: Նրանք բոլորին հավաքեցին մի բակ և այնտեղ գնդակահարեցին: Բոլորն էլ թաղված են այն բակում, որտեղ կատարվեց սպանությունը: Այդ դահիճները հայեր են»:

«Մեր աչքի առաջ հրդեհեցին մոտ քսան տուն: Ինչքան գույք կար՝ շարժական և անշարժ, հայերը տարան (տեղացի հայերը), նախ հափշտակեցին անասունները, ապա քարուքանդ արեցին գյուղը»:

«Երրորդ ռեյդով եկավ հայերի պարտիան: Նրանք չափազանց ագրեսիվ էին վարվում: Ինձանից նախ գենք պահանջեցին, հետո էլ, թե՛ տղադ որտեղ է: Հայ հարևանս՝ Նորիկ Ռուբենի հաչատրյանը, մատնեց,

որ իմ տղան գվարդիայում է: Հայերն սկսեցին ինձ ծեծել, հայիոյել: Եղ հայերը աթոնեցի էին: «ժիգուլի»—ով եկան, երեք ռեյս արին: Էնքա՛ն բան տարան մեզանից, մեր հարևաններից: Իմ կնոջն էլ ծեծեցին: Երրորդ գալուն ասացին. «Վրացիներիդ օր ու արև չենք տալու էս երկրում»:

Մարինա Մալիշևա, ք. Սուխումի. «Յաշխվայում Գրիշա Մալիային (86 տարեկան) և նրա կնոջը՝ Էլիկո Կիրթավային (78 տարեկան), դեռևս սեպտեմբերին թալանեցին: Այս անգամ պատճառաբանում էին, թե Սերգո Սաջախայի տեղը գիտես, բայց չես ասում: Ծեծեցին և վզակոթին խփելով՝ տնից դուրս արին: Կոտրեցին նրա կնոջ՝ Էլիկոյի ձեռքը:

Հենց այդտեղ Նինա Դեյսաձեֆն դուրս արին իր տնից և ներսում բնակեցրին արմավիրցի հայի»:

Հունվարի 3-ին Յաշխվայի կառավարիչ Սեդրակ Սարյանը դիակապտության համար գնացել էր Օդիշ, որտեղ և նրան սպանեցին: Վրացիների դառնադի քրտինքով կառուցված Յաշխվայի դպրոցում այժմ հայկական դպրոց է բացվել: Այդպես են վարվել նաև Թավիսուիլեբա գյուղում»:

«Յաշխվայում Նինա Կվարցխելիային հայերը խմբով բռնաբարեցին ու սպանեցին 1993 թ. դեկտեմբերին»:

«1994 թ. հունվարի 1-ին Գուդավայում Ռեգո Խաբուրզանիային և նրա տղային իրենց տանն սպանեցին հայերը»:

«1994 թ. հունվարի երկրորդ տասնօրյակում, Օտոբիայում, հայերը տանջահար անելով սպանեցին Կակո Ջապավային և 83-ամյա ջրաղացպան Դոմե Քելաբիային»:

«Չարդեբի գյուղում հայ բռնիկները արխագների հետ միասին 1993 թ. դեկտեմբերին, միայն մեկ օրում, էկզեկուցիայի նպատակով կատարած ասպատակության ժամանակ հրդեհեցին 97 տուն»:

«Օտոբիայում հայերը (տուժածի խնդրանքով ով լինելը չեն մատնանշում) բռնում են 19 տարեկան մի տղայի, գլխիվար կախում են բակի տանձենու ճյուղից, ճոճում են և վրան կրակում՝ նշանին կխփե՛նք, թե՛ չէ: Վիրավորին հազիվ են փրկում»:

«Օտոբիայում հայերը բռնում են հայր ու որդի Սիգուաներին, թրկով կապոտում, հետո դանակով վիզը կտրում»:

«Հունվարի 29-ին, Գալի շրջանի թեյի ֆաբրիկայի բանավանում արխագ բռնիկները սպանել են Տունավ եղբայրներին, երբ սրանք իրենց սեփական տնից ուտելիք էին դուրս տանում»:

«1994 թ. հունվարի 27-ին Սուխումի շրջանի Ակափա գյուղից փախած Գուրամ Ղարամոյի Ցաավայի տեղեկության համաձայն սեպտեմբերի 29-ին Ծերելդայում արմենները սպանել են ակափեցի մանկավարժ Իրոդի Փիփիային, սիրտը հանել են և նետել շներին՝ պատառոտելու»:

«Ակափեցի արխագ Ակակի Խարազափա. որքան կարողացել է, համազուղացի վրացիների, այսինքն՝ «հարևանների տուն ու տեղը պաշտպանել է հայ մարտիորներից»:

«Ակափայում բնակվող էստոնացիները համազուղացիներին պաշտպանում են հայ մարտիորներից, որպեսզի չավերեն վրացիների օջախները»:

Ցիալա Իսիդորեի Կվարցխելիա. «Տեսածիցս ապշահար եմ. Սուխումում և Գուլրիփշում հայերն առջևից էին գնում, արխագները՝ հետևից: Ուղեկցողները ցույց էին տալիս հարևանների տները, իսկ նրանք վառում էին»: («Արչևանի» թերթ, 1994 թ., օգոստոս»):

Բատոնո Սերո, հո տեսնում եք, որ տարաբախտ վրացիներին պաշտպանում է բարյացակամ որոշ արխագ կամ էստոնացի, բայց չկա մի դեպք, որ հայը օգնության ձեռք մեկնի վրացուն և եղբայրական կարեկցություն արտահայտի: Ընդհակառակը, զազանաբար և դաժանությամբ ոչնչացրել և ոչնչացնում են բնիկ վրացի ազգաբնակչությանը... Որտեղի՞ց այսչափ անգթություն: 1905 թ. Բաքվում, հայերի ջարդի ժամանակ հայ խեղճուկրակ հարյուրավոր երեխաների փրկեց ցարական սպա Բաբունաշվիլին: Նա իր հարյուրակով պաշտպանեց և անվտանգ վայր հասցրեց նրանց ու նահատակվեց այդ գործի համար:

Բատոնո Սերո, բերված փաստերը լավագույնս խոսում են այն եղևելի ոճիրների մասին, որ Աբխազիայում կատարում են հայ բռնիկները: Նշենք նաև, որ, աստված մի արասցե, Վրաստանում ապրող բոլոր հայերին էս նմանեցնեն Աբխազիայում կռվող բռնիկներին և նրանց միջև հավասարության նշան դնեն: Իհարկե, ոչ էլ այն կարելի է մոռանալ, որ Աբխազիայում բնակվող հայերի մի մասը ափսոսա արյունարնալ, որ Աբխազիայում բնակվող հայերի մի մասը ափսոսա արյունարնալ անջատողականներին չմիացավ և այդ պատճառով էլ գաղթական դարձավ: Երբեք չենք մոռանա նաև այն հայերին, ովքեր վրացիների հետ մարտնչում էին հանուն Վրաստանի տարածքային ամբողջության: Նրանցից ոմանք ընկան հերոսի մահով: Հավերժ փա՛ռք նրանց պայծառ հիշատակին:

Բատոնո Սերո, վրաց և հայ ժողովուրդների դրացիական հարաբերությունների պատմության մեջ եղել է ժամանակաշրջան, երբ նրանց եղբայրության վրա մի տեսակ ստվեր է ընկել: Դա 1918 թվականին էր, երբ Հայաստանի դաշնակցական կառավարությունը պատերազմ սանձազերծեց մենշևիկյան Վրաստանի դեմ: Այդ պատերազմը սարսռեցրեց լուսահոգի Հովհ. Թումանյանին: Երևանում գտնվող իր զավակներին նա հորդորեց, որ չմասնակցեն վրացիների դեմ պատերազմին, այլ ապես ինքը՝ իբրև ծնող, կանիծեր ու կնգովեր: Դա սիրո փառահեղ ակտ էր և ապացույց: Այդ փաստը տեղ է գտել մեր ժողովուրդների հարաբերությունների պատմության մեջ: Դրանից բացի, իմաստուն Հովհ. Թումանյանը շուտափույթ դիմեց Հայաստանի և Վրաստանի ղեկավարներին, որպեսզի վերջ տան եղբայրասպան պատերազմին: Նա արեց ամեն ինչ՝ դադարեցնելու համար արյունահեղությունը, և դրանով իսկ ազգի առաջ մարեց քաղաքացիական իր պարտքը: Վրացի բանաստեղծներից Տիցիան Տաբիձեն արձագանքեց և եղբայրական երախտագիտություն հայտնեց բարեգործական այդ քայլի համար: Բնականաբար, հարց է ծագում՝ որտե՞ղ կամ ո՞ւմ կողմն էին և են ժամանակակից հայ գրողները, երբ նրանց հայրենակիցները Աբխազիայում վրացիների էթնիկական զտմանը են զբաղված: Մի՞թե չգտնվեց մի հայ գրող, նման Հովհ. Թումանյանին, որպեսզի իր ծայրը բարձրացներ և համշենցիների [Աբխազիայում ապրող հայերը խոսում են համշենահայ բարբառով, և դրա համար նրանց համշենցի (Համշենը Թուրքիայում է) են կոչում], և ոչ միայն համշենցիների, բարբարոսության առաջն առներ: Ընդհակառակը՝ ռուսական ճակատում ժամանակավոր հաջողություններից էյֆորիայով բռնված Ձեր հայրենակից գրող պարոն Հրանտ Բագրազյանը համշենցիներին ոչ միայն խելամտության չկոչեց, այլև հրճվալից գոռում—գոչոյունով չարախնդաց Սամաչաբլոյում և Աբխազիայում վրացիների կրած ժամանակավոր անհաջողությունների վրա: Օ՛, անոթանք:

Պատմության մեջ չկա մի դեպք, որ վրացի գործիչը առաջինն սկսեր Հայաստանի մասին քննադատական որևէ ելույթ: Ընդհակառակը, նրանք այն ժամանակ են ծայն հանում, երբ պարտադրված են լինում պաշտպանվել: Եթե չեն սխալվում, միայն Մարշալ Բաղրամյանի դուստրն է բողոք հայտնել՝ գունարտակը հոր անունով կոչելու համար: Այսքանը սոսկ: Հայոսի և Քարթլոսի եղբայրությունը գովերգող հայ ոչ մի բանաստեղծ չի գորել ծայն հանելու և գերադասել է ձեռքերը լվանալ

այդ գործից: Եվ ոչ միայն. այստեղ՝ մեր կողքին՝ Թբիլիսիում բնակվողներն էլ բերանները ջուր են ամել ու համրացել: Բուրըր՝ բուրր, բայց դուք հո բուրրից լավ գիտեք՝ ինչ է ցեղասպանությունը: Այդ ողբերգությունը հայ ժողովուրդը մեկ անգամ չէ, որ ապրել է և, պարտադրաբար հեռանալով հայրենիքից, խաղաղ ապաստարան է գտել նաև Վրաստանում, որը նրա համար դարձել է երկրորդ հայրենիք: Մինչդեռ ավստուա անջատողականները հայ բռնիկներին հանեցին վրացիների դեմ և ապա հետոողականները հայ բռնիկներին հանեցին վրացիների դեմ և ապա հետոողականներին նրանց ու մի օր էլ վտարեցին: Այս են վկայում ավստուա ոստիկանների ու հայերի միջև Սուխումում, Գալիում և այլ շրջաններում տեղի ունեցած արյունալի ընդհարումները: Այնպես որ՝ ավստուա մարդատյաց անջատողականները եթե աչքով աչք չունեն վրացիների հետ, ապա ոչ էլ հայերի արևն են խնդում:

Բատոնո Սերո, Հայաստանի Հանրապետության ղեկավարության որոշ բարձրաստիճան ներկայացուցիչներ հայտարարեցին, թե իրենք Աբխազիայում ապրող հայերի վրա ազդելու ոչ մի հնարավորություն չունեն: Սա ակնհայտ կեղծիք է, և նույնիսկ երեխան չի հավատա: Աբխազահայությանն այնպես, ինչպես և Ղարաբաղի հայությանը, ղեկավարում են Երևանից և համաձայնեցնում (գործողությունները): Ահա մեն մի փաստ, որ ես տեսել եմ իմ աչքով: Երբ սկսվեց Ղարաբաղի պատերազմը, ես Երևանում էի: Հանդիպեցի ղարաբաղցի գաղթականներին և զրույց ունեցա նրանց հետ: Նրանք անկեղծորեն ասացին ինձ. «Մենք շատ լավ էինք Ղարաբաղում, բայց տարիներ շարունակ Երևանից մեզ հանգիստ չէին տալիս և ազիտացիա էին անում, որպեսզի Ղարաբաղն ամբողջովին անջատենք Ադրբեջանից կամ էլ մեզանից պահանջում էին՝ անկախանանք և միանանք Հայաստանին»: Ինչ վերաբերում է Աբխազիայի հայերին, ոչ էլ այստեղ «մախաթը թաքցվեց» պարկում: Երբ պատահական անծիմք Աբխազիայում որոշակի կոպտություն և խստություն ցուցաբերեցին հայերի նկատմամբ, Երևանը նախանձելի օպերատիվություն հանդես բերեց: Հայաստանի ղեկավարությունը մի ամբողջ հանձնախումբ գործուղեց՝ նախ՝ Թբիլիսի, այնուհետև՝ Աբխազիա, և սկսեց հայրենակիցների իրավունքների խախտման փաստերի հետաքննություն անցկացնել: Այսինքն՝ Հայաստանի ղեկավարությունը ոչ միայն գերիշխում է Աբխազիայում ապրող համշենցիների վրա, այլև հոգ է տանում նրանց մասին: Եզրակացությունն ինքնին հասկանալի է: Ավելին՝ Երևանը գերիշխում և ղեկավարում է եթե ոչ ամբողջ աշխարհի, ապա

առնվազն նախկին Խորհրդային Միության տարածքում սփռված հայ դիասպորին: Սա բնական է, ուստի սրա ժխտումը առաջ է բերում տխրալի ժպիտ և ափսոսանք:

Բատոնո Սերո, ես Ձեզ եմ դիմում որպես Հայաստանի ամենաառաջին գրողի և հայ ժողովրդի հոգու հավատարմատարի: Հուսով եմ՝ Դուք կօտագործեք Ձեր մեծագույն հեղինակությունը, հանրաճանաչությունը և կոչ կանեք Ձեր ղեկավարությանն ու ժողովրդին, որպեսզի Աբխազիայում բնակվող հայերը հետ կանգնեն սատանայի ճամփից, հեռանան ափսուա մարդակեր անջատողականներից և վերադառնան վրացիների հետ եղբայրությանը: Իրավ է՝ հռոմեացիներն ասում են՝ վրիժառությունը սահմաններ չունի, բայց վրացի մարդն էությանը ներողամիտ է, և համոզված եմ՝ Կայենի մեղքում էլ նա հայերին ներում կշնորհի: Սա խնդրանք չկարծեք, սա պարզապես բարեկամական թելադրանք է, որպեսզի ընդմիջտ չպղծվի հայ և վրաց ժողովուրդների պատմական եղբայրությունը:

Խորին հարգանքով՝

*Բոնդո ԱՐՎԵԼԱՉԵ  
Թբիլիսի, «Իվերիա էքսպրես»  
թիվ 12, փետրվար. 1995 թ.*

*ՂԱԹՈՍ ՏՈՒՐԱՇՎԻԼԻ*

**ԼԵՎԱՆԸ ԵՎ Ի ԵՎՈՆԸ**

Լևան Օդիշելիժեն վրացի իշխան էր, Լևոն Չարենցը՝ հայ: Ե՛վ առաջինն էր գնդապետ, և՛ երկրորդը: Երկուսն էլ երդում էին տվել Նիկոլին և զանց չէին առնում: Երդումը երդում էր, թեկուզև ուրիշ կայսրության մեջ, ուստի քանի դեռ թախտը կար, նրանք կատարում էին իրենց պարտքը:

Առաջին համաշխարհային պատերազմի բովով միասին անցան. թե՛ տխրության ժամին էին միասին, թե՛ ուրախության:

Հայ գնդապետը ծնվել և մեծացել էր Թիֆլիսում և, թաքցնելու բան չունենալով, վրացերենի իմացությամբ բոլորովին չէր զիջում իր վրացի բարեկամին: Ո՛ր ճակատում ասես չեղան մեր սպաները, ո՛ր երկրի հողն ասես ոտքի տակ չառան նրանք, մինչև որ մի գեղեցիկ օր (գեղեցիկը՝ պայմանական) պատերազմից հոգնած, սոված-ծարավ ժողովուրդը հարձակումն ուղղեց Չմեռային պալատի վրա: Պալատն, այո՛, ծմեռային էր, բայց այնպե՛ս ջերմ ընդունեց ժողովրդին, որ իսկի չէին սպասում:

Ի՞նչ ու ինչպե՞ս էր լինելու հետագայում՝ դժվար է ասել, բայց բարեկամ սպաները առանց դժվարության գլխի ընկան, որ իրենց այդպես ջերմորեն չեն ընդունի այնտեղ: Գլխի ընկան ու հետ՝ դեպի հայրենիք:

Ճանապարհն այնքան էլ հեշտ չէր: Մի կայարանը հաջորդում էր մյուսին. քաղաքների կառավարություններն այնքան էին տարբերվում միմյանցից, ինչպե՛ս իրենք՝ քաղաքներն էին տարբեր: Այս ու այնտեղ նաև կրակոցներ, ճարձատյուններ ու պայթյուններ էին լսվում: Ոմանց համար պատերազմը վերջանում էր, ոմանց համար նոր էր սկսվում: Մեծ դժվարությամբ հասան Թիֆլիս: Հասնելը՝ հասան, բայց վա՛յ այդ հասնելուն. նրանց տեսքից ու հագուստից ո՛չ իշխանական ծագումն էր զգացվում, ո՛չ սպա լինելը: Նույն երեկոյան գնացին իրենց երանելի բաղնիքը և գեղեցկացան. կոկիկ հագնվեցին, սափրվեցին... Գիշերն

անցկացրին «Օրիանտ» ռեստորանում: Քեֆ արեցին, ինչպես ոչ վաղ անցյալում էին անում: Ո՛չ պարն էր պակաս, ո՛չ երգը: Գրեթե արշալույս էր, երբ երկուսն էլ ննջեցին սեղանի մոտ...

Հաջորդ օրը զնդապետ Լևոն Չարենցը այցի գնաց Թիֆլիսի իր հարազատներին, հետո ընկերոջ հետ ծառեց, իսկ երեկոյան խոնջացած, բայց գոհ մեկնեց մայրաքաղաքից:

— Շուտով կհանդիպենք,— կրծքին սեղմելով՝ ասաց գնդապետ Օդիշելիժեն:

Եվ միայն այդ պահին՝ բաժանվելիս, զգացին, թե որքա՞ն են սիրում մեկմեկու, սիրում եղբայրաբար...

Թիֆլիսում հանգիստ չէր. հանրահավաքներ էին ու լոզունգներ, հեղափոխության հույսեր և կոչեր՝ հողը գյուղացուն, գործարանը՝ բանվորին: Աստ՝ սոցիալիզմ, անդ՝ ինտերնացիոնալ, դեմոկրատիա և ազատություն, հաց ու շոկոլադ, ութժամյա աշխատանքային օր, տեղկոմ և կոմերիտմիություն, դժոխք ու տարտարոս. կուսակցություններ և ֆրակցիաներ, բուլշևիկներ և մենշևիկներ, ազգայնականներ և էսեռներ, պրոլետարներ և ավազակներ, ուլյանովներ և տրոցկիներ, Կամո՝ միակ հեծանվով, երկնային եղջյուրականներ՝ պախրայի պոզերով, և ֆուտուրիստներ՝ չինարենու ճյուղերին, հազիվ հիշատակվող Դավիթ Շինարար և համալսարանի հիմնադրում, Եվրոպայից ներմուծված ինտելեկտ և սոցիալիզմ երազողների կույր ամբոխ...

«Համաշխարհային պրոլետարիատին ի՞նչ պիտի ասենք. Վրաստանի կամ ազգային հարցերի ժամանակ է. ի՞նչ երեսով պիտի մայենք ֆրանսիացի և անգլիացի բանվորների աչքերին...»: Եվ հենց այդ ժամանակ՝ բոլորովին փոքրամասնություն կազմողների ցանկությամբ ու առավել՝ մեծամասնականների պարտադրմամբ՝ մայիսի 26:

Վրաստանն ազատագրված է: Անդրկովկասյան սեյմը ցրված է: Հանրապետությունն ունի նոր ղեկավար: Սոցիալ-դեմոկրատիան տնօրինում է այնպիսի երկրի ճակատագիր, որպիսին չէր ուզում: Առայժմ դժվարանում է...

- Անգլիան կփրկի՝ մեզ...
- Ո՛չ, Գերմանիան կփրկի...
- Լլոյդ Ջորջը մեզ չի դավաճանի...
- Կլեմանսոն ավելի վստահելի է...
- Ո՞վ մեզ կգոհաբերի...

Չոհաբերելս ո՞րն է. հարձակում՝ դեռևս առաջին քայլերն անող հանրապետության վրա: Անդ՝ Դեմիկիմը, դարձյալ անդ՝ կարմիրները: Աստ՝ Թուրքիան և... Հայաստանը: Այո՛, Հայաստանը, թեև ոչ ոք չէր սպասում: Բայցևայնպես՝ Հայաստանը: Ասում են՝ դաշնակների և մենշևիկների մեղքն է: Բայց, այդուհանդերձ, Հայաստանը: Անշուշտ, կարելի էր յուր գնալ. այն երկաթուղու և այս հողերի համար համաձայնության կգայինք, փոխարենը՝ պատերազմ Հայաստանի դեմ: Իսկ պատերազմում պետք է վարվես այնպես, ինչպես վարվում են պատերազմում... Լևան Օդիշելիժեն չանդամագրվեց և ոչ մի կուսակցության, մայրաքաղաքում էլ չմնաց:

— Գնամ մեր հողին ու տնտեսությանը տեր դառնամ: Դեսից-դենից բան-ման ստեղծեմ, գործերս կարգավորեմ ու պառավ մորս ուրախացնեմ՝ վերցնեմ ու ամուսնանամ,— ասաց ու վերադարձավ Իմերեթ:

Նպատակադրվել էր նաև բուժվել. պատերազմում ստացած վերքն անհանգստացնում էր: Այլևս այնքան էլ երիտասարդ չէր նա... Հանդիսությունների էր հաճախում, ուրիշների հարսանիքների էր մասնակցում. հանրապետության կենացը մերթ տաշուփ բաժակով էր խմում, մերթ՝ եղջյուրներով: Մինչ այս, մինչ այդ, աշունը վրա հասավ, և գավառային համայնքի նախագահը մի առավոտ եկավ ու կանգնեց Օդիշելիժենների շենին:

— Դեկավարությունը պահանջում է ներկայանալ մայրաքաղաք, հենց նոր հաղորդեցին՝ ուղիղ գծով:

Նույն գիշեր Թիֆլիս մեկնող գնացք նստեց: Դեռ վաղ էր թուր կապելը, թեև ճանապարհին անսխալ գուշակեց՝ ինչի՞ համար են կանչում:

Կառավարության ղեկավարը, որ խոսում էր Օդիշելիժեի հետ, ճիշտ այնպիսին էր, ինչպիսին թերթերում են նկարում՝ ձեռնափայտը ձեռքին, եվրոպական լայնզոր գլխարկը գլխին: Կարճ կապեց:

— Դու շատ լավ տեսնում ես,— ասաց նա,— թե հայրենիքն ինչի կարիք ունի. փաստ է, որ դու պետք ես հայրենիքին:

Գյուղ գնալու հնարավորություն չընծեռեցին: Գործուղվեց գեներալ Փավլենիշվիլու հեծելազոր: Այնպես մերվեց Սողանլուղում անցկացվող զորավարություններին, որ երկար ժամանակ չկարողացավ մորը որևէ լուր հաղորդել: Մինչդեռ պառավն անհանգստանում էր: Իհարկե, կանհանգստանար, չէ՞ որ հրահանգիչներն ամեն օր թեև նոր, բայց վատ լուրեր էին բերում:

Շատ չանցած՝ կռիվն սկսվեց: Հակառակորդի գործը շարժվեց առաջ: Դե՛, մերոնք էլ ձեռքները ծալած չնստեցին...



Ոմանք կատակում էին, թե հայերի շտաբը Թիֆլիսում է, ոմանք ծիծաղելով ասում էին, թե, հա՛, մեր խորհրդարանն իր ապարանքում նրանց սենյակ է հատկացրել, ոմանք էլ պարզապես ապշահար էին՝ ես ի՞նչ օրի հասանք...

Այսպես թե այնպես, կրակում էին: Ե՛վ այս կողմից էին կրակում, և՛ այն կողմից: Ե՛վ նրանք էին հարձակվում, և՛ սրանք: Հրանոթները մեկ այս շենից էին որոտում, մեկ՝ այն: Մեկ մի կողմն էր նահանջում, մեկ՝ մյուս: Այս ամենը՝ օրը ցերեկով: Իսկ երեկոյան սպաները (թերևս, նաև մարտիկները) հնարավորին չափ մաքրվում էին, իրենց կարգի բերում ու հավաքվում խորհրդակցության՝ շտաբում, որևէ մեկի հյուրընկալ տանը կամ ինչ-որ խանութում: Նաև զինին էր հորձանք տալիս. վիճում էին, աղմկում, կռվում: Ոմանք այս կուսակցությանն էին հարում, ոմանք՝ այն, ոմանք էլ՝ մի երրորդ: Ամեն օր, սակայն, մեկ միտք էր շրջում. սա ավելի շուտ մենչևիկների և դաշնակների կռվի է նման, քան հայերի ու վրացիների: Բայց պատերազմ էր, և կռվում էին բոլորը՝ կուսակցականներն ու անկուսակցականները, զորքն ու զվարդիան:

Զինվորներն, իսկապես, սիրում էին գնդապետ Օդիշելիժեին: Վստահում էին նրա խելքին ու փորձառությանը: Նաև՝ արիությանն ու անձնագոհությանը:

Չնայած պայքարը թեժ էր ու կեղտն առատ, բայց նա իր նժույզը միշտ մաքուր էր պահում. աշխատում էր ինքն էլ երևալ այնպես, ինչպես վայել է սպային, լինել այնպես, ինչպես վայել է վրացական բանակի գնդապետին:

Այդ երեկո նույնպես բժախնդրորեն պատրաստվեց և կազմ ու պատրաստ ներկայացավ շտաբ: Մյուս սպաներն արդեն այնտեղ էին: Սպասում էին հակառակորդի ներկայացուցիչներին: Երբ գնդապետ Օդիշելիժեն ներկայացավ, քիչ անց եկան նաև հայ սպաները:

Մինչ բանակցությունների համար կնստեին սեղանի շուրջ, գլխով արեց: Բոլորը հասկացան, թե ո՛վ ի՞նչ պիտի անի: Լևան Օդիշելիժեն նույնպես դուրս գնաց, և դա՛ մեծավ ուրախությամբ, քանզի հայ սպաների մեջ ճանաչեց իր վաղեմի բարեկամ Լևոն Չարենցին...

Վրացիները զարմացած նայում էին Լևան Օդիշելիժեին, որ ամուր գրկել էր հայ սպային և այնպես էր համբուրում, կկարծեիր՝ քսան տարի առաջ կորցրած եղբորն է հանդիպել:

Երբ փոքր-ինչ շունչ քաշեցին, առանձնացան և մանրամասն հարուստ արեցին մեկմեկու:

— Գնանք Դիասամիժենների մոտ, — հարեց Օդիշելիժեն, — այստեղից մոտիկ է: — Եվ անձամբ առաջնորդեց հյուրին:

Դիասամիժեններն ընթրիքին սպասում էին վրացի գնդապետին, հայ սպան էլ հաճույքով օգտվեց այդ հրավերքից: Նրանք, իսկապես, փառահեղ հյուրասիրել գիտեին: Դրանում համոզվեց նաև գնդապետ Լևոն Չարենցը: Ի դեպ՝ տանտերերը ոչ էլ գլխի ընկան նրա որտեղացի լինելը, և անհնար էր կասկածել, որ հակառակորդի հետ վրացի սպան կարող է այդպես ջերմեռանդորեն բարեկամության կենաց խմել...

Խմեցին մինչև ուշ երեկո, ամեն ինչ վերհիշեցին. միասին անցած ճանապարհներն ու ստացած վերքերը, դառնություններն ու ուրախությունները: Վերհիշեցին և զինուց ու արցունքներից հարբած՝ դնդնալով դուրս ելան: Ճանապարհին իմացան, որ բանակցություններն արդյունք չեն տվել: Ավելի ճիշտ՝ Լևանը վրացի սպաներից իմացավ, բայց Լևոն Չարենցին չասաց. լուրը նրանից թաքցրեց և անձամբ ուղեկցեց մինչև վրացական սահմանը, մինչև վերջին պահակետը:

Հրաժեշտը լռելյայն էր: Վերջում գնդապետ Չարենցը համբուրեց գնդապետ Օդիշելիժեին, իսկ փոքր-ինչ հեռանալով՝ ձեռքով արեց: Մեկ անգամ էլ հետ նայեց և մեկ անգամ էլ ձեռքով արեց, թերևս նաև՝ երրորդ անգամ, բայց վրացի սպան ոչինչ չէր տեսնում, աչքերն արցունքներից մշուշվել էին, դրանից բացի՝ մութը վաղուց ընկել էր...

Առավոտյան ճակատամարտը վերսկսվեց: Մինչև երեկո շարունակվեց անողոք կռիվը: Այդ օրվա մարտն ամենաահեղն էր: Այդ օրը երկու կողմն էլ շատ զոհ տվեց: Հենց այդ օրը, հենց այդ անողոք ճակատամարտում զոհվեց վրացի գնդապետ Լևան Օդիշելիժեն...

Հայ գնդապետ Լևոն Չարենցն էլ երկար չապրեց: Ոչ թե երկար չապրեց, այլ ճիշտ երրորդ օրը, ինչպես հավաստեցին ականատեսները, նախ՝ անզգայանալու չափ խմել է, հետո՝ լաց եղել, ապա՝ անսպասելի խաղաղվել. հաջորդել է կրակոցը: Գնդակը խոցել է հայ սպայի սիրտը...

Լևոն Չարենցի աչքերը բաց են մնացել... Այդ գիշեր հորդառատ անձրև է եկել. առավոտյան մարտերը դադարեցրել են...

ԻԼԻԱ ԲԱՐՄԱՄԻՉԵ

## ԵՐԵՎԱՆՅԱՆ ԻՄ ՈՂԻՍԱԿԱՆԸ

1989 թ. ապրիլի կեսերին էր: Աշխատում էի պետական անվտանգության կոմիտեի Թբիլիսիի բարձրագույն դասընթացներում: Հաստատության՝ գեներալ Ռոդիոնովին մինչև ուղն ու ծուծը սիրահարված դեկավարությունը ռուսական մամուլում հրապարակվող հակավրացական անթիվ-անհամար հոդվածները բազմացնում էր և տարածում աշխատակիցների մեջ: Դասընթացների վրացի աշխատակիցներս մշտապես հսկողության տակ էինք, և այդ ժամանակ ես՝ ՊԱԿ-ի սպաս, ի նշան բողոքի, գործադուլ հայտարարեցի: Խորհրդային պետանվտանգության պատմությունը նման բան չէր հիշում: «Եթե լուրը հասնի Մոսկվա, վերջ իմ կարիերային»,— այսպես մտածեց հաստատության պետ ԿոՎալովը, և քանի որ պրոֆիլակտիկ գրույցների ժամանակ համառում էի, ըմբոստ սպայիս նշանակեց պրակտիկայում գտնվող հայ կուրսանտների ղեկավար և մեկ ամսով գործուղեց Հայաստանի մայրաքաղաք:

Այստեղ են ասել. «Եզը եզին պոզահարեց, խոտի դեզին դեմ արեց»: Հայտնվեցի հայոց ազգային շարժման էպիկենտրոնում: Դրան մեծապես նպաստեց նաև իմ՝ ռուսթավելյան կազմակերպության անդամակցությունը և մեկ այլ՝ ոչ անկարևոր իրողություն՝ վրացի լինելս: Առաջին անգամ ես դա զգացի Երևանի «Շիրակ» հյուրանոցում:

Իմ հարցին՝ համար ունե՞ք, հերթապահը պատասխանեց.

— Հյուրանոցը ծայրեծայր բնակեցված է երկրաշարժի պատճառով անօթևան մնացած մարդկանցով, բայց դե վրացուն ինչպե՞ս կմերժես:— Եվ, հարցաթերթիկն ինձ պարզելով, շարունակեց.— վրացիներիդ շատ

են սիրում. սրտաբաց, խիզախ ժողովուրդ եք: Երբ երկրաշարժը անասելի տառապանք բերեց Հայաստանին, առաջինը վրացիները օգնության եկան: Նրանք նույնիսկ երևանցիներից շուտ հասան դժբախտության մեջ հայտնված շրջաններ:

Հետագայում համոզվեցի, որ յուրաքանչյուր հայ վրացու հետ գրույցի պահին այդ անգնահատելի օգնությունն ընդգծում է այնպես, ինչպես երեսին է խաչ հանում Էջմիածնի վանք մտնելիս:

— Շարժման մասնակիցները որտե՞ղ են հավաքվում,— հարցրի հյուրանոցի հերթապահին:

— Ա՛յ, հենց այնտեղ,— ձեռքը հյուրանոցի առջևի զբոսայգու կողմը մեկնելով՝ պատասխանեց նա:— Ինչ—որ կուսակցության անդամներ են հավաքվում այնտեղ, բայց հատկապես որ, չեն կարող ասել:

Քիչ անց զբոսայգում էի: Մոտեցա մի խումբ տարեց, բայց կայտառ մարդկանց: Նրանք տաք—տաք վիճում էին ինչ—որ խնդրի շուրջ: Դաշնակցականներ էին՝ բնիկ երևանցիներ և հայրենադարձներ:

Ընդունեցին ջերմորեն, ապա ցավակցեցին ապրիլի 9-ի առթիվ: Գովասանքի խոսքեր ասացին ազգիս հասցեին: Նրանցից մեկը, ներկայանալով իբրև պատմության պրոֆեսոր, ասաց.

— Հայերի ու վրացիների եղբայրությունն անխախտ է: Չնայած որոշ հարցերում ունեցած տարածայնությունների՝ Եվրոպայում լավագույն հարաբերություններ ունեինք ձեր մենշևիկների հետ:— Ապա հավելեց,— վրաց ազգային շարժումն ինչպե՞ս է նայում Ախալքալաքը, Ախալցխան և Բոգդանովկան Հայաստանին վերադարձնելու հարցին:

Խմբի մյուս անդամներին դուր չեկավ պրոֆեսորի գրույցի թեման:— Մի՞թե վրացիները դրան են արժանի, որ հիմա տարածքային պահանջներ ներկայացնենք,— առարկեցին նրանք:

— Վրացիներին ես ձեզանից պակաս չեմ սիրում, բայց դե պատմական ճշմարտությունը հո պետք է վերականգնվի,— պատասխանեց պրոֆեսորը և այլևս այդ թեմային չանդրադարձավ:

Այդ ժամանակ Երևանում արտակարգ դրություն էր: Գործում էր պարետային ժամը: Դազանակավոր, բայց չզինված ռուս զինվորները տիրոջ նման էին պահում իրենց: Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը շրջապատված էր պահակազորով: Ավելի հեշտ տիեզերական հետազոտությունների կենտրոն կմտնեիր. քան թե այդ շենքի տարածք: Պարզվեց, որ մի քանի ամիս առաջ Թատերական

հրապարակում հանրահավաքներ էին անցկացվել: Արտակարգ դրություն հայտարարելուց հետո պարետատան հրամանով հանրահավաքներն արգելվել էին, և թատերական հրապարակը նույնպես առնվել էր արգանի մեջ: Հանրահավաքները, սակայն, շուտով վերսկսվեցին: Ամեն օր բազմահազարանոց ցույցեր էին տեղի ունենում Մատենադարանի մոտ, Գերագույն խորհրդի շենքի մոտ, կենտրոնի շենքի մոտ, համալսարանի բակում, մինչդեռ խեղճ ու կրակ գինվորները զօր ու գիշեր պաշտպանում էին իր նշանակությունը կորցրած Թատերական հրապարակը, որպեսզի հանկարծ որևէ մեկը չհանդգներ սողոսկել ներս և հանրահավաք կազմակերպեր:

Ահա և քեզ կոմունիստական զգուշավորություն ու հեռատեսություն:

Հայկական մամուլը խորապես կոմունիստական էր. ասես ոչինչ տեղի չէր ունենում: Ազգային-ժողովրդական միջոցառումների մասին նկարահանումներն արգելված էին, և եթե լուսանկարչական իմ ֆոտոօբյեկտիվը պատմությանն հանձնեց մի քանի եզակի կադրեր, երախտապարտ եմ կարգավիճակիս:

Երևանի կենտրոնում կա մի փոքրիկ, գեղեցիկ պուրակ՝ վիթխարի չինարիներով ու հոսող աղբյուրով, որի մարմարիոն ճակատը զարդարում է Սայաթ-Նովայի վեհատեսիլ հարթաքանդակը: Այդ պուրակը հայոց ազգային շարժման մասնակիցների հավաքատեղի էր: Այդտեղ վճռվում էին քաղաքական հարցեր, փոխանակվում էին հաղորդագրություններ: Ձինվորական պարետատունը, չգիտես ինչու, պուրակին ուշադրություն չէր դարձնում: Հերթական անգամ մտնելով պուրակ՝ վրացերեն խոսակցություն լսեցի: Նստարաններից մեկին միջին տարիքի մի քանի կանայք ընտիր վրացերենով զրույց էին անում՝ մեջընդմեջ գործածելով նաև հայերեն բառեր: Մոտեցա նրանց և վրացերեն ողջունեցի: Տեսնելով ինձ՝ ոգևորվեցին: Ասացին, որ տեղափոխվել են Սաչխերիի շրջանից և, քանի որ Երևանում վրացի հազվադեպ է հանդիպում, իրենք էլ, որպեսզի չմոռանան մայրենին, մեկնելու հետ ավելի հաճախ վրացերեն են խոսում: Այնուհետև ինձ հարցրին, թե ինչ նպատակով եմ Երևանում: Պատասխանեցի, որ վրացական մի ոչ պաշտոնական թերթի թղթակից եմ, հայոց ազգային շարժման մասին հոդվածաշար պետք է գրեմ: Խոսքս չվերջացրած՝ նրանցից մեկը տեղից թռավ ու սուրաց ինչ-որ ուղղությամբ: Քիչ անց վերադարձավ ու հայտնեց, թե կոմիտեի ղեկավարությունն սպասում է: Նա կոմիտեականներ-

րին հաղորդել էր, թե Թբիլիսիից ժամանել է վրաց ազգային շարժման ներկայացուցիչներից մեկը...

Ինձ առաջնորդեցին ութսունն անց համակրելի մի ծերունու մոտ: Հին բանակի արտահագուստով էր, կրծքին շքանշան՝ Անդրանիկ Օգանյանի դիմապատկերով:

— Սա մեր ազգային շարժման պատրիարքն է՝ մեծ Անդրանիկի գինակիցը, եթե որևէ հարց ունենաք, իրեն դիմեք: Ձեզ անհրաժեշտ բոլոր տեղեկությունները նույնպես իրենից կստանաք,— ասացին ինձ:

Այսպես՝ պատահականության բերումով դարձա վրաց ազգային շարժման դեսպանը Հայաստանում: Մուշեղին՝ իբրև օգնական, կցեցին ինձ: Նա՝ այդ նախկին տաքսիստը, ազգային շարժման ակտիվ մասնակիցներից էր:

Այդ նույն օրը՝ ժամը հինգին, Մատենադարանի առաջ երեք հարյուր հազարանոց հանրահավաք տեղի ունեցավ: Ինձ հրավիրեցին նախագահություն: Հանրահավաքը վարողը ապրիլի 9-ի գոհերի հիշատակի առթիվ մեկրոպեանոց լռություն հայտարարեց: Սակված ժողովրդի գլխին երեք հարյուր հազար բռունցք բարձրացավ: Նայեցի կողքիս կանգնած կնոջը, որը կամավոր ստանձնեց թարգմանչի պաշտոնը: Աչքերից առատորեն արցունք էր հոսում:

Մուշեղն ինձ ուղեկցեց պետական կոնսերվատորիա: Նախասրահում հսկայական վահանակ էր՝ ծածկված վրացական, լատվիական և էստոնական ռուսալեզու թերթերով: Վրաստանի մասին ժողովուրդն այստեղ էր թարմ և անաչառ տեղեկություններ ստանում:

Պետական համալսարանի նախասրահում լուսանկարների վահանակ կար՝ ապրիլի 9-ի ողբերգության անհամար նյութերով: Շատ ու շատ հայերի եմ տեսել այդ վահանակի մոտ՝ բռունցք արած և արցունքն աչքերում: Շատ հառաչանքներ եմ լսել ես այդտեղ:

Մոտենում էր Թբիլիսիի «Դիմամոյի» և Երևանի «Արարատի» հանդիպման օրը: Այն պետք է տեղի ունենար Երևանում, բայց ղեկավարությունը վախենում էր, որ հանդիպումը կվերածվի ազգային զարթոնքի մի նոր, հզոր ցույցի և փորձում էր թբիլիսցիներին համոզել, որպեսզի խաղը կայանա Մոզիում:

«Ինչպե՞ս կվարվեն վրացիները»,— ասեցին հարցը, որի պատասխանն այդ օրերին մտատանջում էր ամեն մի հայի: Խաղը Հայաստանի

մայրաքաղաքում անցկացնելու թբիլիսցիների որոշումը թներ տվեց ոգորող երևանցիներին:

Ամբողջ Հայաստանը պատրաստվում էր ըստ արժանվույն դիմավորելու վրացիներին: Ոչինչ չէմ ուզում ասել հեքիաթային այն իրողության մասին, թե օղակայանում ինչպես դիմավորեցին մեր մարզիկներին, և խաղն էլ, իրոք, անմոռանալի էր:

«Հրազդան» գնացինք խաղասկզբից մեկ ժամ առաջ: Այդչափ տոնական դեմքեր կյանքում չէի տեսել: Սեկտոր իմ մուտքը օվացիայով դիմավորեցին: Ռադիոբարձրախոսներից վրացական երաժշտություն էր սփռվում: Մարզադաշտի վազբուդիով հայկական վիթխարի դրոշ էին տանում և ո՛ր սեկտորին դրոշը հավասարվում էր, այդ հատվածի մարզասերները բարձրագոյ աղաղակներով ոտքի էին կանգնում: Միայն արտասահմանյան խաղադաշտերում էի նման տեսարանի ականատես եղել: Մուշեղը թեքվեց իմ կողմը և հարցրեց.

— Դուք՝ վրացիներդ, ազգային դրոշ ունե՞ք:

Դրական պատասխան ստանալով՝ Մուշեղը քառագույն մածուկով գրիչ ու ծխախոտի մի տուփ մեկնեց ինձ և խնդրեց, որ նկարեմ դրոշը: Տուփը վերցրեց ու իսկույն չքացավ:

— Ո՞ր գնաց,— հարցրի հարևանիս:

— Ձեզ համար նվեր պատրաստելու:

Մուշեղը վերադարձավ կես ժամ անց: Ի՞նչ նվեր, ի՞նչ բան. եկավ ձեռնունայն...

Հանկարծ բարձրագոյ աղաղակ լսեցի: Եղավ իրարանցում և որոտընդոստ ծափողջույն: Նայեցի և ի՞նչ...

Օ՛, հրաշք... Մեղմ, գեղաշուք փողփողալով տրիբունաների առջևով անցնում էր մեր եռագույնը: Ողջ մարզադաշտը ոտքի կանգնեց: Մյուս կողմից առաջ շարժվեց հայոց եռագույնը՝ նույնպես ծափողջույնների ուղեկցությամբ: Հայոց և վրաց դրոշները հանդիպեցին ու... աներևութացան մեր տեսողաշտից: Շատ չանցած՝ վերստին երևացին՝ թել ու ասեղով ձեռաց մեկնեկու կարված: Ամբողջ խաղի ընթացքում դրոշները տրիբունայից տրիբունա էին փոխանցվում ժողովրդի հիացական բացականչությունների ու չմարող օվացիաների ուղեկցությամբ:

Խաղն սկսվելուն պես դատավորն այն ընդհատեց: Հաղորդավարը բարձրախոսով համառոտ պատմեց ապրիլի 9-ի ողբերգության մասին և հայտարարեց մեկրուպեանոց լուսություն: Ժողովուրդը ոտքի

կանգնեց, և նրա գլխավերևում հազարավոր բռունցքներ սեղմվեցին: Լուսթյան պահից հետո էլ բավական ժամանակ մարդիկ բռունցքները թափահարում էին օդում և բացականչում. «Պագո՛ր ռուսսկիմ», «Պագո՛ր ռուսսկիմ»:

Խաղադաշտում բուրեքայան շարք կանգնած ռուս բուրդ գինվորները դուրս գնացին:

Խաղն ավարտվեց ոչ-ոքի: Հաշիվը չբացվեց: Այլ հաշիվ չէր էլ կարող լինել, քանզի հազարավոր ֆուտբոլասերներ բացականչում էին. «Դի-նա-մո», «Դի-նա-մո»: Նույնիսկ եթե հայ ֆուտբոլիստներից որևէ մեկը, թեկուզ ականա, գնդակը փոխանցում էր դեպի դիմամոյականների դարպասը. տրիբունաներից սուլոց ու հիշոց էր լսվում:

Մոտենում էր ապրիլի 9-ի զոհերի քառասունքը: Ճշտվում էր Թբիլիսի մեկնող պատվիրակության կազմը: Ինձ ասացին, որ Վրաստանի համար նվեր են պատրաստում: Սամվելը՝ պատվիրակության կազմակերպիչը և, եթե չէմ սխալվում, խաչքարի հեղինակներից մեկը, ինձ ցույց տվեցին հուշակոթողի նախագիծը:

Նշանակված օրը Սայաթ-Նովայի պուրակի մոտ բեռնատար մեքենայի թափքում տեղավորեցին խաչքարը՝ հայկական մշակույթի պարծանքը, որն այժմ զարդարում է Թբիլիսիի Հավլաբար թաղամասի հայկական եկեղեցու առջևի հրապարակը: Մի քանի հազար մարդ էր հավաքվել՝ ուղեկցելու և ճանապարհելու պատվիրակությանն ու խաչը: Շարասյունը շարժվեց դեպի Թբիլիսի: Դարձյալ՝ արցունքակալ աչքեր, դարձյալ՝ գլուխներից վեր պարզված բռունցքներ...

Չանգահարեցի Թբիլիսի՝ Ռուսթավելու կազմակերպություն՝ Միխայիլ Արաբուլուն, և հայտնեցի պատվիրակության մեկնման մասին:

Մի քանի օր անց, վերադառնալով Երևան, պատվիրակության անդամներն ինձ աչքալուսանք արեցին վրաց ազգային շարժման ղեկավարների՝ բանտից ազատվելու առթիվ: Նրանցից մեկն անթաքույց հպարտությամբ ասաց, թե, իբր, ապրիլի 9-ի զոհերի մեջ եղել են նաև երկու հայուհիներ: Կռահեցի, որ խոսքը վերաբերում է Նանա և Մարինե Սամարգուլիանիներին: Չառարկեցի, թե՛ն Սամարգուլիանին ոչ թե հայկական, այլ վրացական՝ սվանական ազգանուն է: «Է՛հ, եղբայր, թող որ այդպես լինի»,— մտմտացի ինքս ինձ:

Ապրիլի 9-ի նահատակները, անկախ իրենց ազգությունից, պատկանում են ոչ միայն Վրաստանին, այլև Հայաստանին և համայն աշ-

խարհին, քանզի նրանց մահով հիմք դրվեց չարիքի կայսրության փլուզմանը, միայն թե այս մասին գրել, չգիտես ինչու, խուսափում եմ:

Մեկ ամիսը շուտ անցավ: Հայաստանում իմ ողիսականին և ակամա դեսպանությանն էլ վերջակետ դրվեց:

Այսպես ծանոթացա աշխատասեր, մարտնչող, Ջվարթնոց, Գառնի ու Գեղարդ կերտած հայ ժողովրդին, համոզվեցի նրա արտասովոր հյուրասիրության մեջ, անկեղծության և խիզախության մեջ, եղբորը մխիթարելու և կարեկցելու ունակության մեջ:

Խորապես համոզված եմ, որ իսկական ազգային շարժումներն ամենուր սուրբ են և երբեք չեն ծուլվի հոգեդավ մարդկանց, ինչպես վրաց անապական գինին երբեք չի ծուլվում կուպրին:

Տա՛ Աստված, որ այդ եղբայրությունն ու այդ սրբությունը երբեք ու երբեք չխաթարվեն, չպղտորվեն մեզանում:

ՄԻՒՏԻԼ ԱՆԹԱՁԵ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Դեկտեմբերի 4-ին գործուղմամբ հյուրընկալվում էի Հայաստանում: Մեկնել էի իմ սեփական մեքենայով: Միայնակ: Գործերս վերջացրի և 7-ի առավոտյան շարժվեցի դեպի Թբիլիսի: Ո՛չ արագ էի վարում, ո՛չ դանդաղ, միջին արագությամբ: Ճանապարհը ծանրաբեռնված չէր, ամեն դեպքում, այժմ առանց երկմտանքի կարող եմ ասել, որ այն տարաբախտ պահին ինձնից հեռու թե մոտ ո՛չ համընթաց, ո՛չ դեմընթաց մեքենա չկար:

Ինքներդ դատեք, խոհերով տարված՝ սլանում եմ ճանապարհով և հանկարծ, առանց որևէ պատճառի, դեկը պլստում է ձեռքիցս: Ո՛չ սառույց է, ո՛չ ծյուն, ո՛չ անձրև, մինչդեռ մեքենան կայծակի արագությամբ թեքվում է կողքի, ուր որ է՝ դուրս կընկնի ճամփից: Մեքենան վարում եմ ճիշտ այնպես, ինչպես պահանջում են երթևեկության կանոնները, բայց տակից ասես անմարդկային մի ուժ շարտում է նրան: Դեռ լավ էր, որ արագ չէի գնում, այլապես շրջվելուց չէի խուսափի: Չէի հասկանում՝ ինչ էր կատարվում: Գլխիս մեջ առկայծում էր այն միտքը, թե շարժիչի մեջ հավանաբար ինչ-որ բան է խաթարվել: Ինքս էլ չգիտեի՝ ինչպես վարվեի դեկի հետ, բայց, ո՛վ գարմանք, ահա՛, կանոնավոր շարունակում եմ ճանապարհը, ասես ոչինչ էլ չի պատահել: Առաջին հայացքից է այդպես թվում, այնուհետև նկատում եմ, որ առջևում ասֆալտը ուռած է, ճաքճաքած, բացվածքներ կան, ճամփան ու ճամփեզրը խառնվել են իրար: Մի պահ դա էլ չգարմացրեց (մի՞թե հազվադեպ են քանդված-ավերված ճանապարհները մեզանում), բայց մինչ այս, մինչ այդ, աչքերիս առաջ

պարզորոշ հառնում է զարհուրելի տեսարան, և հեղձուցիչ, ճնշող վախը կործանարար դեղնախտի հետ միասին սողոսկում է մարմնիս մեջ, սողոսկում է ու մթագնում ուղեղս:

Երկրաշարժ: Երկրաշա՞րժ էր: Չկա ավելի մեծ աղետ, որ մարդուն զգալ տա իր անզորությունը, ահա թե ինչու դրանից մարդ հաճախ կորցնում է բանականությունը:

Ուղեղս մթագնած՝ նույնիսկ չնկատեցի, թե ինչպես հայտնվեցի ավերակույտերի վերածված քաղաքում, ավելի ստույգ՝ քաղաքատեղում, ուր տասնհինգ թույլ թե տասնհինգ վարկյան առաջ (ժամանակի զգացողությունն էլ կորցրի) կյանքը եռում էր, մինչդեռ այժմ վերածվել էր փլատակների:

Ոչ էլ գիտեի՝ որտեղ եմ, ո՞ր քաղաքում:

Կայծակնահար, մշուշված գիտակցությամբ առաջ էի շարժվում, մտքովս չէր անցնում, որ կարելի էր մեքենան կանգնեցնել. դանդաղ ընթանում էի լայնահուն փողոցով, փողոցատեղով, բերանները բացած սարսափելի փոսորակների ու քանդված բեկորների միջև փնտրում էի ճանապարհը: Հետո միայն հասկացա՝ ինչու չէի համարձակվում կանգնեցնել մեքենան, ուզում էի մարդ տեսնել, մեծ-մեծակ ոչ մի գնով չէի կանգնի սահմակեցուցիչ տեսարանի առջև՝ ավերակված քաղաքում, քանզի չարագույժ լռությունն է զվվում գլխիս մեջ:

Հետո մարդկանց տեսա, միանգամից շատ, հավանաբար, քսան մարդ, վազեցին դեպի ինձ, շրջանցեցին, գոռոռալով ինչ-որ բան ասացին, բացատրում էին, հասկացնում, բայց հայերեն: Պարզ է՝ ածխի պես սև իմ բեղմորուքի պատճառով մտքներով չէր անցնում, որ իրենց լեզուն չեմ հասկանում: Ամբողջ կոկորդով գոռում էի, թե ռուսերն են, ռուսերեն խոսեք, հայ չեմ, բայց ո՞ւմ կասես: Ձեռքները պարզեցին դեպի ամենամոտ կեռմանը, թե այդ կողմից իջիր, իսկ իրենք վազեցին հակառակ ուղղությամբ, այնպես որ չհասցրի մեքենայից դուրս գալ:

Գնացի նրանց ցույց տված ուղղությամբ, մոտ երկու հարյուր մետր անցնելուց հետո կանգ առա. առջևում այլևս ճանապարհ չկար: Հիմնահատակ կործանված շենքը (հավանաբար՝ չորս-հինգ հարկանի) փողոցը դարձրել էր նրբանցք:

Ամենուր ավերակույտեր էին:

Շարժիչն անջատեցի ու այդ ամբողջ ընթացքում առաջին անգամ ոտքս հողին դրի: Նույն պահին տեսածիցս շունչս կտրվեց, քար կտրեցի:

Տասը մետր հեռավորության վրա տանիքի թիթեղի և աղյուսի կույտի վրա նստած էր մոտ հինգ տարեկան մի տղա: Նստած էր զարմանալիորեն լուռ, անշարժ և տանջալիլով, լայն բացված աչքերով նայում էր հեռուները: Քարացած էր, այո՛, բայց բնավ չէի կասկածում, թե կարող է մեռած լինել, որովհետև այդչափ թախծոտ աչքեր միայն կենդանի մարդը կարող էր ունենալ: Տաք վերարկու էր հագել, տաք գլխարկ դրել, բայց բոթասներից ու կրծքին սեղմված գնդակից հասկացա, որ բակ է իջել՝ խաղալու: Եվ դա էլ փրկել էր: Շրջակայքում՝ հեռու թե մոտ, մարդ-մուրդ չէր երևում: Ձգացի, որ մեզ դիպվածն է հանդիպեցնում. Աստված կամ նրան է ինձ համար ուղարկել, կամ ինձ՝ նրա: Ամեն դեպքում՝ պարտավոր էի ծանոթանալ:

Մտտեցա ու նստեցի փոքրիկի կողքին: Նայեց ինձ. նույն հայացքն էր, որ նա հառել էր ավերակների միջից ծանրորեն բարձրացող գոլորշուն: Նայելով այդ աչքերին՝ շատ վատ զգացի, բայց ինձ մի կերպ հավաքեցի ու հարցրի անունը: Պարզ է՝ ռուսերեն: Չպատասխանեց:

— Խոսիր ինձ հետ, բալիկ,— կրկին ասացի ես: Եվ մինչ ծայն կիսներ, դեմքը թրթռաց, հետո ինչ-որ բան ասաց: Իսկույն հասկացա, որ երեխան ռուսերեն դեռ ոչ մի բառ չգիտի: Ես էլ հայերեն ոչ մի բառ չգիտեի: Դիմեցի վրացերենով.

— Ես վաժա քեռին եմ,— մատս կրծքիս դնելով՝ մի քանի անգամ կրկնեցի:

Հասկացավ, ինքն էլ մատը դրեց կրծքին (մյուս ձեռքով գնդակն էր սեղմել) և ասաց.

— Լևոն:

— Լա՛վ գնդակ ունես, Լևո՛ն,— ասացի (չգիտեի՝ ինչ ասեմ, թեև, միևնույն էր՝ ինչ կասեի. խոսքն իր արժեքը կորցրել էր),— տո՛ւր ինձ:— Ձեռքս մեկնեցի. խոժոռվեց, չգիջեց: Գնդակն իսկապես ընտիր էր՝ բոլորովին նոր, սպիտակ, սև քառակուսիներով, ֆուտբոլի իսկական, կաշվե գնդակ:

Առժամանակ տիրեց ծանր ու ճնշող լռություն:

Հայացքով գննեցի շուրջս. շենքի ավերակույտերի մեջ պարզորոշ տեսա ծանոթ առարկա՝ հեռուստացույց: Չգիտեմ ինչու, տեսնելուն պես մարմնովս սարսուռ անցավ. հանգած էկրանն անվնաս էր մնացել. միակ ամբողջական առարկան էր հսկայական տարածքում:

Տղան ծայն-ծպտուն չէր հանում:



Ոչ ոք ուշադրություն չէր դրածնուն ինձ վրա: Բոլորն զբաղված էին իրենց գործով, իրենց դժբախտությամբ էին կլանված: Հասկացա, որ ես նույնպես պարտավոր եմ որևէ գործ անել, բայց իմ ձեռքերի մեջ հանգստանում էր սարսափելի, մանկան համար ահավոր տանջանքից լլկված մեկը, որ խոր քնած էր:

Նստած էի այդպես, երբ հրշեջ վիթխարի մեքենան խլացուցիչ ազդանշանով ընդհուպ մոտեցավ և հասկացրեց, որ ճանապարհն ազատեմ: Սուլոցից երեխան արթնացավ, ժպտաց, ինչպես սովորաբար ժպտում են երեխաներն արթնանալիս և իր խոշոր, ժպտուն, սև աչքերով նայեց ինձ: Տեղավորեցի կողքիս աթոռին, նույն պահին վերցրեց գնդակը, իսկ ես հանկարծ նկատեցի, որ ինձնից ճանապարհ պահանջող հրշեջ մեքենայի դռան վրա գրված է՝ «Թբիլիսի»:

Ուրախությունից խենթացած՝ դուրս թռա մեքենայից, կախվեցի վարորդից ու գրեթե գոռացի ականջի մեջ.

— Թբիլիսիում հո հանգիստ է, բարեկամ:

— Մի՛ վախենա,— պատասխանեց նա:

Այնուհետև ասաց, որ երկրաշարժի ուժգնությունը Թբիլիսիում եղել է վեց բալ, երեքացել են շենքերը, մարդիկ կարգին վախեցել են, բայց ոչ ավերածություններ են եղել, ոչ էլ զոհեր: Մինչդեռ այստեղ՝ Հայաստանում, չորս քաղաք և անթիվ գյուղեր քարուքանդ են եղել: Շտապելու պատճառով նույնիսկ մոռացա հարցնել, թե որ քաղաքում ենք: Անմիջապես ազատեցի ծամփան, և նա էլ, առանց հրաժեշտ տալու, հեռացավ իր վիթխարի կարմիր մեքենայով:

Ես նույնպես շարժվեցի: Քաղաքատեղում ավելացան թե՛ մարդիկ և թե՛ մեքենաները: Արդեն սկսվել էր ջանադիր պայքարը հանուն մարդկանց փրկության:

Մերոնց հիշեցի. կամ պիտի տեղեկացնեի իմ մասին, կամ շտապ մեկնեի, թե չէ վշտից ողջ չեի գտնի նրանց:

Բայց այս երեխային ի՞նչ անեմ: Արթնանալուն պես նրա մեջ խոսելու մեծ ցանկություն առաջացավ: Ի՞նչ իմանաս, թե այդ սարսափելի աղետն ինչպես է խաթարել նրա մանուկ հոգին, ի՞նչ իմանաս, թե ինչպիսի դժբախտության է ակնատես եղել, ի՞նչ իմանաս՝ որտեղ են նրա ծնողները, ընտանիքի անդամները: Տա՞նն են եղել, թե՞ չէ: Ո՞վ կպատասխանի այս հարցերին: Այս թոհուրոհի ժամանակ, երբ մարդիկ ողջ-ողջ թաղվածներին փրկելու գործով են զբաղված, հո չեմ կա-

րող գնալ ու խնդրել, թե թարգմանեք խոսքերս: Մինչդեռ տղան պատմում է հուզված, կցկտուր, սրտակեղեք պատմում է, խոսում ինձ հետ, դժգոհում՝ չմտածելով, որ ես իրեն բոլորովին չեմ հասկանում, թեև, ինչպե՛ս չեմ հասկանում, ի՞նչ չեմ հասկանում: Բա էլ ի՞նչ եմ հասկանում այս աշխարհից:

Չէ՛, այս երեխային թողնել չի կարելի:

Գուցե թե տանեմ Թբիլիսի. ընդամենը երկուսուկես ժամվա ճանապարհ է. մերոնց կտեսնեմ, կհանգստացնեմ, երեխային կթողնեմ, հետո կրկին կվերադառնամ ու սրա հարազատներին կփնտրեմ: Իսկ եթե չկարողանամ փնտրե՞լ... Չէ, դեռ շուտ է այս մասին մտածել:

Դե՛հ, դեպի Թբիլիսի:

Քաղաքի ելքի մոտ մի ծանոթ դեմք տեսա. թբիլիսցի բժիշկ էր: Մեքենան կանգնեցնում եմ, վազում նրա կողմը, բարևում եմ, բարևս առնում է, ապա ավելացնում.

— Այստեղ ենք եկել, մեծ, շա՛տ մեծ աղետ է տեղի ունեցել:

— Թբիլիսիում ի՞նչ կա-չկա,— հարցնում եմ (հրշեջի խոսքերի մեջ եմ ուզում հավաստիանալ):

— Հանգի՛ստ է:

Մինչդեռ ես ոչ մի կերպ չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես կարող է որևէ տեղ հանգիստ լինել, երբ այստեղ ահասարսուռ ողբերգություն է. սարսափելի ավերակներ, զոհեր ու խեղվածներ, կենդանի թաղվածներ ու փլատակների տակ հեծեծող վիրավորներ, որդեկորույս ծնողներ ու ծնողներին փնտրող զավակներ...

Չե՛մ պատկերացնում:

Հիմա ոչ մի տեղ՝ ամբողջ երկրագնդի վրա և ոչ մի տեղ, հանգիստ չէ, չի կարող լինել:

Բժիշկն շտապում է իր գործին, իսկ ես շրջվում եմ և, ինչ տեսնեմ, իմ Լևոնին գրկել է զխաշորով մի կին, համբուրում է ու լաց լինում:

Մոտ վազեցի:

Կինն ինձ ինչ-որ բան է ասում հայերեն: Պատասխանեցի, որ վրացի եմ:

— Ես սրա մորաքույրն եմ, սրա մորաքույրն եմ, մորաքո՛ւյրը,— ասում է ու շարունակում հեկեկալ: Հետո տղային առնում է ձեռքերին ու



վազում: Ուշադիր հետևում եմ Լևոնին. նա մորաքրոջ ուսի վրայով ինձ է նետում իր՝ բոլորովին նոր, սպիտակ, սև քառակուսիներով գնդակը...

Կռանում եմ, գնդակը վերցնում, և... Լևոնը չկա:

Շրջակայքում անհաշիվ մարդիկ են խմբվել... Գնդակը պահել եմ ձեռքիս մեջ... Մեքենայում փոշեկոլով հացն է ու «Բորժոմի» դատարկ շիշը... Չգիտեմ՝ որ քաղաքում եմ, թեև դա շատ հեշտ է պարզել ու իմանալ: Բայց, ա՛յ, Լևոնի մասին այլևս ոչինչ չեմ կարող իմանալ. նրա ծնողները ո՞րջ են, փրկվե՞լ են... Կամ հետագայում ի՞նչ բախտ է բաժին ընկնելու նրան: Ասե՛ք՝ արժե՞ բախտի մասին խոսել այս համընդհանուր դժբախտության ժամին...

## ՊԱՏԳԱՍ ՄԵԾԱՑ

\* \* \*

Նախապես հիշատակենք այսպես, քանզի հայոց և վրաց... և կովկասեցոց հայրը մեկն էր՝ Թարգամոս անվամբ... Նրա որդիներից ութ մարդ հայտնի դարձան որպես հզոր ու անվանի հսկաներ... Առաջինը կոչվում էր Հայոս, երկրորդը՝ Քարթլոս, երրորդը՝ Բարդոս... Այս ութ եղբայրները հսկաներ էին, սակայն Հայոսը ամենքից առավել հսկա էր, քանզի նրա նմանը երբեք չի եղել ոչ ջրհեղեղից առաջ, ոչ էլ հետո՝ մարմնով, ուժով ու քաջությամբ... Եվ այս յոթ հսկաների կառավարիչն ու տերը Հայոսն էր: Եվ այս բոլորը հպատակ էին Հայոսին: Եվ այս ութ հսկաներն էլ ծառայում էին Նեբրովթ հսկային, որն առաջին թագավորն էր ողջ աշխարհի:

«ՔԱՐԹԼԻՍ ՑԽՈՎՐԵԲԱ», XII Դ.

\* \* \*

Վրացիների և հայերի շահերն այնպես են զոդված իրար, որ մտքով կույրն անգամ չի կարող բացասել այս հանգամանքը: Ուրեմն՝ անհրաժեշտ է փոխադարձ հարաբերությունների ուժեղացում:

«ԻՎԵՐԻԱ», ԹԻՎ 172, 1903

\* \* \*

Մենք լավ գիտենք, որ առաջվա Վրաստանի թուլությունն սկսվեց այն դժբախտ օրվանից, երբ երեսնիվայր ընկավ Հայաստանը՝ մեր առաջվա պատվարը հարավից:

*Իլիա ՃԱՎԵՍՎԱԶԵ*

\* \* \*

Հայերին սիրում եմ և ցանկանում, որ մեր միջև այնպիսի փոխհարաբերություն լինի, ինչպես էր մեր նախնիների օրոք: Ցանկանում եմ, որ սրանից հետո գոնե ձեռք ձեռքի տված մի ուղիղ ճամփով ընթանանք դեպի ապագան, թե չէ իրար հետ թշնամությամբ ոչ մեկս հեռու չենք գնա:

*Ակակի ԾԵՐԵԹԵԼԻ*

\* \* \*

Հայի և վրացու անառարկելի եղբայրության ապացույցը մեր ձեռագիր մատյաններում է, մեր արյան ու սրտի մեջ, Մցխեթի ու Էջմիածնի տաճարներում է, իշխանների ուխտատեղի Հառիճավանքի վիմագրերում, մեր նախնյաց քաջերի արյունով ներկված Անիում ու Ասպինձայում... Թիֆլիսում ու Երևանում, Արաքսի ու Արագվիի ափերին, Արարատի ու Մղինվարի լեռնալանջերին, Դվինի ու Կրծանիսի հին մարտադաշտերում, մեր օջախների ծխաբուլաներում: Ապացուցվածը պիտի պաշտպանել աչքի լույսի պես, որ հին արմատի մեր ճյուղերը միշտ դալար մնան, չթոշեն:

*Կոնստանտին ԳԱՍՍԱՆՈՒՐԴԻԱ*

\* \* \*

...Հայ և վրաց ժողովուրդները ապրել են մի հոգով, շնչել են նույն օդը և միացյալ ուժերով դիմադրել ներխուժող թշնամիներին: Այսպես է եղել հնում, այսպես է նաև հիմա, այսպես կլինի միշտ, քանի դեռ հոսում են Հրազդանն ու Քուռը:

*Իոսեփ ԳՐԻՇԱՇՎԻԼԻ*

\* \* \*

Հայ և վրաց ժողովուրդները հիմնականում ընդհանուր թշնամի ունենին: Այդ թշնամիներին նրանք առճակատում էին միացյալ ուժերով. հաղթանակի դեպքում միասին ուրախանում էին, պարտության դեպքում՝ վշտանում ու դառնանում: Դրացիության և բարեկամության այս երկար ճանապարհին մեր ժողովուրդների պատմության ամենափառահեղ էջերը գրվում էին ճիշտ այն ժամանակ, երբ նրանք ուս ուսի պայքարում էին դաժան կեղեքիչների դեմ և հերոսական մարտերում անշահախնդրորեն արյուն ոթում մեկը մյուսին պաշտպանելու համար:

*Գրիգոր ԱՐԱՇԻՉԵ*

\* \* \*

Յուրաքանչյուր վրացի պետք է իմանա, որ հայերը հնուց անտի մեր եղբայրներն են, և բոլոր նրանք, ովքեր չեն հասկացել այս ճշմարտությունը, մոռացել են սիրել իրենց հարազատ եղբորը: Յուրաքանչյուր հայ պետք է իմանա, որ վրացիները հնուց անտի մեր եղբայրներն են, և բոլոր նրանք, ովքեր չեն հասկացել այս ճշմարտությունը, մոռացել են սիրել հարազատ եղբորը: Ով մեր միջև պղտորում է ջուրը, նա միայն թշնամու ջրաղացն է աշխատեցնում:

*Գեորգի ՋԻՔԼԱՉԵ*

\* \* \*

Հայերը և վրացիները հնագույն մշակույթի տեր ժողովուրդներ են: Մենք միասին ենք քայլել պատմության քառուղիներով. մենք հարևաններ ենք ֆիզիկական իմաստով, մինչդեռ ոգով, պաթոսով, արարմամբ նույն էությունն ենք: Մեր հարազատությունը ճակատագրով է մեզ տրված:

...Մեր լեզուն ու մեր գիրը մեր գոյության խնդիրն են լուծել և մեզ վրացիներիս ու հայերիս դուրս բերել մեծ ժողովուրդների դասը:


*Նոդար ԴՈՒՄՐԱՉԵ*

\* \* \*

Այս աշխարհում որք մնացած վրացին մեն մի սրտացավ ու կարեկից եղբայր ունի, որին ստեղծել է երկնային Արարիչն ինքը: Դա հայն է: Հայը՝ մեն ու փառավոր պատմությամբ:

Ջանսուղ ՉԱՐԿՎԻԱՆԻ

ՇԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ВЕРХОВНЫЙ ПАТРИАРХ  
КАТОЛИКОС ВСЕХ АРМЯН

---

№ .11 Ա. Էջմիածին 29 . Հունիս . 19.90 . Բ .

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ.Տ. ԻԼԻԱ Բ-ԻՆ՝  
ՊԱՏՐԻԱՐԷ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՍԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ,  
ԹԲԻԼԻՍԻ

Սիրեցյալ եղբայր Մեր,

Ահավասիկ կրկին գրում եմ Ձերդ Սրբության, իմ վերջին 29 Ապրիլ 1990 թվակիր նամակից հետո: Երկար մտածեցի, գրե՞մ Ձեզ այս տողերը թե ոչ, բայց ի վերջո որոշեցի գրել, նվիրական մի պարտականություն կատարած լինելու գիտակցությամբ, մի պարտականություն հավասարապես Հայ և Վրաց ժողովուրդների հանդեպ:

Ես հավատում եմ նախ պատմության վկայության ի մասին մեր երկու ազգերի մշտական բարի դրացիության և հաճախ համագործակցության՝ մանավանդ փոթորկալի ժամանակներում, ահա երկու հազար տարիներից ի վեր:

Բնորոշելով պատմությունը, անցյալ դարու մեր գրողներից մեկը ասել է՝ «հետ նայիր որպեսզի ուղիղ տեսնես քո առաջը»:

Այսօր ես վկայակոչում եմ ոչ միայն անցյալը մեր ժողովուրդների բարեկամության, այլ նաև հրամայականը այդ բարեկամության պահպանման նաև մեր օրերին, երբ այնքան դժվարին, տագնապալի ժամանակներ են ապրում նրանք և այնքան վտանգներ են կուտակվում նրանց կյանքի ճանապարհին:

Որով թե՛ պատմությունը և թե մեր օրերի նոր կացությունները թե-  
լադրում են մեզ՝ մխիթարել մեկս մյուսին, նեցուկ լինել և օգնել մեկս  
մյուսին: Մեր ժողովուրդների ապագայի ճանապարհը, մեզ ցույց է տա-  
լիս թե մեր անցյալը թե մեր ներկան:

Իմ խիղճը սղում է ինձ եղբայրաբար Ձեզ բերելու իմ այս խոհերը  
իբրև հետևանք այն տարածայնությունների որ վերջերս շրջում են ձեր  
մայրաքաղաքում Հայ ժողովրդի և Եկեղեցու նկատմամբ, բոլորովին ան-  
համապատասխան ճշմարտության և արդարության ու մեր ժողովուրդ-  
ների շահերին: Ես ծանորրեն մտահոգված եմ և խոր վիշտ եմ ապրում:

Իմ հոգեկան վիճակը առավել ծանրացավ այս օրերին, կարդալով  
Թբիլիսիում հրատարակվող «Գրական Վրաստան»-ի 8 Հունիսի համա-  
րում լույս տեսած հոդվածը, վրացի ծանոթ գրող և հասարակական գոր-  
ծիչ պարոն Ջ. Կանասխուրդիայի ստորագրությամբ, որի մեջ կա մի ըն-  
դարձակ հատված՝ Վրաց և Հայ ժողովուրդների հարաբերությունների և  
անձամբ ինձ վերաբերող, լի ապշեցուցիչ, անհավատալի դատողու-  
թյուններով:

Վստահ եմ, որ եթե կարդաք հոդվածի այդ մասը, Դուք ևս պիտի հա-  
մոզվեք, թե հոդվածագիրը զոհ է գնացած անճիշտ ու անհիմն տվյալների:

Մինչև երկինք աղաղակող անարդարություն է հայտարարել մի  
գրական լուրջ թերթի էջերում, թե «Վազգեն Կաթողիկոս, ասում են թե, իր  
քարոզներով կոչ է անում հայերին, որ գնան բնակվեն Սև ծովի ափե-  
րին...», որպեսզի Վրաստանում հայերի թիվը շատանալով մի օր այդ  
երկրամասը միացնի Հայաստանին, և այլն:

Այսպիսի կոչ ես երբեք չեմ կատարել որևէ առիթով: Նման մոլորու-  
թյան հետք անգամ չի եղել իմ հոգում:

«Դատ արա ինձ Տէր Աստուած, զի ես յանբժութեան իմում գնացի...  
և ոտն իմ կացցէ յուղղութիւն» (Սաղմ. 25-1, 12):

Ընդհակառակը իմ բոլոր քարոզները ուղղված հայերին, եղել են  
կոչեր համախմբվելու Մայր հայրենիքի տարածքի վրա, չցրվել, չհեռա-  
նալ մայր հողից: Ավելին, երբ լսել եմ որ որոշ ընտանիքներ, անձնական  
նկատումներով, Հայաստանից տեղափոխվել են Սոչի կամ Սուխումի  
կամ Միջին Ասիա, ես մեղադրել եմ նրանց և այդ կոչեր եմ ուղղել մեր ժո-  
ղովրդին՝ չհետևել նրանց օրինակին և չբաժանվել մայր երկրից: Իսկ  
Վրաստանում բնակվող հայերին միշտ, ամեն առիթով հորդորել եմ և հի-  
մա էլ նրանց կոչ եմ անում՝ մնալ հավատարիմ քաղաքացիները վրացա-

կան հայրենիքի, նվիրված վրաց եղբայր ժողովրդի բարօրության,  
նրանց արդար սպասումների իրագործման:

Եվ այսօր, ինչքան անտանելի է ինձ համար լսել նման անխիղճ մե-  
ղադրանք, լսել վրացի ժողովրդի պատասխանատու մի գործիչի բեր-  
նից: Մի պահ նույնիսկ մտածում եմ թե արդյոք նման անհիմն ու անճիշտ  
հայտարարություններ հատուկ են կատարվում որպեսզի թունավորվեն  
հոգիները վրացոց և՛ հայերի և՛ թշնամանք սերմանվի նրանց միջև:

Ես բավականին ճանաչել եմ Վրացի մեր եղբայրներին տարբեր ա-  
ռիթներով թե հոգևորական սպասավորներին, թե մտավորականներին և  
թե պարզ հասարակ հավատացյալներին որոնք այնքան մեծ թվով այցի են  
գալիս Սուրբ Էջմիածին: Բոլոր առիթներով ես զգացել եմ նրանց մեջ բա-  
րի, անկեղծ եղբայրական վերաբերումը Հայ ժողովրդի և անձամբ իմ  
նկատմամբ, հետևաբար չեմ ուզում հավատալ որ նրանց հոգու մեջ կարող  
են տեղ գտնել ատելության և թշնամանքի սերմեր Հայ ազգի հանդեպ:

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս, թղթատենք մեր երկու ժողո-  
վուրդների պատմության էջերը՝ ուղիղ հայացքով և պայծառ մտքով, ոչ  
ծուռ հայելու միջով, որպեսզի հստակ տեսնենք իրականությունը և ու-  
ղիղ հասկանանք մեր անցյալը, ուղիղ վերլուծենք այսօր մեր առաջ դր-  
ված հարցերը և ուղիղ ճանապարհը գտնենք դեպի առավել խաղաղ ու  
ազատ ապագայի:

Ավելի քան տասը տարիներ առաջ էր, երբ այցի էի եկած Թբիլիսի և  
հյուրն էի Ձերդ Սրբության: Իմ մեկնումի առիթով Դուք մի ընդունելու-  
թյուն էիք կազմակերպել, որին ներկա էին նաև մեծ թվով վրացի մտավո-  
րականներ: Նրանցից, խոսք առնողներից մին, մի երիտասարդ գիտնա-  
կան, հավանաբար պատմաբան, իր խոսքի մեջ ընդգծեց այն պատմա-  
կան երևույթը թե Հայ և Վրաց ազգերը թե իրար հակադրվել են և թե միա-  
ժամանակ իրար կողքի և իրարից անբաժան են ապրել դարեր շարու-  
նակ, զիրար գնահատելով ու ամեն մեկը պահելով իր ազգային ինքնու-  
րոյնությունը: Կխորհիմք թե Դուք ևս հիշում եք այդ խոսքը: Կարծում եմ,  
որ վրացի երիտասարդ պատմաբանի դատողությունը այժմեական է և  
ուսանելի բոլորիս համար:

Այդ մեր ժողովուրդները նման են երկու ուղեկից ընկերների, որոնք  
թեև հարազատ բարեկամներ, սակայն ամեն մեկը նախանձախնդիր է ե-  
ղել իր ինքնուրույնությանը, իր մտածելու և ստեղծագործելու անհատա-  
կանությունը պահպանելու, և որոնք երբեմն իրար հետ վիճելով ու հա-

կադրվելով իսկ, մնացել են իրարից անբաժան, մեկը մյուսով իր սեփական ազգայինը, իր լինելիությունը առավել հաստատելով:

Շատ պիտի ցանկայի, որ իմ այս խոհերը հասնեին մեր վրացի հոգևոր եղբայրներին ու մտավորականներին, նաև պրն. Կամսախուրդիային: Այսպիսով, կխորհիմ մի ծառայություն մատուցած լինել Հայ և Վրաց եկեղեցիների ու ժողովուրդների դարավոր բարեկամության վերականգման ու ամրապնդման: Համոզված եմ որ Դուք նույն զգացումներով տոգորված, համաձայն կլինեք որ հրապարակվի իմ այս նամակը:

Մեր եղբայրական սերն ու զնահատանքը Ձերոջ Սրբության և մեր քաջալերանքը և օրհնությունը վրաց բազմաշնորհ ազնիվ ժողովրդին: Թող բարին Աստված իր անբավ ողորմությամբ մնա օգնական և մարտակից մեր հավատակից ազգերին, որպեսզի նրանք ինչպես անցյալում վտանգի պահերին, նաև այժմ միասիրտ ու միակամ բաղխեն դժնեքը առավել լուսավոր մի ապագայի:

Եղբայրական սիրո ողջագուրումով՝

ՎԱԶԳԵՆ Ա  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
Ա. Էջմիածին, 29 հունիս 1990 թ.

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Վերջին տասնամյակի ժողովրդավարությունը մի հեղեղ էր, որ բալականաչափ թարմություն հաղորդեց հասարակական կյանքին, բայցև շատ էր նրա բերած տիղմը: Այն, որ պարբերականների մեջ հեշտությամբ տեղ են գտնում ցածրորակ գրություններ, հաճախ ծայրահեղորեն աչառու և սադրիչ եզրահանգումներով, պայմանավորված է ոչ միայն հեղինակների անտեղյակությամբ ու միտումնավորությամբ, այլև դրանց ասպարեզ տրամադրող խմբագրությունների ցածր պրոֆեսիոնալիզմով: Այս երևույթը հատկապես ակնբախ և անհանգստացնող է վրաց մամուլի պարագային: Այստեղ գնալով ահագնանում է հակահայ մի հիստերիա, որին տոն տվողներից շատերը, դժբախտաբար, «նախկին հայեր» են:

Մամուլի այդ կարգի հրապարակումներին լուրջ նշանակություն տալն անիմաստ է, որովհետև դրանք մեծ մասամբ իրականության, մանավանդ գիտության հետ հեռավոր կապ իսկ չունեն, թեպետ երբեմն գործառու են «գիտական փաստերով», պատմագիտության անունից: Սույն ժողովածուն ընթերցող լայն հասարակայնության համար չէ, այլ մասնագետների նեղ շրջանակի, և մենք հույս ունենք, որ ընթերցողները քննական մոտեցում կցուցաբերեն և չեն զայրանա այնտեղ, ուր ժպիտն է վայել:

Մյուս կողմից, սակայն, չի կարելի անպատասխան թողնել չարամտորեն ասված ամեն խոսք: Այդ բանը, հուսանք, ժամանակին և տեղին կանեն համապատասխան բնագավառների մասնագետները: Այստեղ արժե անդրադառնալ Վրաստանում վրացիներին զանգվածորեն հայացնելու առասպելին, որ հորինվել է հողվածագիրներից շատերի թեթև

ծեռքով, և տպավորությունն այնպես է, թե հայտնի առակի հերոսի նման նրանցից ոմանք հավատում են իրենց հերյուրածին: Բայց նրանց մտքով չի անցնում, որ այդպիսի պնդումով առաջին հերթին վարկաբեկում են վրաց ժողովրդին: «Ներքին Քարթլիի էթնոսը պատմական տեսանկյունից» հրապարակման մեջ ասվում է. «Իբրև օրինակափություն, բնիկը պետք է ազդեցություն թողնի վերաբնակիչների վրա, օտարին դարձնի իր կրոնին ու դավանանքին. տեղի է ունեցել հակառակը»: Յնարավոր չէ ավելի վարկաբեկիչ բան հորդել որևէ ժողովրդի հասցեին, քան սա: Իբր վրացիները իրենց հայրենիքում չեն կարողանում պահել իրենց ազգային դեմքը, հեշտությամբ դառնում են «մահմեդական, ֆրանկ, հույն, հայ»: Այս մտացածին խնդիրը հիվանդագին արտահայտություն է գտել շատ հողվածներում: Մինչդեռ պատմական ոչ մի փաստ չկա, որ թույլ տա պնդելու վրացիների զանգվածային հայացման վարկածը: Միակ իրական փաստը Սանտաձե ընտանիքի դավանափոխությունն է, որ, հասկանալի է, չէր կարող վրիպել այս «հարցը» շահարկողների ուշադրությունից: Հայագետ—լեզվաբան Հրաչյա Սանտաձեն ժամանակին մեզ պատմել է, որ 30—ական թվականներին պրոֆ. Իլիա Աբուլաձեն «Հայ բարբառագիտություն» առարկայի քննություն ընդունելիս հետաքրքրվել է նրա ազգանվամբ և խոստովանել է, թե առաջին անգամ է հանդիպում, որ վրացին հայկական դավանանք է ընդունել: «Ես գիտեմ,— ասել է նա,— Վրաստանում հակառակը շատ հաճախ է եղել»:

Նույնքան անհիմն են նաև պնդումներն այն մասին, թե հայերը Վրաստանում յուրացնում են վրացական վանքեր ու եկեղեցիներ. անհեթեթություն: Այդպիսի զավթումներ անելու համար պետության հովանավորություն պիտի ունենաս, իսկ պետությունը Վրաստանում հայերինը չէ: 1700 տարիների ընթացքում հայ ժողովուրդը իր հայրենիքում կառուցել է 26000—ից ավելի աղոթատուն: Այդպիսի ժառանգության տեր մի ժողովուրդ ինչո՞ւ պիտի այչ ունենա օտար կառույցներին:

Թերևս կարելի է հարևանցի անդրադառնալ ևս երկու անհիմն հայտարարության: «Վրաստանի լինել—չլինելը» հողվածում ասված է. «Ամբողջ Մեսխեթ—Ջավախքը տարիներ շարունակ հայտարարված էր սահմանային գոտի. Վրաստանի ազգաբնակչությանը արգելված էր այնտեղ գնալ առանց անցաթղթի... և դա այն ժամանակ, երբ Հայաստանից հնարավոր էր այնտեղ մուտք գործել առանց անցաթղթի: Ի՞նչ

է սա, եթե ոչ հայ ազգաբնակչությանն արտոնություն տալ Մեսխեթ—Ջավախքը յուրացնելու»:

Քիչ թե շատ բարեխիղճ մարդը հեշտությամբ կարող է ստուգել և համոզվել, որ սա հերյուրանք է: Իհարկե, դա հրաշալի գիտե հողվածագիրը, բայց նրան այդ սուտը պետք է ինչ—որ հետին նպատակի, հարևան ժողովուրդների միջև ատելություն սերմանելու համար:

Յնարավոր է, ոչ միշտ է գիտակցված լինում սուտը: Հեղինակներին երբեմն վնասում է կարճ հիշողությունը: Վրաց—աբխազական դեպքերի առնչությամբ Սերո Խանգադյանին հղված բաց նամակի հեղինակին անհարմար վիճակի մեջ է դրել հենց այդ կարգի հիշողությունը. «...տարաբախտ վրացիներին պաշտպանում է բարյացակամ որոշ աբխազ կամ էստոնացի, բայց չկա մի դեպք, որ հայը օգնության ծեռք մեկնի վրացուն և եղբայրական կարեկցություն հայտնի»,— պնդում է նա և ընդամենը տասը տող ներքևում հերքում իր ասածը. «Երբեք չենք մոռանա նաև այն հայերին, ովքեր վրացիների հետ մարտնչում էին հանուն Վրաստանի տարածքային ամբողջության: Նրանցից ոմանք ընկան հերոսի մահով: Հավերժ փառք նրանց պայծառ հիշատակին»: Հարկ կա՞ մեկնաբանության: Ասենք միայն, որ աբխազական դեպքերին անգամ թեթևակի ծանոթ մարդիկ գիտեն, որ վրացական տանկերը առաջին հերթին հայերի տներն են ավերել:

Ինչևէ: Բոլոր հերյուրանքներին ու անճշտություններին անդրադառնալը անիմաստ զբաղմունք կլիներ: Միայն կրկնենք Գեորգի ճանտուրիայի խոսքը, որը քաղաքական մանր շահարկումով զբաղվող գրողներից մեկին խորհուրդ է տալիս. «Եթե զգում ենք, որ քաղաքագետներ չենք, ավելի լավ չէ՞ կրկին զբաղվենք հեքիաթներ գրելով»:

Ա. Ս.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրաչյա Բայրամյան. Երբ անտեսվում է հավերժության օրենքը . . . . .	3
Եջմարտությունը վերականգնելու համար . . . . .	17
Այն մասին, թե ինչպես Սայաթ-Նովան . . . . .	23
Պատմությունն անաչառություն է պահանջում . . . . .	27
Վրացիների էթնիկական պատմությունից . . . . .	43
Իվանե Ջավախիշվիլու արխիվից . . . . .	53
Հուշարձանն սպասում է իսկական տիրոջը . . . . .	63
Վրաստանի և Հայաստանի քաղաքական ու սոցիալական հարաբերությունները ըստ Մխիթար Գոշի «Պատաստանագրքի» . . . . .	69
Վրաց այբուբենի պատմությունից . . . . .	73
Ներքին Քարթլիի էթնոսը պատմական տեսանկյունից . . . . .	83
Վրաստանի լինել-չլինելը . . . . .	94
Թիվ 24 բանաձևի մասին . . . . .	97
Փոքրիկ բացատրություն . . . . .	104
Այսպես անաստվածորե՞ն . . . . .	106
Բաց նամակ ՀՀ գրողների միության նախագահին . . . . .	117
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1</b>	
Լևանը և Լևոնը . . . . .	125
Երևանյան իմ ողիսականը . . . . .	130
Երկրաշարժ . . . . .	137
Պատգամ մեծաց . . . . .	145
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2</b>	
Վազգեն Ա, Կաթողիկոս Ամենայն Հայոց. . . . .	149
Նորին սրբություն Ս.Տ. Իլիա Բ-ին . . . . .	149
Խմբագրի կողմից . . . . .	153

ՀԱՅ-ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆ, ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՐՑԵՐԸ ՎՐԱՑ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1988-1990)

Նյութերի ժողովածու

*Պր ա կ առ ա ջ ի ն*

*Վազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց  
Հրաչյա Բայրամյանը*

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ЛИТЕРАТУРНЫЕ,  
КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКИЕ ВОПРОСЫ  
В ГРУЗИНСКОЙ ПЕРИОДИКЕ (1988-1990)

Сборник материалов  
(на армянском языке)  
Выпуск первый

Составление, вступительная статья и перевод Рачия Байрамяна  
Издательство «Зангак-97», Ереван, 2001 г.

Հրատարակչության գլխավոր տնօրեն՝ Ս. Շ. Մկրտչյան  
Տնօրեն՝ Ս. Վ. Մնացականյան  
Նկարիչ և գեղարվեստական խմբագիր՝ Ա. Ա. Բաղդասարյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ն. Փարսադանյան  
Սրբագրիչ՝ Ս. Ս. Մելքունյան  
Համակարգչային ձևավորումը՝ Գ. Ա. Հարությունյան

Տպագրությունը՝ օֆսեր: Չափեր՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեր:  
Ծավալը՝ 10 տպ մամուլ, 6.89 հրատ. մամուլ, 9.3 պայմ. մամուլ:  
Տպաքանակը՝ 500 օրինակ: Գինը՝ պայմանագրային:



«Չանգակ-97» հրատարակչություն  
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ. 54-89-32, 54-05-17:  
E-mail: zangak@arminco.com  
Տպագրված է «Չանգակ-97» հրատարակչության տպարանում: